

2958

ԴԻԻԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Գ. ՀԱՏՈՐ

ՑՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՑ
ԹԱԻՐԻՋԻ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

ԿԱԶՄԵՑ՝

ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՄԻՐՃԵԱՆ
ՄԻԱԲԱՆ ԿԻԼԻԿԵԱՆ Ս. ԱԹՈՌԻՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
ԱՆԹԻԼԻԱՍ — ԼԻԲԱՆԱՆ

1 9 7 7

016

S-31

010.

016
5-31

ԴԻԻԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, Գ. ՀԱՏՈՐ :

ՅՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՅ
ԹԱԻՐԻՋԻ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

ԿԱԶՄԵՑ՝

ՎԱՐԴԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՄԻՐՃԵԱՆ
ՄԻԱԲԱՆ ԿԻԼԻԿԵԱՆ Ս. ԱԹՈՌԻՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
ԱՆԹԻԼԻԱՍ — ԼԻՐԱՆԱՆ

1 9 7 7



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ատրպատականի հայերէն ձեռագիրները, ի շարս այլ շրջաններու ձեռագիրներուն, ուսումնասիրութեան նիւթ եղած էին կարգ մը ձեռագրագէտներու եւ հայ բանասիրութեան ծանօթացուած թէ՛ յոյժանքներով եւ թէ՛ առանձին Զեռագրաց Յուցակով: Սակայն, տարիներու ընթացքին սոյն ձեռագիրները մեծ մասամբ Ս. Էջմիածին եւ այլուր փոխադրուած ըլլալով, 1968-ին Թաւրիզի Ազգային Առաջնորդարանին մէջ ի պահ կը մնային միայն 16 հին եւ նորագիտ ձեռագիրներ, որոնք պարսկերէն 144 ձեռագիրներու հետ կը փոխադրուէին Թաւրիզի Մելիք-Թանգեան Ազգային-Եկեղեցական Քանգարանը:

Ատրպատականի մէջ մեր Առաջնորդական պաշտօնավարութեան ընթացքին (1963—1969) ձեռնարկեցինք սոյն Յուցակի կազմութեան, նախկիններէն աւելի՝ մանրամասն տեղեկութիւններով, յարմար առիթով յոյս ընծայելու համար գայն Ս. Աթոռոյս տպարանէն: Գուցեաւորութեան ընթացքին իբրեւ ուղեցոյց ունեցած ենք հայագիտական բեզուն գործունէութեամբ ծանօթ Ս. Աթոռոյս գոյգ Հայրապետներու՝ Հոգեւոյս Տ. Բարգէն Կիլիկեանի (1868—1936) եւ Հոգեւոյս Տ. Գարեգին Յովսէփեանի (1867—1952) պատրաստած Զեռագրաց Յուցակները, օգտուելով անոնց ցուցակագրելու գիտական մեթոտներէն:

Ուրախ ենք հայ ընթերցող հասարակութեան յայտնելու, որ շնորհիւ Ս. Աթոռոյս երախտարժան Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսին ֆաջալերութեանց, պատեհութիւնը կ'ունենանք սոյն Յուցակը ի յոյս ընծայել, ի վայելումն բանասիրաց, այս առթիւ գործիս Ա. բաժինին մէջ գետեղելով Ատրպատականի ձեռագիրներու մասին պատմական ծանօթութեանց հայոց ուսումնասիրութիւն մը եւ Յուցակիս վերջաւորութեան աւելցնելով Ատրպատականի Հայոց վանքերու եւ եկեղեցիներու մանրակրկիտ ցուցակը, գոր նա-

խապէս լոյս ընծայած էինք «Հասկ» ամսագրին մէջ¹, մատնանշելու համար գլխազրուիքեան հոգեւոր ա՛յն կեդրոնները պատմական այս թեմին մէջ. ուր հայ գրիչներ, ծաղկազներ եւ կազմողներ օրն ի բուն աշխատելով եւ ստեղծագործելով Հայ Մշակոյթին կտակեցին գնահատելի ծառայութիւններ: Յուցակիս կցած ենք նաեւ Անճհանուններու եւ Տեղանուններու ցանկերը:

Այս առթիւ մեր շնորհակալութիւնները կը յայտնենք Ս. Արո-
ռոյս Վեհափառ Հայրապետին, որուն ջանքերուն շնորհիւ կարելի ե-
ղաւ լոյս ընծայել սոյն աշխատասիրութիւնը:

ՀԵՂԻՆԱԿԸ

10 Մայիս 1977,

ԱՆԹԻԼԻԻԱՍ

¹ ՀԱՍԿ, 1967, Ապրիլ—Մայիս, էջ 193—196: Տե՛ս նաեւ մեր «Դիւան Ատրպա-
տականի Հայոց Պատմութեան», Թ. Հատոր, 1974, Պէյրութ, էջ 68—73:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ¹

Աստանդական հայ ժողովուրդի ճակատագրին ենթարկուած են նաեւ հայերէն բազմադարեան ձեռագիրները, որոնցմէ ստուար խումբ մը կայք հաստատուած էր նաեւ Թաւրիզի եւ Ատրպատականի հայաբնակ այլ քաղաքներուն մէջ:

1804 թուականին, երբ պարսկական բանակը կը վերադարձէ Ս. էջմիածինը եւ Մայր Աթոռի հարուստ ձեռագրատունը Թալանի կ'ենթարկուի, բազմազար ձեռագիրներ Թաւրիզի շուկաներուն մէջ ծախու կը հանուին: Թաւրիզահայ մտաւորականներ քաջայերուծեամբ եւ նախաձեռնութեամբ Ս. Թաղէի վանքի վանահայր եւ Ատրպատականի Ժրաջան Առաջնորդ Տ. Գէորգ վարդապետին եւ իրեն յաջորդող Առաքել վարդապետին եւ Սիմէոն Արքեպս. Բղնունիին, 1804—1810 թուականներուն կը ղնեն գերեզմարուած շուրջ 300 ձեռագիրները եւ կը վերադարձնեն Ս. էջմիածնի Հոգեւոր Իշխանութեան, որ զԺրախտարար պառակտուած էր Դաւիթ-Դանիէլեան կաթողիկոսական ծանօթ պայքարին պատճառով:

Ս. Թաղէի վանքին եւ Թաւրիզի մէջ հայերէն ձեռագիրներու հաւաքողական աշխատանքները կը շարունակուին Թեմի Առաջնորդներուն կողմէ: Արդարեւ Տ. Իսրայէլ Եպիսկոպոս Կ. Պոլսեցին, որ զիտնական հոգեւորականի համբաւ չաճած էր, մինչեւ իր վախճանումը՝ 1835, կը հաւաքէ ու կը ղնէ հայերէն ձեռագիրներ: Տ. Բարսեղ Եպիսկ. Կեսարացին՝ 1821—1828, Տ. Նիկողայոս Եպիսկ. Կարբեցին՝ 1833—1850, որուն հիմնարկած Թաւրիզի Առաջնորդարանի շէնքին մէջ կը փոխադրուին ձեռագիրները՝ 1834—էն սկսեալ, Տ. Սահակ Եպիսկ. Սաթունեան Աշտարակեցի՝ 1851—1857, որ կը հանդիսանայ հիմնադիրը Թաւրիզի Հայոց Արամեան Դպրոցին, Տ. Յակոբ Ծ. վարդ. Շահրազեան՝ 1857—1859, Տ. Արէլ Արքեպս. Մխիթարեան՝ 1860—1861, գրադէտ եւ բեմասաց Առաջնորդը եւ Տ. Գէորգ Արքեպս. վեհապետեան՝ 1861—1868 Մայիս, կը շարունակեն զուրգուրանքով եւ

¹ Սոյն խորագրով տեղի հալիքն յօդուած մը յայտ ընծայած ենք ՀԱՍԿԻ մէջ. 1968. Յունիս—Յուլիս, էջ 227—228, որուն միացուցած ենք նաեւ Թաւրիզի ներկայ ձեռագիրներու ցուցակին ամփոփումը, անդ, էջ 229—232: Սոյն յօդուածը վերահրատարակուած է մեր Դիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան Գրքին Թ. Հատորին մէջ. 1974, Պէյրուս, էջ 68—73:

րծախնդրութեամբ բազմացնել քանակը հայերէն ձեռագիրներու, անշուշտ զանոնք մաս առ մաս Ս. Էջմիածին ղրկելու եւ ուսումնասիր միտարաններուն տրամադրելու ցանկութեամբ:

Ատրպատականի երկրորդ մեծ Մենաստանին* Մաղարդայ Ս. Ստեփաննոս Նախավկայի Վանքին ձեռագիրներէն մաս մը, Յովհաննէս Վարդապետ Շահաթունեանցի Եռանդուն ջանքերուն շնորհիւ եւ ձեռամբ Տ. Մակար Վարդ. Տէր Պետրոսեանին, 1848-ին Էջմիածին կր փոխադրուին, որոնք կը հաշուէին 25 ձեռագիր եւ 98 տպագիր մատեններ:

Ս. Էջմիածնի Գէորգ Դ. Քէրէստէճեան Կաթողիկոսը (1866—1882)՝ Ատրպատականի Հայոց օրուայ Առաջնորդ Տ. Գրիգորիս Արքեպս. Յովրեանին (1869 Յուլիս—1874 Մարտ) յղած իր 10 Դեկտ. 1868 թուակիր եւ 535 թուահամար Կոնդակով, կը հրահանգէ հաւաքել եւ ի մի խմբել Թեմի բոլոր ձեռագիրները եւ ղրկել Ս. Էջմիածին: Թաւրիզի մէջ Նոյն բովանդակութեամբ կոնդակներ եւ պաշտօնագիրեր ստացուած են նաեւ Մակար Ա. Տէր Պետրոսեան՝ 1885—1891, Մկրտիչ Խրիմեան Հայրիկ՝ 1892—1907, Մատթէոս Բ. Իզմիրլեան՝ 1908—1910, Գէորգ Ե. Սուրէնեան՝ 1911—1930, Խորէն Ա. Մուրադէղեան՝ 1932—1938 եւ Գէորգ Զ. Զօրէքճեան՝ 1945—1954 կաթողիկոսներու կողմէ:

1868—1918 թուականներուն, Էջմիածնայ ԳեՌԳԵԱՆ Յուշակին մէջ նկարագրուած ձեռագիրներէն 4 հատը Ս. Թադէի եւ Ս. Ստեփաննոսի վանքերէն փոխադրուած ձեռագիրներ են: 1911-ին Ս. Թադէի Վանքի 78 ձեռագիրները եւ Թաւրիզէն, Խոյէն, Սալմաստէն եւ Մուժումբար հայաբնակ գիւղէն հաւաքուած 145 ձեռագիրները եւ երեք հնատիպ գիրքերը, Ատրպատականի Հայոց բաղմարդին Առաջնորդ՝ Տ. Կարապետ Եպիսկ. Տէր Մկրտիչեանի (1906—1912) ջանքերով Էջմիածին կը փոխադրուին: Նոյն թուականի Նոյեմբեր 21-ին, Տ. Կարապետ Եպիսկոպոս անձամբ Մայր Աթոռ կր փոխադրէ Ղարաղաղի կամ Փայտակարանի հայաբնակ գիւղերէն հաւաքուած 12 ձեռագիրներ եւս:

Համաձայն հայագէտ Հրաչեայ Աճառեանին, Թաւրիզի հայերէն ձեռագիրներուն վրայ «առաջին անգամ ուշ դարձնողն եղած է հանդուցեալ Սարգիս Հայկունի, որ իր ԲԱԳՐԵԻԱՆԻ աշխատութեան մէջ՝ րուական ընդարձակ կերպով կը խօսի 14 հայ ձեռագիրներու վրայ»²:

² ԲԱԳՐԵԻԱՆԻ, Սարգիս Հայկունի, Տպ. Էջմիածին. 1894, էջ 369—384:

³ Հրաչեայ Աճառեան, ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ ԹԱՒՐԻԶԻ, Վիեճեա, 1910, Մխիթարեան Տպարան, էջ ԻԳ.

Հրաշեայ Աճառեան դժբախտարար դանց ըրած է անուանց յիշատակութիւնը Դէորդ Վարդապետի, Սիմէն Արքեպս. Թղնունիի, Յովհաննէս Վրդ. Շահխաթունեանցի, Մակար Վարդ. Տէր Պետրոսեանի, Գրիգոր Արքեպս. Յովրեանի եւ այլոց, որոնք անշուշտ այս կամ այն ձևով հետաքրքրուած եւ ուսումնասիրած են սոյն ձեռագիրները, սակայն գրաւոր յիշատակութիւն չեն թողած յաջորդ սերունդներուն: Հետեւաբար Սարգիս Հայկունին իրրեւ Թաւրիզի հայերէն ձեռագիրներով զբաղող մասնագէտ, առաջինը չէր կրնար ըլլալ, այլ վեցերորդը:

Թաւրիզի հայերէն ձեռագիրներով զբաղող եօթներորդ եւ ութերորդ հայապէսները կը նկատենք Ս. Էջմիածնի միաբան Տ. Խաչիկ Վարդ. Դաղեանը եւ Իրանահայ մտաւորական եւ հասարակական գործիչ Յովսէփ Յովհաննիսեանը, ծանօթ Յ. Էլմար գրական ծածկանունով: Խաչիկ Վարդապետի ժողովածուներուն Յուլցակը հրատարակեց Յակոբ Թոփեան: Այս աշխատութեան Բ. մասին մէջ՝ էջ 49ր—51ր, թիւ 33—73 համարներուն ներքեւ ի մէջ կը բերուի Թաւրիզի գտնուող 43 հայերէն ձեռագիրներու պարզ ցանկ մը⁴:

Յ. Յովհաննիսեան (1881—1975) մեզի տրամադրած իր Յուլցերուն մէջ, զոր իր կենսագրութեամբ հանդերձ հրատարակութեան տուինք Հասկ ամսագրի 1975, Մայիս—Յունիս միացեալ համարէն սկսեալ (էջ 213—219), հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ այս աշխատանքի մասին, զոր պարտք կը զգամ մէջ ընել: Ան Թաւրիզի Արամեան Դպրոցի շրջորդ դասարանը 1896-ին աւարտելէ ետք, նոյն դպրոցի ուսուցիչ եւ ճեմարանական Վահան Բժշկեանի յանձնարարութեամբ պաշտօնի կը կոչուի Արամեան գրադարան—ընթերցարանի մէջ, գրադարանապետի պաշտօնով եւ ամսական երկու թուման սոճիկով, պաշտօն՝ զոր կը վարէ մինչեւ 1910 թուականը: Արամեան գրադարանը կը գտնուէր Թաւրիզի հին Առաջնորդարանի, Ղալա թաղամաս, երկրորդ յարկը:

Այժմ Յ. Յովհաննիսեանն է պատմողը:

«Աշակերտ օրերիս ուսուցիչներիցս մէկի պատուէրով երկու անգամ եղել եմ այդ գրադարան—ընթերցարանում եւ հիացած եմ մնացել: Ուժեղ տպաւորութիւն են գործել ինձ վրայ, սրահի մէջտեղում դըրուած կահույք մահուովով ծածկած սեղանի վրայ լցուած թերթերը եւ երեք պատերի մօտ բարձրացող պեղեցիկ պահարաններում կարգով շարուած գրքերի շարքերը...: Շէնքը խախտու լինելով երկրորդ յար-

⁴ ՅՈՒՅԱԿ ԺՈՂՈՎԱԾՈՒԱՅ ԴԱԴԵԱՆ ԽԱՅԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ, Վազարշապատ, 1900:

կը ստիպուած եղան քանդելու: Թէեւ մանկահասակ՝ խորապէս ավստասացի եւ դաւեյի «յեղեցիկ այդ սրահի» քանդուելու համար: Ժիշդ է տարիներ յետոյ եւ հասայ իմ փափաքին եւ իրրեւ զրադարանապետ իմ տրամադրութեան տակ դտայ այդ ամբողջ շէնքերն ու թերթերը, բայց ամփոփուած Առաջնորդարանի բանտի երկու սենեակներում, ոչ նախկին փայլն ու զեղեցկութիւնն ունէին եւ ոչ էլ խանդավառել կարող էին: Այստեղ դիրք, ձեռագիր, թերթ ու ամսագիր իրար վրայ լցուած՝ ամիսներ շարքի տակ էր պէտք այդ խառնափնթոր հաւաքածուն դաստիարակու համար: Թանկապին դրփերի ու հետաքրքրական թերթերի ընթերցանութիւնը հաճելի էր դարձնում այդ աշխատանքը ինձ համար:

«Շուտով այդ աշխատանքի վրայ աւելանում էր նաեւ անակոնկալ մի նորը, որ թէեւ այնքան էլ հաճելի չէր, բայց պարտադրական էր: Այդ օրերին՝⁵ Թաւրիկ էր եկել Խաչիկ Վարդապետ Դադեանը: Ապրում էր Առաջնորդարանում եւ յաճախ գրադարան էր զալիս եւ մեծ մասամբ ձեռագրերով հետաքրքրւում: Մի օր էլ Թեմակալ Առաջնորդը՝⁶ անունը չեմ յիշում, ինձ վերեւ է հրաւիրում եւ յանձնարարում, որ Խաչիկ Վարդապետի առաջարկն ընդունեմ եւ կատարեմ: Վերջինս առաջարկում է կազմել զրադարանում եղած բոլոր ձեռագրերի ցուցակը: Տալիս է ցուցակի նմոյշ թերթիկը եւ իր կողմից էլ յանձնարարում, որ շտապեմ, որովհետեւ ինքր երկար մնայ չի կարող: Ես էլ գործի անցնելով, շուտով կազմում եմ մօտ յիսուն ձեռագրերի ցուցակը եւ յանձնում իրեն: Այդ ձեռագրերը կարծեմ հետագայում ուղարկուել են Էջմիածին»⁷:

Խաչիկ Վարդապետին Ատրպատական դործուղման մասին հետաքրքրական կոնդակ մը կայ այժմ Թաւրիկի Ազգային Առաջնորդարանին մէջ: Համաձայն այս կոնդակին, Խրիմեան Հայրիկ իր 9 Դեկտեմբեր 1894 թուականի եւ 2111 թուահամար Հայրապետական զրութեամբ, Ատրպատականի Հայոց Առաջնորդ՝ Տ. Սուքիաս Արքեպս. Պարպանցին կը գրէ ի միջի այլոց.

«... Բանք Մեր առաւելապէս զբարոյական եւ զազգային կըրթութենէ են, ուստի առ այդ նպատակ, որպէս սեպուհ պարտականութիւն հայրապետականս պաշտաման ծանու, այսու կոնդակաւս ա-

⁵ Այսիմք 1900-էն առաջ:

⁶ Խաչիկ Վարդապետի ցուցակը կազմուած է Սուքիաս Արքեպս. Պարպանցի (1894 Յունուար—1895 Դեկտեմբեր) եւ Յովսէփ Վրդ. Սարգսեանի (ապա Արքեպս. 1896 Յունիս—1898) պաշտօնավարութեան ընթացքին:

⁷ ՀԱՍԿ, Յիշգրութիւններ Ստեփանոս Եպիսկ. Մխիթարեանի եւ ճրա Ժամանակակից վաստակաւոր Գործիչների մասին՝, Թ. Էյմար, 1975, Յուլիս—Օգոստոս, էջ 287:

առաքմբ առ Ձեզ զԵրկուս Վարդապետս՝ Յովսէփ եւ Խաչիկ, բարեկիրթս, ուսեալս եւ պիտանիս... Իսկ զՎարդապետն Խաչիկ առաքեցաք յայն նպատակ, զի նա զնացեալ, որպէս քննիչ՝ ի Մերս կողմանէ՝ ի մեհաստանն առաքելոյն Թաղէոսի, կազմեցէ զընդարձակագոյն տեղեկագիր ինչ առ ՚ի մատուցունել Մեզ վասն կարեւորն կարգադրութեան։ Սատար լերուք սմա եւս առ ՚ի ներկայանալ Թեմուր Խանին, որ ուղղեալ էր յանուն Մեր գրութիւն ինչ, յորում նկարագրէր զկապուտ կողոպուտն վանուցն առաքելոյն Թաղէոսի։ Սակայն որպէս հասու եղաք ի գրութենէ Ձերմէ, հանդերձ օրինակաւ նամակի վանահօրն յիշեալ վանուցն, որ ի 27-էն Նոյեմբերի 1894 ամի համարաւն 713, չէ ստոյգ եւ ճշմարիտ այն նկարագրութիւն Թեմուր Խանին»⁸։

Արամեան զրադարան-ընթերցարանի Գրադարանապետ Յովսէփ Յովհաննիսեան ոչ միայն օգտակար հանդիսացած է Խաչիկ Վարդապետին, այլ նաեւ Հրաչեայ Աճառեանին, երբ այս վերջինս 1905—1906 թուականներուն, Թաւրիզի Արամեան Գրողի իր ուսուցչական պաշտօնին աւրնթէր կը պատրաստէ Յուցակը հայերէն ձեռագիրներուն։ Աճառեան այս մասին կը յայտնէ հետեւեալը.

«Գրադարանապետ Պր. Յովսէփ Յովհաննիսեան ամենայն պատրաստակամութեամբ իմ տրամադրութեանս տակ դրաւ Ձեռագիրներու ամբողջ հաւաքածոյքը, որ ո՛չ Թուսպուրիւս եւ ոչ ալ որ եւ իցէ տումարի մէջ արձանագրուած էր»։

«Ձերմապէս շնորհակալ եմ իրեն»⁹։

Թաւրիզի ձեռագիրներու գրադոց իններորդ հայազէտը հանդիսացած է Սենեքերիմ Տէր Յակոբեանը, «ուսուցիչ, այժմ ուսանող Գերմանիոյ մէջ, որ աչքէ անցուցած է Թաւրիզի ձեռագիրներէն շատերը, սմանց իջահամարները գրած, իսկ իր աշխատութեան արդիւնքը հրատարակած չէ»¹⁰։

Սենեքերիմ Տէր Յակոբեանի մասին հետաքրքրական վկայութիւն մը ունի Ամերիկահայ ձեռագրադէտ եւ ուսումնասիրող Պրն. Յարութիւն Քիրտեան, որ ինծի յղած իր 13 Նոյեմբեր 1968 թուակիր ուսումնասիրութեան մէջ, հետեւեալը կը գրէ.—

«1931-ին... Սենեքերիմ Տէր Յակոբեանն էր Էմիլիանայ ձեռագրատան տնօրէնը։ Ուրբան որ կը յիշեմ երկու երիտասարդներ եւ օրիորդ մը կը պաշտօնավարէին Սենեքերիմի տնօրէնութեան տակ։ Երիտասարդներէն մին յետոյ վաստակաւոր, մեծարժէք, իսկական գիտնական Կարո Ղաֆաղարեանն եղաւ։

⁸ Դիւան Ատրպատեկանի..., Բ. հատոր, էջ 115։

⁹ Հրաչեայ Աճառեան. ՅՈՒՅԱԿ ՀԱՅ. ՁԵՄ. ԹԱԽՐԻԶԻ, էջ ԻԳ.—ԻԳ.։

¹⁰ Նոյն, էջ ԻԳ.։

ներն ալ Առաջնորդարանին նուիրելով՝ զըջադիրներուն թիւը բարձրացած էր 19-ի :

Արամեան զպրօցի ձեռագիրներէն զատ, ձեռագիրներ կը զբտնուէին նաեւ Թաւրիզի Լիւաւ հայարնակ Թաղամասի Հայկազեան զպրօցի գրադարանին մէջ : Պատասխանատուները նախ կը յայտնեն թէ ձեռագիրներու զոյուլթեան ծանօթ չեն, սակայն Հրաչեայ Աճառեան պրօտէրով զբաղարանին անկիւնը նետուած չին պահարանի մը մէջ կը գտնէ անպէտք համարուած զանազան թուղթեր, որոնց մէջ երեւան կը հանուին երեք ձեռագիրներ, որոնք թուագրուելով եւ ցուցակադրուելով կը յանձնուին զբաղարանապետին, յայտնելով թէ «ասոնք շատ աւելի արժէքատու բաներ են քան իւրմը մը տպագրեալ զրօր, որ այնպէս պատուով կը պահէին դարակներուն մէջ, եւ խնդրեցի որ անոնց չարքը դասեն» : Այս ձեռագիրներէն երկուքը Տաղարաններ ըլլալով, անոնց բովանդակութիւնը ամբողջութեամբ ընդօրինակուած է Հրաչեայ Աճառեանի կողմէ, ինչպէս արտագրուած են «առհասարակ Թաւրիզ գտնուած բոլոր տաղերն ու զանձերն՝ առանց բացատրութեան» :

Հայկազեան Գրադարանին կից կը գտնուի Ս. Սարգիս Եկեղեցին, ուր կը պահուէին վեց ձեռագիրներ եւ որոնք ծխատէր քահանային բարեհաճ թողտուութեամբ եւ քաջալերութեամբ կը տրամադրուին Հրաչեայ Աճառեանին՝ թուագրուելու եւ ցուցակադրուելու համար : Իսկ Ղալալի Ս. Աստուածածին առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ կը պահուէին 2 ձեռագիրներ, որոնք եւս ցուցակադրուած են :

Բացի վերոյիշեալ Ազգային Հաստատութիւններէն, Թաւրիզի մէջ մասնաւոր անձերու մօտ ի պահ կը մնային 75 ձեռագիրներ, որոնք սեփականութիւնն էին 32 անհատներու : Հրաչեայ Աճառեան իր ներածականին մէջ կը յիշէ անունները այս անհատներուն եւ անոնց մօտ գտնուող ձեռագիրներուն, որոնք իրեն կը տրամադրուին վասն ուսումնասիրութեան՝ «չնորձիւ Թաւրիզի մէջ ունեցած ընդարձակ ծանօթութեանս, չնորձիւ բաղմաթիւ բարեկամներուս, ընկերներուս եւ աշակերտներուս» : Երկու ստորուան մէջ կ'աւարտէ այս յոյժ կարեւոր եւ դնահատելի աշխատանքը :

Բացի վերոյիշեալ ձեռագիրներէն, Թաւրիզի մէջ կը գտնուէին անշուշտ այլ ձեռագիրներ ալ, որոնց սեփականատէրերը ինչ-ինչ նախապաշարումներէ զրդուած չէին յօժարած իրենց զըջադիրները տրամադրել Հրաչեայ Աճառեանին : Թաւրիզի մէջ ցուցակադրուած բոլոր ձեռագիրներուն թիւը՝ 156 է, որոնց մասին յօդուածաչաբքերու տպագրութեան կը ձեռնարկէ մեծ հայագէտը Վիեննայի ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵՒԱՅԻ մէջ, սկսեալ 1905 թուականի էջ 201-էն եւ Ցուցակադրութեան

Հրատարակութիւնը վերջ կը դնէ նոյն Հանդէսի 1909-ի էջ 185-ին մէջ:

Միւթարեան Միտարնութիւնը դուրսի նախանձախնդրութեամբ մը սոյն յօդուածաշարքը առանձինն կը Հրատարակէ 1910-ին, բովանդակութեան մասին ղերմաներէն ամփոփ տեղեկութիւններով: Յուցակը կը բովանդակէ հետեւեալ մասերը.

Ա.— Յուցակ Ձեռագրաց Մատենադարանին Ղալայի կամ Բերդաթաղի. թիւ 1—51, էջ 1—43:

Բ.— Յուցակ Ձեռագրաց Առաջնորդարանին Թաւրիղի. թիւ 1—19, էջ 44—60:

Դ.— Յուցակ Ձեռագրաց Գրադարանին Լիլաւա թաղի. թիւ 1—3, էջ 61—63:

Դ.— Յուցակ Ձեռագրաց Ս. Սարգիս եկեղեցւոյն Լիլաւա թաղի. թիւ 1—6, էջ 64—69:

Ե.— Յուցակ Ձեռագրաց Ս. Աստուածածին եկեղեցւոյն Ղալայի կամ Բերդաթաղի. թիւ 1—2, էջ 70—76:

Զ.— Յուցակ Ձեռագրաց մասնաւոր Անձանց. թիւ 1—75, էջ 77—138:

Ըստ նիւթի սոյն 156 ձեռագիրներէն 103 հասրը ունէին Կրօնական ըրմանդակութիւն, 16-ը՝ Գրական-Բանաստեղծական, 5-ը՝ Պատմական, 6-ը՝ Փիլիսոփայական, 21-ը՝ Գիտական, 2-ը՝ Լեզուաբանական, 1-ը՝ Առականը եւ 11-ը՝ Այլեւայլ:

Ծանօթ ձեռագիրներուն մէջ թուականով ամենահինն էր Ա. 41 խաղտետրը, որ դրուած է Զնթ. (1200) թուականին, Եկեղեցեաց զուլառի Ս. Գէորգ զիւղը: Միւսները՝ ըստ ժամանակագրութեան կը բաժնուէին հետեւեալ ձեւով.

ԺԳ. դարէն՝ 2 ձեռագիր, ԺԴ. դարէն՝ 7, ԺԵ. դարէն՝ 16, ԺԶ. դարէն՝ 5, ԺԷ. դարէն՝ 28, ԺԸ. դարէն՝ 12, ԺԹ. դարէն՝ 24: Մնացեալ 61 ձեռագիրներուն թուականը անձանօթ էր, բայց ընդհանրապէս հին ձեռագիրներ չէին եւ անոնցմէ շատեր կը պատկանէին ԺԷ. ԺԸ. դարերուն: Աւետարաններուն մէջ կային աշուղիներ, որոնք աւելի հին ժամանակներէ կը թուէին ըլլալ, յատկապէս շատ հին էր թիւ Ա. 41 մաղաղաթեայ երկաթագիր Աւետարանը, որ ըստ Հրաչեայ Աճառեանի, Թաւրիղի Հաւաքածոյին ամենէն հին ձեռագիրն ըլլալու էր:

Հրաչեայ Աճառեան կը համեմատէ նաեւ Հայկունիի եւ խաչիկ Վարդապետի Յուցակները իր պատրաստածին հետ եւ երեւան կը հանէ կարգ մը յաւելուածական տեղեկութիւններ, հետաքրքրական մանրամասնութիւններով:

Հրաչեայ Աճառեանի ուսումնասիրած վերոյիշեալ 156 ձեռագիրներէն միայն Լըբըր այժմ ի պահ կը մնան Թաւրիզի Մելիք-Թանգեան թանգարանին մէջ, որոնք են. —

1. — Մեր թիւ 1 ձեռագիրը, Աւետարան, Գրիչ* Ծեր քաճանայ, Գծող Էւ նկարող* Թորոս Սարկաւազ, Ստացողներ* Խոճա Միրազ, Պրն. Աղբուղ, Խոթթլու* 1324-ին, Կազմող* Յուսէփ Արեղայ* 1448-ին, Ժամանակ* 1311, Վայր* Վան կամ Աղթամար* :

Ձեռագիրս նախ ուսումնասիրած է Խաչիկ Վարդապետ, 33 Համարի ներքեւ եւ Հրաչեայ Աճառեան* Ե. 1 Համարի ներքեւ (էջ 70—74) : Երկուքն այ, ինչպէս նաեւ յաջորդ երկու ձեռագիրներու ցուցակագրութիւններն Լւս յոյս ընծայուած են Դադեան Վարդապետի եւ Հրաչեայ Աճառեանի հրատարակեալ Ցուցակներուն մէջ, իբրեւ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ ձեռագիր :

2. — Մեր թիւ 5 ձեռագիրը, Աւետարան, Տեղի* անյայտ, Գրիչ* Թորոս քաճանայ, Ստացող* Վարդան ծերունի քաճանայ : Ձեռագիրս սեփականութիւնն էր Թաւրիզի Հայոց Թեմական Կենտրոնական Դպրոցին, ասպա փոխադրուած է Ղայայի Մատենադարանը : Յաջորդաբար ցուցակադրուած է Խաչիկ Վարդապետ Դադեանի Էւ փրոֆ. Հրաչեայ Աճառեանի կողմէ, թիւ 41 եւ 32 Համարներու ներքեւ : Թուական* 1280—1320 :

3. — Մեր թիւ 6 ձեռագիրը, Համառօտ Ժամանակագրութիւն Միտայի Ասորիի : Տեղի* Պայազէդ*, Գրիչ* Անյայտ. Ստացողներ* Պետրոս Արեղայ եւ Խոյեցի Ղասում, Ժամանակ* 1639-էն առաջ : Ձեռագիրս ուսումնասիրած են Խաչիկ Վարդապետ* թիւ 64 Համարին ներքեւ եւ Հրաչեայ Աճառեան* թիւ Ա. 18—19 Համարին ներքեւ : Ձեռագիրս մաս կազմած է Արամեան Գրչատան կամ Ղայայի Մատենադարանին, ասպա Թաւրիզի Թեմական Կենտրոնական Դպրոցին :

Հետագային պիտի տեսնենք թէ Թաւրիզի ձեռագիրները ինչպէ՞ս փոխադրուեցան ալլուր, վաճառուելով կամ նուիրաբերուելով եւ այժմ մաս մը կազմեն զանազան Ձեռագրատոմսերու Հաւաքածոներուն :

Գ. Վ. Արդարեան կը յայտնէ, որ «1915 թ. Մատենադարան (Իմա* Ս. Էջմիածնի) են մտնում Վասպուրականից բերուած (Իմ, Կտուց, Աղթամար, Վարազ, Վան եւ այլն) ինչպէս նաեւ Թաւրիզից ստացուած 1628 ձեռագիր» : Բայց զժրախտաբար չի նշեր միայն Թաւրիզէն Ս. Էջմիածին փոխադրուած ձեռագիրներուն թիւը, որ մեր կարծիքով 564 զրչագիրներու պատկառելի Հաւաքածոյ մըն էր (տե՛ս ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, Երեւան, 1962, էջ 12) :

Հրաչեայ Աճառեանի լետ մահու հրատարակեալ ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԻՅ հատորին մէջ*, Թաւրիղի մէջ զրական իր գործունէութեան մասին կ'արժէ հոս արձանագրել իր իսկ վկայութիւնը Զեռագրաց Յուցակի կազմութեան մասին:

«Բնականաբար Արմատական բառարանս ճոխացնել չէի կարող Թաւրիղում, ուր համապատասխան միջոցներ չկային: Ես ձեռնարկեցի կազմել Թաւրիղի ձեռագրաց Յուցակը: Այս գծով իմ առաջին աշխատանքը եղել է Կարնոյ ձեռագրաց ցուցակը, որ կազմել էի Սանասարեան վարժարանում: Այժմ աւելի փորձուած էի: Ղալայի դպրոցի գրադարանը ունէր 51 ձեռագիր, իսկ Առաջնորդարանը ունէր 19 ձեռագիր, որոնց վրայ աւելացնելով Լիլաւայի եւ մասնաւոր անձանց ձեռագրերը, ստացուեց մի հատոր, որ հրատարակեցի Վիեննայում 1910 թուականին: Այս ձեռագրերի մէջ առանձին յիշատակութեան արժանի են երկուսը: Առաջինն էր «Տաղարան Առաքել Բաղիշեցոյ», զորում Ժն. դարից յետոյ, որ պատկանում էր կառապան Յարութիւն Աստաֆեանին եւ նրա որդի Գարեգին Աստաֆեանին: Այս երկուսը տրապիզոնցի էին, ուսումնասէր եւ ազգասէր մարդիկ: Զեռագրերը սրանցելի էր պարունակում էր Առաքել Բաղիշեցու բոլոր գործերը՝ զորում սքանչելի գեղեցկութեամբ: Յարութիւն Աստաֆեանը խնդրեց ինձնից այն բժշկական զիւրքը, որ յիշել եմ վերելը (էջ 296), եւ ես նուիրեցի նրան: Ես էլ արտագրեցի շատ մեծ ուղագրութեամբ Բաղիշեցու Տաղարանը եւ պահեցի ինձ մօտ: Հետագայում Աստաֆեանները զնացին Տրապիզոն, անշուշտ իրենց հետ տանելով ձեռագիրը: Եթէ այսպէս է, Տրապիզոնի մեծ կոտորածին իրենք էլ եւ այն ձեռագիրն էլ ոչնչացան: Ես յետոյ արտագրած ձեռագիրս յանձնեցի Հ. Ներսէս Ակինեանին, ուրիշ ձեռագրերի հետ եւ այժմ գտնուում է Վիեննայի Մխիթարեանց վանքում:

«Երկրորդ ձեռագիրն է Սմբատ Գ. Թաղաւորի անասնաբուժութիւնը, որի մասին կը խօսենք յետոյ:

«... Էջմիածնում արտագրել էի հոյակապ Տաղարանը, որի վրայ աւելացան Թաւրիղում գտած տաղերս եւ ամբողջ Գանձարանը, որ արտագրեց կինս»:

Հրաչեայ Աճառեան Թաւրիղէն Կովկաս մեկնելու օրն իսկ, վերջին պահուն, ղերձակ Շիրմազանի տան մէջ գտնուող Սմբատ Գ. Թաղաւորի Արքայական Մատենադարանի զիրքերէն «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ զրաստնոյ» անուն անասնաբուժական բովանդակու-

* Տես՝ Հրաչեայ Աճառեան, ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԻՅ, երատ. Երեւանի Պետական Համալսարանի, իմպր. Պրոֆ. Էդ. Աղայեան, 1967, Երեւան, էջ 298—300:

Թեամբ ձեռագիրը, 1295—1298 թուականներին, ցուցակագրած էր։ Այս առթիւ կը զրէ։ «Ձէի կարող մի քանի բողոքում (զրի առնել), երբ կառապանը սպասում էր, արձանագրել ինչ որ կարեւոր էր այդ ձեռագրից։ Այնուամենայնիւ ես քաղեցի այնքան նիւթ, որ դրաւեց Հանդէս Ամսօրեայի մի տպագրեալ էջը»։

1920-ին, Համաձայն մեծ մտաւորական Նիկոլ Աղբալեանի վկայութեան, «Հազարաւոր ձեռագիրներ փճացան վերջին 1915-ի տարագրութեան ընթացքին եւ Գողթան ձեռագրի թերթերով Թաւրիզի թուրք նպարավաճառը պարկ կը շինէր յաճախորդի Համար 1920-ին»։ Յիշեալ թուականին էր որ Ատրպատականի սահմանամերձ Նախիջեւանի եւ Գողթնի քաղաքներուն եւ գիւղերուն մէջ տեղի կ'ունենային թաթարական ասպատակութիւններ, որոնց ընթացքին թալանուած ձեռագիրներ եւ հրատարակուած գիրքեր Թաւրիզ փոխադրուելով մեծաքանակ ծախուեցան շահագրգռուող հայերուն։ Այս մասին խիստ ուշադրաւ է բանասէր Յարութիւն Գիւրտեանին հետեւեալ վկայութիւնը.

«Մեծ Աղէտի աւան-թալանի օրերուն Թաւրիզ բերուած էին մեծաթիւ հայերէն հին ձեռագիրներ։ Մեծածաւալ Յայամաւուրքներ, թուղթի վրայ գրուած, շատ յարմար ապրանք էին նպարավաճառներու համար, որոնք Յայամաւուրքի թերթերը կազմահան ընելով իբր թղթեայ տուպրակներ կը գործածէին նպարեղէն, պանիր եւայլն փաթաթելու կամ մէջը դնելու համար։ Սրբազանը¹³ ասիկա իմանալով, անմիջապէս շուկայ մարդ կ'ուղարկէ եւ թուղթին զինը վճարելով կը հաւաքէ ձեռագիրները եւ Վարժարանի մը (Հայկազեան¹⁴) երկրորդ յարկը ապակեփեղկ տախտակեայ դարաններու մէջ պահել կու տայ։ Որ մը Սրբազանը ըսաւ ինծի, որ երբուանդ Միլլալեանին հետ երթամ այդ ձեռագիրները տեսնելու եւ անոնցմէ ուզածներս զատելով առնեմ տանիմ։ «Միայն, աւելցուց քմծիծաղով մը, «պէտք է թուղթին դրամը տաս ինչպէս որ մենք վճարած եմք։

«Երուանդին հետ դացինք եւ արդարեւ հոն գտայ բազմաթիւ թէ՛ պակասաւոր, թէ՛ քայքայուած եւ թէ՛ կատարելապէս ամբողջական խոշորակազմ եւ ծանրածանր Յայամաւուրքներ, ոմանք կարմրագիծ ծաղիլուած, եւ ընդհանրապէս ԺԴ — ԺԵ. դարերէն։ Շահեկան յիշատակարաններով ընտիր Յայամաւուրքներ, որոնք բոլորն ալ պիտի ուղէի տանիլ հետս իմ հաւաքմանս վրայ աւելցնելու համար։

«Ուշ առնէ Սրբազանին քով վերադարձանք։ Ըսի որ արժէքաւոր Յայամաւուրքներ կային հոն։ «Քանի՞ հատ զատեցիր» հարցուց

¹³ Կ'ակնարկուի Ատրպատականի քաղաքագիւմ Առաքնորդներէն Տ. Ներսէս Արքեպս. Միլիէ-Թաղաթաղի, որ պաշտօնավարած է 20 Սեպտ. 1912-էն մինչեւ իր վախճանումը՝ 28 Սեպտ. 1948 թուականը։



Ժպիտով : «Ոչ մէկ հատ , Սրբազան» պատասխանեցի : Երբ զարմանքով ինծի կը նայէր , «Սրբազան , ինծի համար կարելի չէ նոյնիսկ մէկ թերթ մը վերցնել ասոնց մէջէն» ըսի : Յետոյ աւելցուցի . «Որ մը չէ որ մը պիտի իմացուի ուր Բիւրտեանը Թաւրիզէն ին՝ ՍՏ ՄԵՐԱՐԺԻՔ , ու վրտէ և մի դուցէ տասնեակ հազարաւոր արժէքով , ձեռագիրներ պնէր է Մելիք-Թանդեան Սրբազանէն եւ առեր տարեր է , կրնան ըսել» , ըսի : «Այն ատեն ո՞վ պիտի ուղէ ճշմարտութիւնը յսել եւ հաստատ» : Իրաւունք տուա ինծի : Ըսի որ տարակոյս չունիմ թէ զանոնք նպարտաւատներու քովէն պնելով հաւաքելու համար ձեռագիրներու հոգածու մը , ինչպէս որ ինքն է , որ մը պիտի կարենայ յարմար տնօրինութիւն ընելու այդ դժարատ ձեռագիրներուն ճակատագրին համար եւ զանոնք ապահով տեղ մը յանձնելու»¹⁴ :

Տրուած ըլլալով որ Յարութիւն Բիւրտեանը 1931-ի ամառն այցելած էր Թաւրիզ , տարակոյս չի մնար որ իր ուսումնասիրած ձեռագիրները 1922—1931 թուականներուն զնուած կամ ձեռք բերուած էին Մելիք-Թանդեան Սրբազանին կողմէ եւ Յ . Բիւրտեանին նկարագրած Յայամաուրքներն եւս հաւանաբար մինչեւ 1922 թուականը փոխուղրուած էին Ս . Էջմիածին , նոյն ինքն Ներսէս Արքեպիսկոպոսին կողմէ :

Փակադիւծ մը բանալով այստեղ , յայտնենք թէ Հրաչեայ Աճառեան իր կազմած Յուցակին մէջ կը նկարագրէ Հինգ Յայամաուրքներ , որոնցմէ առաջին երեքը սեփականութիւնն էին Ղալայի Արամեան Մատենադարանին եւ վերջին երկուքը՝ Պրն . Սողոմոն Մելիք Արրահամեանցին եւ Ալեքսան Աւետեանինն :

Իրանահայ բանասէր Հայկ Աճէմեանը Ադուլիսէն Թաւրիզ հասած ձեռագիրներէն , ըստ Ատրպատականի Հայոց Թեմական Խորհուրդի Ատենադպիր Գնդապետ Խմիլ Յակոբեանի 1968-ին մեզի տուած տեղեկութեան , քանի մը տասնեակ զնած եւ իր հերթին վաճառած էր Վիեննայի Միխթարեան Միաբնութեան եւ Յարութիւն Բիւրտեանին : Այս վերջինս իրազեկ եղած ըլլալով Հասկ-ի մեր յօդուածին , ի լուսարանութիւն հետեւեալը կը ճշդէ .

«Արդարեւ , ակամայ սխալներ միշտ կը կատարուին : ՀԱՍԿ-ի 1968 թիւ 6—7-ին մէջ մեր սիրելի Վարդան Մ . Վրդ . Դէմիրճեանը դուրեւր նախաձեռնութեամբ մը ստորագրած է «ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱ-

¹⁴ ՀԱՍԿ , 1968 , Յունիս—Յուլիս , էջ 227 եւ Դիւան Բ . , էջ 192 :

¹⁵ ՅՈՒՅԱԿ ԹԱԻՐԻՋԻ , Հրաչեայ Աճառեան , էջ 38—43 , կը ճկաբարձրուի 1418-էն յետոյ , 1438-ին եւ 1673-ին գրուած Յայամաուրքներ , եւ էջ 102—105 եւ 125-ի մէջ՝ 1457 եւ 1490-էն յետոյ գրի առնուած Յայամաուրքներ :

ՅԵՐԷՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ» խորագրով յօդուած մը, ուր ի մէջ այլ չափական ծանօթութեանց կը յիշէ նաև «Իրանահայ բանասէր Հայկ Աճէմեանը, սոյն (Նախիջեանի եւ Գողթնի կողոպտուած) ձեռագրերից մի քանի տասնեակ գնած եւ իր հերթին վաճառած է Վիեննայի Միսթարեան Միաբանութեան եւ Յարութիւն Քիւրտեանի» (էջ 227ա)։ Ասիկա բացործակապէս ճիշդ չէ իմ մասին։ Հանդուցեալ Հայկ Աճէմեան ո՛չ մէկ ատեն ինձի որեւէ ձեռագիր չէ ծախած։ Ես իրմէ լոկ ստացած եմ քանի մը թերթերէ բաղկացած ձեռագիր պրակ մը իրր նուէր եւ այսքան միայն»¹⁶։

Թաւրիզի Մելիք Թանդեան Ազգային Եկեղեցական Թանգարանի հայերէն ձեռագիրներուն թիւը, այսօր, պիտի անցնէր 160-ը, եթէ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսը 1922 թուականին, Ս. Էջմիածին ուղարկած չըլլար չուրջ 150 կտոր գրչագիր եւ տպագիր մատենաներ։ Այս մասին ի ձեռին ունինք, իրանաբնակ Գողթնեցիներու կողմէ, 1942 թուականին, Սրբազանի Առաջնորդական ՅՈ—ամեակին առիթով գրի առնուած ուղերձը, ուր հետեւեալը կը վկայուի։

«Ակամայ վերլիչում ենք այն սրտցաւ եւ գթառատ վերաբերմունքը, որ Դուք ի յայտ բերիք բարբարոսների արինուռչտ բնազդներէց ճողոպրած Գողթնեցի տարագիր մնացորդների հանդէպ եւ ապա այն ջանքերը, որ Դուք թափեցիք անխուսափելի կորուստից փրկելով Վ. Աղուիսի հարուստ մշակութային զանձարանից Թաւրիզ հասած չուրջ 150 կտոր գրչագիր եւ տպագիր մատենաները, գնելով այդ ամէնը, եւ ապա ուղարկելով Ս. Էջմիածին, 1922 թ.»¹⁷

Այս առթիւ աւելորդ չենք համարեր հետեւեալ դիտողութիւնը կատարել Հայկ Աճէմեանի հասցէին, որ Տ. Ներսէս Արքեպս. Մելիք-Թանդեանի Ազգային եւ Հասարակական Գործունէութեան Փառասնամեայ Յորելնանին (1886—1926) առիթով հրատարակեալ (Վենետիկ, 1926, 51 էջ) իր գրքոյկին մէջ ոչ մէկ յիշատակութիւն ունի Մելիք-Թանդեան Սրբազանին հայերէն ձեռագիրներու հանդէպ ունեցած դուրգորոտ վերաբերումին եւ զանոնք Ս. Էջմիածին զրկած ըլլալու գնահատելի աշխատանքին մասին, ինչ որ չէր կրնար ակամայ թերի մը նկատուիլ։

Հորեւոյս Սրբազանին այս բացառիկ ուշադրութեան մասին, զժբախտաբար չատ հարեանցի յիշատակութիւն մը կայ Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի Յուշակ Զեռագրացի Ներածակա-

¹⁶ ԳԻԻԱՆ Բ., էջ 192։ Գնդ. Էյիլլ Յակոբեանին կը մնայ վերատեսուքեան Եմբարկի իր կարծիքը։

¹⁷ ՀԱՍՄ, 1908, Զուգիս—Յուլիս, էջ 227—228, ԳԻԻԱՆ Բ., էջ 68—69։

նին մէջ, որուն հեղինակը՝ նոյն Մատենադարանի ատենապահ եւ ղրտնական Օ. Եգանեան, կը դրէ թէ սոյն ձեռագիրները «Բերուած է Մէլիք-Թանգեանի ջանքերով» եւ կը յաւելու թէ 1922 թ. Մարտ 13-ին, Ատրպատականի Ազդաշին Առաջնորդարանէն Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին ղրկուած է 63 ձեռագիր եւ 17 տպագիր գիրք, համապատասխան յուցակով հանդերձ¹⁸ :

Պարտք կը դրանք յայտնել թէ ղրկուած ձեռագիրները ոչ թէ 63, այլ 83 հատ էին եւ այս մասին ճշդում մըն ալ կատարուած է Օ. Եգանեանին կողմէ, մեր յօդուածին ընթերցումէն ետք: Յարգելի ղրտնականը կը մեղադրէ մեզ, այս առթիւ, որ ՀԱՍԿ-ի մեր յօդուածի պատրաստութեան ընթացքին «Հեղինակը մոռացել է նշելու նաեւ իր հաղորդման հիմնական աղբիւրը՝ Մաշտոցի անուան Մատենադարանի Յուցակ Ձեռագրացի մեր ներածականը, որից լայնորէն օգտուել է»¹⁹: Հակառակ իր հետաքրքրական բովանդակութեան, սոյն ներածականի Ատրպատականին վերաբերեալ մասը չունի սպառիչ տեղեկութիւններ եւ անտես ըրած է կարգ մը յօդուածներ, որոնք կրնային նոյնքան օգտակար եւ յաւելեալ տեղեկութիւններ հայթայթել իրեն Ատրպատականի Թեմին մէջ դոյութիւն ունեցող ձեռագիրներու մասին:

Արդարեւ, Դարաշումրի Մաղարթայ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի վանահայր Տ. Ղեւոնդ վարդապետ Բարսեղեան, 1930-ական թուականներուն խմբադրած իր մէկ յօդուածին մէջ, սոյն վանքի պատմական ծանօթութիւններու կարգին, կը յիշէ թէ «Այժմ վանքում կայ 124 կտոր զանազան տեսակի ձեռագրեր, որոնք համարուած են վանքի թանկադին հարստութիւնը»²⁰: Սոյն ձեռագիրներով զբաղւելու եւ զանոնք ուսումնասիրելու առիթ ունեցած է իրանահայ բանասէր Հայկ Աճէմեանը, երբ ան 1925 Յուլիսին կ'այցելէր այս մենաստանը եւ դրի կ'առնէր իր յուշերը²¹:

Ոչ միայն Ս. Ստեփաննոս վանքի, այլ եւ Թաւրիզի, այլ վայրերու եւ մասնաւոր անձերու մօտ դտնուող ձեռագիրներու Յուցակը կազմած է Հայկ Աճէմեան եւ զանոնք 1960-ին իր հրատարակելի կամ անտիպ երկերու շարքին դասած է հետեւեալ խորագրով. «ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԱՅ ԹԱՒՐԻԶԻ, ԱՅԼ ՎԱՅՐԵՐԻ ԵՒ ՄԱՍ-

¹⁸ Օ. Եգանեան, ՅՈՒՅԱԿ ՁԵՌԱԳՐԱՅ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՍԵՆԱՒԱՐԱՆԻ, 1965, Երեւան, Ա. հատոր, էջ 119—120:

¹⁹ Էջմիածիմ ամսագիր, 1969, Յուուուար, էջ 48, Մի ճՇՏՈՒՄ, հեղինակ Օ. Եգանեան:

²⁰ Գիտիւն Բ., էջ 146:

²¹ Հայկ Աճէմեան, Ս. ԹԱՒԷԻ ՎԱՆՔԸ, Ա. Գրքոյ, Թեհրան, 1959, էջ 11:

ՆԱԽՈՐ ԱՆՁԱՆՑ: Կազմուած Հայր Յակոբոս Տաշեանի ծրագրով: Մանրանկարչական գունաւոր նկարներով»²²: Այսպիսով կարելի է ենթադրել թէ Հայկ Աճէմեան հանդիսացած է Թաւրիզի Հայերէն ձեռագիրներով զբաղող 11-րդ բանասէրը: Իր մահէն ետք՝ 1968 թ., իր անտիպ ձեռագիրներն եւս մնացին անյայտ, հակառակ Պրն. Նորայր Մամեանի Հանգուցեայի պարագաներուն մօտ կատարած խնդրանքներուն եւ զանոնք ձեռք բերելու համար թափած ճիւղերուն:

1931-ի Յուլիսին, Երեւանէն Զուղայի վրայով Թաւրիզ այցելութեան եկող Յարութիւն Քիւրանեան, Մելիք-Թանգեան Սրբազանին իսկ արտօնութեամբ, աչքէ կ'անցնէ Թաւրիզի ձեռագիրները եւ անոնց մասին տեղեկութիւններ ալ կու տայ Սրբազանին, որուն մօտ կը պահուէին Որոտնեցիի եւ Տաթեւացիի «Սքանչելի Աւետարանը, միակ գրչութեան ժամանակակից (ԺԵ. դար) ոսկեկազմ ձեռագիրը մեր ներկայ ձեռագրատան ժառանգութեան մէջ: Տեսայ նաեւ Թաւրիզի եկեղեցիներուն մէջ պահուած ձեռագիրները: Որոտնեցիի ոսկեկազմ Աւետարանը իջմիածին է այժմ: Իսկ այն բազմաթիւ Յայսմաւուրքները եւ եկեղեցիները պահուած ձեռագիրները չեմ գիտեր ի՞նչ եղան եւ ո՞ւր են այժմ: Կ'ըսուի թէ Խորհրդային Հայաստան տարուած են: Միակ Աւետարան մը 1311-էն, Ծեր գրչէ եւ Թորոս Սարկաւաղէ ծաղիկեայ իր մանրանկարներէն կողոպտուած (որոնց համար ժամանակին հրապարակաւ խնդիր հանեցի) այժմ Թաւրիզի Մելիք-Թանգեան թանգարանին ձեռագիրներուն մէջ կը դտնուի: Պրն. Հայկ Ստեփանեան, իմ հրապարակաւ յարուցած խնդրոյս առթիւ հետապնդեր ու բաւական դժուարութեամբ ետ կորցեր էր այդ կարեւոր եւ մեծարժէք ձեռագրէն ինչ որ կը մնար, այսինքն Ա. երեսին արծաթ կազմը, կանոններու խորանները, Աւետարաններու սկիզբի ճակատները, ինչպէս նաեւ Աւետարանին ամբողջ գրչութեան մասը»²³:

Ազուլիսէն եւ Նախիջեւանէն Թաւրիզ բերուած բազմաթիւ ձեռագիրներ սահմանուած էին վաճառուելու: Այս առիթով Յ. Քիւրանեան անձամբ կը վկայէ հետեւեալ դէպքի մասին, ցոյց տալով այն չարաշահութիւնները որոնք ի գործ կը դրուէին ձեռագիրներու յափրշտակիչներուն եւ առուծախի միջնորդներուն կողմէ:

«1931-ին (Թաւրիզի մէջ) Կարսեւման անուն զարմանալի մարդ մը Երուանդ (Միրզայեանին) միջոցաւ զիս հրաւիրեց ձեռագիրներ տեսնելու համար, որոնք կ'ուզէր վաճառել: Սակայն լուծած անմիտ ընթացքը զիս այնքան զայրացուց, որ բարկութեամբ հեռացայ իր

²² Նոյն, Երկրորդ Մաս, 1800—1960, Թեհրան, 1960, էջ 17:

²³ ԳԻԻԱՆ Բ., էջ 193:

սենևակէն տոանց իսկ ձեռագրի մը գտած ըլլալու: Զայրոյթս արտայայտած ըլլալով, երբ այդ օր Սրբազանին քովն էի քօծիծաղով մը հարցուց թէ ինչո՞ւ վայրացած էի Կարսեւանի դէմ, որ իրեն եկեր էր ինծի դէմ բողոքելու: Պատմեցի եղածը, ըսելով որ ձեռագիրները որոնք շահեկան կ'երևային, երբեք չթողուց որ քննեմ եւ տասը քալլ անդիէն միայն ցոյց կու տար իր ձեռքը բռնած ձեռագիրը, նոյն ատեն պահանջելով որ արժէք մը տայի ձեռագրին: Սրբազանը ծիծաղեցաւ, աւելցնելով «Կ'երեւի յիմար է»²⁴:

Մեղի յայտնի չէ թէ Յ. Քիւրտեան կազմած է ցուցակը Թաւրիղի խնդրոյ առարկայ ձեռագիրներուն, սակայն իրբեւ մօտէն ուսումնասիրող մը, ղիկնք կը նկատենք 12-րդ ուսումնասիրողը Թաւրիղի ձեռագիրներուն, որոնց մասին իր ունեցած բացառիկ հետաքրքրութիւնը անձամբ հաստատած ենք 1968 թուին, երբ 7-րդ անգամ ըլլալով ան Թաւրիղ կ'այցելէր եւ կը քննէր Մելիք-Թանգեան Թանգարանին մէջ տեղաւորուած 16 ձեռագիրները:

1942-ին Թաւրիկի Թեմակա՛ն Ռորհուրդի կողմէ 7 նոր ձեռագիրներ կը զրկուին Մայր Աթոռ, որոնց հետ միասին շատ հաւանաբար Հոգեւոյս Սրբազանին մօտ դոնուող Որոտնեցիի եւ Տաթեւացիի Աբանչեւի Աւետարանը:

Ակնարկուած ձեռագիրներէն զատ, գտնուած են նաեւ անհատ նուիրատուներ, որոնց նուիրած ձեռագիրներուն քանակը կ'անցնի 30-ը: Հետաքրքրական է այս առիթով յիշատակել, որ Թաւրիղի Ագգայլին Հաստատութիւններուն մէջ գտնուող ձեռագիրները հաւաքուած կամ մեկտեղուած էին Ատրպատականի զոյգ Մենաստաններէն՝ Ս. Թադէշէն եւ Ս. Ստեփաննոսէն, Թաւրիղ քաղաքէն, եւ Սալմաստի, Ռիլայիէի, Ղարադաղի եւ Մակուի շրջաններէն: Իսկ Ատրպատականի մէջ զրի աւնուած ձեռագիրներուն քանակն ալ 100-էն աւելի է:

Ազգային Առաջնորդարանի կողմէ Ս. Էջմիածին փոխադրուող ձեռագիրներու կողքին, գտնուած են անհատներ, որոնք իրենց տրամադրութեան ներքեւ գտնուող ձեռագիրներ նուէր զրկած են Երեւանի Մաշտոցի Անուան Մատենադարանը: Այսպիսի հետաքրքրական դժբաղդներ ալ արձանագրուած են, որոնցմէ յառաջ կը բերենք Ռոյի կամ Հերի Մաշյապան կամ Սաղիսազան պիղէն արտասահման փոխադրուած ձեռագիր բժշկարանի մը պարագան:

Արգարեւ, 1605-ին Մահլազան ղիւղէն հայ ընտանիք մը կը գաղթէ եւ կը հաստատուի Սերասուիոյ Իմարէթ պիւղը եւ ապա կը վերահաստատուի Սերասուիոյ Այս ընտանիքի զաւակներէն Յակոբ Վար-

²⁴ Նոյն տեղը, էջ 192:

դպվելու, որ իր աշխարհական եղած տարիներուն բժշկութեամբ կը
զբաղէր, իր որդիներէն Աստուածատուր Վարդապետին, որ դարձաւ
րժիշկ էր, ժառանգութիւն կը թողու 1631-ին իր իսկ ձեռքով ընդօրէ-
նական բժշկարան մը: Անուհետեւ այս բժշկարանը կը ժառանգեն ա-
նոր ըրժիշկ որդիները՝ Մատթէոսն ու Մաթուսաղան (հետաւելին
Եղիազար Սրբեպիսկոպոս), որոնք ձեռագիրը հարստացնելով նոր
նիւթերով՝ կը փոխանցեն Մաթուսաղայի որդի ըրժիշկ Մեսիային:

Որպէսզ որդի ժառանգարար փոխանցուող այս բժշկարանը,
1915-ի Զարդերէն տղատուած վերջին բեկորին՝ զեղազործ Յովհաննէս
Մեսիայեանի սեփականութիւնն իրրեւ, կը ժառանգեն իր զաւակները՝
Զապէլ (այժմ մահացած), Հրանդ եւ Պարզեւ Մեսիայեանները, որոնք
կ'որոշեն սոյն ձեռագիրը նուիրելու Հայաստանի Պետական Մատեն-
ադարանին: Արդարեւ, այժմ այս բժշկարանը ի պահ կը մնայ
յիշելով Մատենադարանի 10-277 թուահամարին տակ: Այս ձեռագիր
բժշկարանին մէջ գրի առնուած են ԺԵ. դարու Հայ ականաւոր բժշկա-
պետ Ամիրտովաթ Ամասիացիին շարք մը գործերը՝ ինչպէս օրինակ
Ուռուիմ բժշկութեան, Օգուտ բժշկութեան, Ախրապալտին եւ այլն,
ինչպէս նաեւ Մեսիայեան տոհմի բժիշկներուն կողմէ աւելցուած այլ
նիւթեր²⁵:

Մեսիայեան ընտանիքի նման Հայաստանի Պետական Մատենա-
դարանի ջերմ րարեկամներէն մին հանդիսացած է նաեւ Նիւ Եօրքի
Հայկական Գաղութի անդամներէն Պրն. Յարութիւն Հազարեան, որ
1962 թուականին Մաշտոցի անուան Մատենադարանին նուիրած էր 277
միաւորէ բաղկացած արեւելեան ձեռագիրներու իր պատմարժէք հա-
ւաքածոն, որ հետագայ տարիներուն աւելի ճոխացաւ նոր նուիրա-
տութիւններով: Արդարեւ, 1973 Հոկտեմբերին, Պրն. Յարութիւն
Հազարեան Պետական Մատենադարանին կը նուիրէր եւս 26 ձեռա-
գիրներ, որոնք գրուած են պատմական Հայաստանի եւ Հայ Գաղութի-
նեւ տարբեր Մենաստաններու եւ վրչութեան կեդրոններուն մէջ՝
ԺԴ. — ԺԹ. դարերուն եւ ունին զանազան տեսակի ճոխ բովանդակու-
թիւն: Անոնց մէջ կան ծիսական շարք մը մատենաներ, իմաստասիրա-
կան-մեկնողական ընդթով երկասիրութիւններ, բժշկական, քերա-
կանական, բարոյականագրական եւ գեղարուեստական արձակ ու չա-
փածայ նիւթերու ժողովածուներ:

Յ. Հազարեանի նուիրած 26 ձեռագիրներու մասին բանասէր Օ.
Եղանեան հետեւեալ ուշագրաւ տեղեկութիւնը կու տայ.

²⁵ ԴԻԻԱՆ Ա., էջ 178—179:

«Այս մատենաներից մի քանիսը առանձնապէս արժեքաւոր են այն տեսակէտից, որ դրանք դուրս են եկել Աղոււիսի, Սեբաստիայի եւ Թաւրիզի դրատներէ յայտնի հաւաքածոններից. հաւաքածոներ, որոնցից անհամեմատ քիչ ձեռագրեր են մեզ հասել»:

«Նոր ստացուած այս ձեռագրերը Մաշտոցի անունն Մատենադարանի ձեռագրերի շարքում զբաղեցնում են 10·603—10·628 թուահամարները եւ անհրաժեշտ մշակման ենթարկուելուց յետոյ կը դրուեն գիտական շրջանառութեան մէջ»²⁶:

Խիստ հետաքրքրական է մեզի համար զիտնալ թէ Թաւրիզի ո՞ր ձեռագիրներն են նուիրուածները, որոնց մասին բանասէր Օ. Եգանեան չէ ուզած մանրամասնել իր ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՍՑԷՆՈՎ ամփոփ գեկոյցին մէջ:

Վերոյիշեալ Զեռագրացուցակներուն մէջ ի յայտ եկած է, որ Ատրպատականի դրչագիրները գրի առնուած են Ս. Թադէի Վանքին մէջ՝ 1315—1734 թուականներուն, Թաւրիզի մէջ՝ 1334—1854-ին, Ծործորի Վանքին մէջ՝ 1318—1676-ին, Ղարաբաղի կամ Փայտակարանի Յոյժ գիւղին մէջ՝ 1655-ին, Մակուի մէջ՝ 1356—1677-ին, Ս. Ստեփանոս Նախավկայի Վանքին մէջ՝ 1381—1675-ին, Սալմաստ հայաբնակ դաւառին մէջ՝ 1430—1800-ական թուականներուն:

ՄԵՐ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՅՈՒՑԱԿԻ ՄԱՍԻՆ

Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդական պաշտօնին ստանձնումով, 1963 Սեպտեմբեր ամսուն Թաւրիզ կը հասնէինք եւ վարչական, հոգեւոր եւ կրթական մեր աշխատանքներու կարգին հետամուտ կ'ըլլայինք բանասիրական պրպտումներու, հին կոնզակներու արտագրման եւ ՀԱՍԿ-ի ու ԴԻԻԱՆ-ներու մէջ անոնց հրատարակութեան, Թեմի եկեղեցիներու ցուցակի կազմութեան եւ այլ նման աշխատանքներու շարքին հայերէն ձեռագիրներու հաւաքման եւ անոնց Յուշակին պատրաստութեան անյետաձգելի աշխատանքին:

Մեր պրպտումներու ընթացքին հաստատեցինք թէ Ատրպատականի Հայ ժողովուրդի դժխեմ ճակատագրին ենթարկուած էին նաեւ հայերէն ձեռագիրները, որոնք յաճախ տեղափոխուելով, մոռացութեան ենթարկուելով կամ փճանալով՝ անտէր ու անտիրական գոյքի մը տպաւորութիւնը ձգած էին: Թաւրիզի եւ Ատրպատականի այլ հայաբնակ վայրերու ձեռագիրներու մասին անհրաժեշտ էր ամբողջական

²⁶ Հայրեմիքի Զայն, 17 Հոկտեմբեր 1973, քիւ 42 (430), Երեւան:

ուսումնասիրութեան մը ձեռնարկել է մեր պրպտումներու ընթացքին, Թաւրիզի մէջ Մեյիք-Թանգեան Աղղային-Եկեղեցական Թանգարանին կազմութեան աշխատանքին զուգահեռ, Աղղային Առաջնորդարան հաւաքեցիք Թեմի ձեռնադիրները եւ մեր Թեմագրութեամբ ալ նուէրներ կատարեցին Հոգեւոյս Տ. Սահակ Քհնյ. Եղիկեանի հարազատները (Թիւ 3), Պրն. Էսքերօ Տէր Յովհաննիսեան (Թիւ 10), հանգուցեալ Մարի Մատթէոսեան (Թիւ 11), Թեհրանարնակ Սարմաստեցի Միհրան Շահգալղեան (Թիւ 14 եւ 15) եւ Լեւոն Մինասեան (Թիւ 16), զոր պատճ իր նախապկայի Ս. Ստեփանոս Վանքին մէջ:

Հայերէն ձեռագիրներու ցուցակագրութեան հրատապ հարցին անդրադառնալով, բանասէր Յարութիւն Քիւրտեան տարիներ առաջ այսպէս կը թելադրէր.

«Քանի մը ձեռագիրներ (որոնք ապահով կը պահուին օտար հաստատութեան մը մէջ) չքեղ ալլ անխմաստ տպագրութեամբ ներկայացուելէ աւելի կենսական է նիւթական միջոցներ տրամադրել եւրոստղծի, Վենետիկի, Նոր Զուգայի, Վիեննայի, Չմաուի, Անթիքի տաի վանքերուն մէջ պահուած յաճախ շատ մեծաբժէք, հայերէն ձեռագիրներու փրկութեան գործին, զանոնք քայքայումէ, փտութենէ, կոծումէ դերձ պահելու, կազմելու, խնամելու եւ վերակենդանացրնելու համար»²⁷:

Եւ ճիշդ այս փրկութեան գործին ձեռնարկեցինք Թաւրիզի ձեռագիրներուն ցուցակագրութեամբ եւ մեկտեղումով, զանոնք նախ Աղղային Առաջնորդարանին մէջ պահելով եւ ապա փոխադրելով Ղայս կամ Բերդաթաղ հայարնակ շրջանի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ կից՝ հաստիարէր կալուածի մը ներքնայարկի սրահը, կողք կողքի Թեմական Տպարանին, Սրահ մը՝ որ իրրեւ Մեյիք-Թանգեանի ներսէս Արքեպիսկոպոսի յիշատակի տուրք, նոյն անուամբ վերակոչուեցաւ:

Աղղարեւ, Հոգեւոյս Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի ծննդեան 102-ամեակի եւ մահուան 20-ամեակի զոյգ տարեդարձները առիթ հանդիսացան, որ Թաւրիզի Թեմական Սրահուրդը նախաձեռնէ Թանգարանի մը յատուկ Սրահի պատրաստութեան: Այս Թանգարանին մէջ մեկտեղուեցան Առաջնորդարանիս սեփական քանի մը ձեռագիրները, ինչպէս Ս. Ստեփանոս նախապկայի Վանքէն, Ս. Թադէէն եւ Լիւաւայի Ս. Սարգիս Եկեղեցիէն ու անհատ նուիրատուներէն ստացուած ձեռագիրները, որոնց թիւր բարձրացաւ 16-ի: Թանգարանին մէջ կը ցուցադրուին նաեւ Արշակ Խան Գորոյեանի կտակի համաձայն Աղղային

27 Դիմիւն Բ., էջ 229: ՀԱՅՐԵՆԻՔ, Պոսթըմ, 2 Յունիս 1973, Շաբաթ:

Հաստատութեանց փոխանցուած 144 հատոր պարսկերէն թանկարժէք ձեռագիր մատենաներ:

10 Դեկտ. 1967, Կիրակի օր, Արշակ Խանի կտակին համաձայն իր ժառանգորդներուն հասնելիք թանկարժէք իրերը եւ ձեռագիրները՝ Գնդ. Էմիլ Յակոբեանի եւ Պրն. Համօ Վարդանեանի կողմէ փոխադրուեցան Մելիք-Թանգեան Թանգարան, որուն պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1967 Հոկտեմբերի 26-ին, Իրանի Նորին Կայսերական Մեծութիւն Մոհամադ Ռեզա Փահլաւի Արիւմեհշիր Շահնշահի թաղադրութեան (4 Արան 1346) օրը, ձեռամբ Արեւելեան Ատրպատականի Նահանգապետ Ն. Վ. Թաղի Սարլաքի, յետ Գոհարահական Մազլիթանի՝ որ այդ առաւօտ տեղի ունեցած էր Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ մէջ, պարսիկ եւ օտար բարձրաստիճան անձնաւորութիւններու, Լազարիսթ Միարանութեան ներկայացուցիչներու եւ հայ հաւատացեալներու հոծ բազմութեան ներկայութեամբ:

Թեմական Խորհուրդին կողմէ կազմուած Թանգարանի Յանձնախումբը, մեր նախագահութեամբ, այնուհետեւ ցուցակադրեց Թանգարանին իրերը, հետեւեալ կարգով.

1.— Պարսկերէն եւ արաբերէն ձեռագիրներու եւ ֆերմաններու ճոխ հաւաքածոն ցուցակադրուեցաւ եւ վերծանուեցաւ արարադէտ Պրն. Ալի Ազարի միջոցաւ:

2.— Հայերէն 16 ձեռագիրներու ժողովածոն ցուցակադրուեցաւ մեր կողմէ. այդ ցուցակը լոյս ընծայեցինք ՀԱՍԿ-ի, ԱԼԻՔ-ի եւ ԳԻԻԱՆ Բ. ի մէջ: Անջատարար յօդուածիս, տունիս նաեւ սորն 16 ձեռագիրներուն համառօտ ցուցակը:

3.— Մեր կողմէ ցուցակադրուեցաւ նաեւ եկեղեցական իրերու եւ ուպասներու ժողովածոն²⁸:

Թաւրիզի 16 ձեռագիրներու կազմութեան ընթացքին բազմատարար նկատի ունեցած ենք նաեւ Հրաչեայ Աճառեանի կազմած Յուլիան համապատասխան ձեռագիրները եւ յապաւումներն ու յաւելումները արձանագրած մեր կազմած Յուլիանի մէջ:

Եզրակացնելով մեր խօսքը, անխորտն կրնանք յայտարարել, որ շուրջ հազար ձեռագիր օրինակներ Ատրպատականի Թեմին մէջ ըն-

²⁸ Աւելի մանրամասն տեղեկութիւններ նշում եմ մեր ԳԻԻԱՆ Բ.-ի մէջ, էջ 230—231: Այս առթիւ կ'արժէ արձանագրել հետեւեալը. Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Գործերու վարիչ-Քարտաչար Պրն. Վաքրաւ Մովսեան, 1968-ին երբ Թաւրիզ կ'այցելէր, փափաքած էր քանի մը ձեռագիր հատուկտորմեր մուէր ստանալ: Թեմական Խորհուրդը իրեն յատուկ մալամմալսնդութեամբ՝ չընդառաջեց սոյն փափաքին:

դօրինակուած եւ արտաքուստ գէպի Ատրպատական տարազրուած են, որոնցմէ մեզի ծանօթ ձեռագիրներուն ցուցակը հետագային առանձնադէպ լոյս պիտի ընծայենք: Եւրկայ ռուսումնասիրութիւնը նախաձաշակ մըն է նախկին տարինելու ընթացքին իրադրոծուած աշխատանքներու, որոնց շնորհիւ հոյ գրասէր հանրութեան համարձակեցանք ներկայացնել Ատրպատականի հայերէն ձեռագիրներու մասին:

ՀԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՒ ԱՆՏՈՊ ՅՈՒՑԱԿՆԵՐ

Ատրպատականի Հայոց Ձեռագիրներով հետաքրքրուած, զանոնք ռուսումնասիրած եւ յատուկ Յուցակներ պատրաստած են հետեւեալ բանասէրները:

1.— Խաչիկ Վարդապետ Դաղևան, որուն պատրաստած ցուցակագրութիւնները հրատարակուած են 1898 եւ 1900 թուականներուն, Վաղարշապատի մէջ, բանասէր Յակոբ Թօփճեանի խմբագրութեամբ:

2.— Ակադեմիկոս Հրաչեայ Աճառեան, որ իր պատրաստած ցուցակը նախ լոյս ընծայած է Հանգէս Ամսօրեայի մէջ եւ ապա 1910-ին առանձին դիրքով հրապարակ հանած, Վիեննական Միութարեաններու տպարանէն:

3.— Յովհաննէս Վարդապետ Շահաթունեանց՝ 1848-ին պատրաստած էր Ս. Ստեփանոս Նախավկայի Վանքի ձեռագիրներուն ցուցակը եւ նախանձախնդիր եղած անոնց Ս. Էջմիածին փոխադրութեան: Յուցակը անտիպ է եւ կը գտնուի Երեւանի Պետական Մատենադարանի Արխիւտան մէջ:

4.— Գալուստ Տէր Մկրտչեան՝ 1895-ին պատրաստած է Ատրպատականի ձեռագիրներու ցուցակ մը, այժմ անտիպ:

5.— Յովսէփ Յովհաննիսեանի (Յ. Էյմար) 1898-ին պատրաստած Յուցակը, որմէ յաջորդաբար օգտուած են Խաչիկ Վարդապետ եւ Հրաչեայ Աճառեան: Այժմ անտիպ է:

6.— Կարապետ Եղս. Տ. Մկրտչեանի 1912-ին պատրաստած ցուցակը, որ այժմ անտիպ է: Յուցակագրուած են իր կողմէ Ս. Էջմիածին գրկուած ձեռագիրները միայն, թիւով՝ 235 հատ:

7.— Սարգիս Հայկունիի եւ Ս. Տէր Աւետիսեանի պատրաստած Ձեռագրացուցակները, որոնք այժմ կը պահուին Երեւանի Ձեռագրաց Մատենադարանի անհատական արխիւներու պահարաններուն մէջ:

Տ.— Իրանահայ րահասէր Հայկ Աճէմեանի 1930—1935 թուականներուն պատրաստած ցուցակը, որ անտիպ է եւ հաւանաբար ալ կորսուած :

Ո.— Վարդան Ս. Վարդապետ Տէմիրճեան, որ 1964—1967 թուականներուն պատրաստեց Թաւրիզի Ազդային Առաջնորդարանին պատկանող ձեռագիրները, որոնց թիւը 1968-ին կը հասնէր 16-ի : Այս ձեռագիրները այժմ ի պահ դրուած են Թաւրիզի Մելիք-Թանգեան Թանգարանին մէջ :

Ս. ԷՋՄԻԱՄՆԻՆ, ԵՒ ԱՅԼՈՒԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ

1.— 1804—1910-ի ընթացքին, Ատրպատականի Առաջնորդներ՝ Տ. Գէորգ Վարդապետ, Առաքել Վարդապետ եւ Սիմէոն Արքեպս. Բզնունի Թաւրիզի եւ Ատրպատականի այլ վայրերուն մէջ կը գնեն Ս. Էջմիածնի թաւանուած ձեռագրատան զրչագիրները եւ կը վերադարձընեն Մայր Աթոռի Հոգեւոր Իշխանութեան : Հաւանաբար 300 ձեռագիրներ անոնք այս կերպով կը փրկեն կորուստէ :

2.— Եռյակնէս Վրդ. Շահխաթունեանցի եռանդուն ջանքերուն շնորհիւ եւ Տ. Մակար Վրդ. Տէր Պետրոսեանի ձեռամբ, 1848-ին, Ս. Էջմիածին կը փոխադրուին Ս. Ստեփանոս Նախապկայի Վանքին ձեռագիրներէն 25 հատ եւ 98 տպագիր մատեաններ :

3.— 1868—1918 թուականներուն, Էջմիածնայ Գէորգեան Ցուցակին մէջ նկարագրուած ձեռագիրներէն 4 հատը Ս. Թադէի եւ Ս. Ստեփանոս Վանքերէն փոխադրուած ձեռագիրներ են :

4.— 1911-ին, Տ. Կարապետ Եպիսկ. Տէր Մկրտիչեանի ջանքերով հաւաքուած Ս. Թադէի Վանքի 78 ձեռագիրները, ինչպէս նաեւ Թաւրիզէն, Խոյէն, Սալմաստէն եւ Մուժումբար հայաքնակ դիւղէն հաւաքուած 145 ձեռագիրներ Մայր Աթոռ կը փոխադրուին : Նոյն թուականի Նոյեմբեր 21-ին, Ատրպատականի բաղամարդին այս Առաջնորդը անձամբ Մայր Աթոռ կը փոխադրէ Փայտակարանի կամ այժմու Դարադարի հայարնակ գիւղերէն հաւաքուած 12 ձեռագիրներ եւս, իր կողմէ Ս. Էջմիածին փոխադրուած ձեռագիրներուն թիւը բարձրացնելով 235-ի :

5.— 1905—1906 թուականներուն Թաւրիզի մէջ կը պահուէին 156 ձեռագիրներ, որոնցմէ 81-ը կը գտնուէին Թաւրիզի Ազդային Առաջնորդարանին, երկու եկեղեցիներուն եւ Արամեան Գրադարանին եւ Լիւսաւայի զրատան մէջ, իսկ 75-ը՝ անհատ ազգայիններու մօտ՝ թի-

100/32 հոգի: Յիշեալ 156 ձեռագիրներու Յուշակը պատրաստած եւ յոյս ընծայած է Հրաչեայ Աճառեանը՝ 1910-ին:

Թաւրիզի Աղլային Հաստատութիւններու յիշեալ 78 ձեռագիրներն ալ հաւանաբար Տ. Կարապետ Եպիսկոպոսի կողմէ 1911-ին զըրկուած են Ս. Էջմիածին:

6.— 1920-ին, Ատրպատականի բազմաթիւն Առաջնորդներէն Տ. Ներսէս Արքեպս. Մելիք-Թանկեան կը հաւաքէ Գողթնէն եւ Նախի-ջեանէն Թաւրիզ բերուած ձեռագիրները, զանոնք ղեկելով Թաթար Թալանողներէ ու կը փոխադրէ Ս. Էջմիածին: Սոյն ձեռագիրներէն 150 կտոր զրչագիր եւ տպագիր մատեաններ հոգեւոյս Սրբազանը 1922-ին Ս. Էջմիածին կը զրկէ: Ղրկուածները կը գնահատուին իբր 83 ձեռագիր եւ 17 տպագիր գիրք:

7.— 1930-ական թուականներուն Ս. Ստեփանոս Նախավկայի Վանքին մէջ կը դնուէին 124 կտոր ձեռագիր, որոնք եւս Ներսէս Սրբազանին կողմէ կը զրկուին Ս. Էջմիածին:

8.— 1942-ին, Թաւրիզի Թեմական Խորհուրդը Մայր Աթոռ կը զրկէ Եօթր ձեռագիրներ ալ:

9.— Թաւրիզահայկ Գնդ. ճարտ. Էմիլ Յակոբեան 1955—1960 թուականներուն Համազդային-ի Պէյրութի Նշան Փայանձեան ձեմարանի Կեղը. Մատենադարանին զանազան զիբբերու հետ կը նուիրէ նաեւ երկու ձեռագիր, մին՝ Յայսմաւուրթ (1633—1654), միւսը՝ Գաւնճ Եւ Տաղք. երկուքն ալ նախապէս սեփականութիւնն եղած են Ազուլիսի Սրբ. Թովմայ Վանքին եւ գնուած 1919—1920-ին, նուիրատուին հօր՝ ուսուցիչ Մելքոն Յակոբեանի կողմէ:

Ձեռագիրներս ցուցակագրուած են Մեսրոպ Վրդ. Մակսուտեանի (անտիպ), Հայկ Աճէմեանի (անտիպ) եւ Արա Ս. Մելքոնեանի կողմէ, որ միայն յոյս ընծայած է Յայսմաւուրթի նկարադրականը ՀԱՍԿ-ի 1967 Հոկտեմբեր—Նոյեմբեր համարի էջ 428—431-ի մէջ: Ձեռագիրներս ցուցակադրուած չեն Հրաչեայ Աճառեանի կողմէ:

1650-ին Յայսմաւուրթս ստացողը՝ Գողթն դաւառի Առաջնորդ Խաչատուր Եպիսկոպոս, 1630-ին նորոգել տուած է Աւետարան մը (տե՛ս Հրաչեայ Աճառեան, Թաւրիզի Ցուցակ, էջ 2բ):

10.— Խոյի Մահազան զիւղին մէջ 1605-ին գրի առնուած Բժըլ-կարանը՝ Եսայեան տոհմին կողմէ 1973-ին կը նուիրուի Երեւանի Մատենադարանին:

11.— Նիւ Եորքահայկ Յարութիւն Հազարեան 1962 եւ 1973 թուականներուն Երեւանի Մատենադարանին կը նուիրէ 303 ձեռագիրներ, որոնցմէ շուրջ 20-ը նախապէս մաս կը կազմէր Թաւրիզի Գրատան:

Հետևաբար կարելի է հղրակացնել, որ 1805—1973-ի ընթաց-
քին, Ատրպատականի մեջ գոյութիւն ունեցող ձեռագիրներէն 801 հատ
և տպագիր մատենաներէն՝ 115 հատ զրկուած են Ս. Էջմիածին եւ
Սյունիք, որոնցմէ 199 ձեռագիրներ այժմ մաս կը կազմեն Երեւանի
Մաշտոցի սնտան Մատենադարանի Զեռագիրներու հաւաքածոյին եւ
յուրակազրուած են բանասէրներու կողմէ :

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԹՈՒՂԹՔ. — 348, որմէ կը պակսին հետեւեալ 13 թուղթերը. 22, 114, 174, 269: Հետեւաբար ձեռագիրս ունի 335 թուղթք (670 էրեսք): ՄԵԾՈՒԹԻՒՆ. — 37·7×27×10·5 հրմ.: ԳՐՈՒԹԻՒՆ. — Շատ մաքուր, էրկսին, 26—27·5×17 հրմ.: Իւրաքանչիւրը սինակին՝ 25—28×7·5 հրմ.: Միջին լուսանցք 2 հրմ., ստորին լուսանցքները մինչեւ 7 հրմ.: ԳԻՐ. — Բոլորգիր, մեծատառ, սեւ եւ կինամոնազոյն թանաքով գրուած: Սկզբնատողերը, վերնագիրներն ու սկզբնատառերը կարմիր թանաքով: Յատկապէս պատրաստուած է եկեղեցիներու մէջ դործածուած թեան համար: ՏՈՂՔ. — 18—19: ՆԻՒԹ. — Թուղթ, բնութիւն, հասակելի եւ բամպակեայ: ԿԱԶՄ. — Կաշեպատ փայտ. նոր մնայու համար ալ կաշիին վրայ անցուած է սեւ լաթէ չապիկ: Առաջին էրեսին՝ արծաթեայ պահպանակը դեռեւս մնացած է, որ իբրեւ հայ արծաթադրծներու ձեռարուեստ, իր վրայ քանդակեալ ունի տասը ստաբիլաներու յոտնկայս նկարները: Կեդրոնը՝ իրանալ Գրիստոսը, աջ եւ հանակ կողմերուն՝ Ս. Աստուածածինն եւ Սարիամ Մագթազենացին: Խաչելութիւնը չըջապատած են քէրովքներ եւ սերովքներ: Արծաթ պահպանակի շորս եզերքներուն վրայ, փակագիր արձանագրուած է հետեւեալը. —

«ՍԲ ԱԾԱԾՆԱ ԵԿԵՂԵՑՈՒՆ

ԹԱՐՎԷՁՈՒ, ԹՈՒԻՆ ՌՄԽ (1791), ՁԵՌԱՄԲ ՏՐ ՍՏԵՓԱՆԷԻ (Աճառեան՝ ՄՈՎՍԷՍԻ) Ի ՅԻՇԱՏԱԿԻ ՍԲ ԱԼԵՏԱՐԱՆԻՍ ԱՐԾԱԹՆ ԹԱՐՎԷՁՅԻ ՍԱՐԳՍԻ ՈՐԴԻ ԹԱԴՈՍԻՆ ԵՒ ԹԱԴԷՈՍԻ ՈՐԴԻ ԵՂԻԱՋԱՐԻՆ ՈՐ ԵՏՈՒՆ ԻՒՐԱՆՑ ԾՆՈՂ. »: Մնացեալը որ 11 հրմ. տեղ կը գրուէ, կտրուած կորսուած է: Տախտակին վերի կողմը ազուցուած է ողակ մը, որմէ բարակ շղթաներով կախուած են 10 արծաթեայ խաչեր եւ մատանի մը, որոնք բարեպաշտական նուէրներն են ուխտաւորներու: Խաչելութեան վրայ գրուած է՝ Յ. Ն. Թ. Հ., որուն վրայ ալ Գրիստոս Բաղմեալ, մէկ ձեռքին խաչ եւ միւս ձեռքը՝ օրհնելու դիրքով: Կազմիս Բ. երեսը կորսուած է: ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ. — 24ան: ՀԱՆԳԱՄԱՆՔ. — Յարատեւ գործածութեան մէջ գտնուած ըլլալով, բաւականին դեղնած եւ սեւցած են թերթերուն չրթները: Աճառեան՝ լաւ: ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ. — Թղ. 1ա—4բ, 11ա—11բ, 21ա—

21ր, 269ա: Մնացեալ դատարկ էջերը լեզուն են յիշատակագրութիւններով: ԽՈՐԱՆՔ. — Թիւով տասն են, այնքան զմայլելի գեղեցկութեամբ եւ արուեստով պատրաստուած դրչութեան այս հրաշալիքները, բոլորն ալ ոսկի, կապոյտ, կանաչ, կարմիր, նարնջագոյն եւ կինամոնադոյն երանգներու զմայլելի ծաղկումով, բոլորին վրայ ալ զանազան զիրքի թռչունները եւ ծառերու կանաչազարդ նկարները: Եւսերիոսի առ Կարպիանոս գրած զոյգ էջ ծանօթագրութիւնները առնուած են սքանչելի խորանաղարդերու մէջ, միշտ սիւնազարդ: Եւսերիոսի եւ Կարպիանոսի յաջող դիմանկարներն ալ պատրաստուած են հանդիպակաց զոյգ էջերուն վրայ: Համարարբառի տախտակները սիւնազարդ են եւ տարբեր մօթիւներով պատրաստուած: Իւրաքանչիւր Աւետարանի սկիզբը՝ կան աւելի պարզ ոճով պատրաստուած խորաններ, որոնք ունին նաեւ լուսանցազարդեր: ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ. — Շատ առատ եւ յաջող գործեր, կարմիր եւ դեղին թանաքով դժուած, զանազան մօթիւներով: Աճառեան՝ Բաւական արուեստաւոր, աւետարանչաց առաջին երեսներու խորանները շատ նուրբ եւ արուեստաւոր. այսպէս են նաեւ նոյն երեսներու զարդադրերը. էջ 5բ—10ա դրուած կամարները եւ էջ 12ա—20բ դրուած 18 մեծադիր տնօրինական պատկերները եւ էջ 22բ, 114բ, 174բ, 269բ դրուած չորս աւետարանչաց պատկերները նուազ յաջող են: ԺԱՄԱՆԱԿ. — 1311: ԳՐԻԶ. — Ծեր քահանայ: ԳԾՈՂ ԵՒ ՆԿԱՐՈՂ. — Թորոս Սարկաւազ, որ իր անունը յաճախ պատկերներու տակ եւ մէկ-երկու տեղ մանրանկարներուն տեղ հիւսելով կը յիշէ: ՏԷՐ. — Դրիշը՝ Ծեր: ՍՏԱՑՈՂՆԵՐ. — Խոստ Միրազ, Պրն. Աղբուղ, Խութլու՝ 1324-ին: ԿԱԶՄՈՂ. — Յուսէփ Արեղայ՝ 1448-ին: ՎԱՅՐ. — Վան՝ — Աղթամար՝ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ. — Մարդադիր եւ թռչնագիր, ոսկի, կարմիր եւ կինամոնադոյն գոյններով: ԽՈՐԱՆՔԻՐՔ. — Թռչնագիրք եւ պարզ մեծատառ:

Մատենան է Աւետարան, թղթեայ, կաղմուած լման, սակայն հետագային մի քանի պակաս թերթերով: Հնատիպ դրչութիւն, պատմական կարեւոր յիշատակարաններով հարուստ եւ Հայ զարդանկարչութեան լաւագոյն դանձարաններէն: Ընտրուած բոլոր մօթիւնները արդիւնք են վառ երեսակայութեան եւ իբրեւ այդպիսին ալ Ատրպատականի Մելիք-Թանդեան Աղզային-Եկեղեցական Թանգարանի Զեռադրաց Հաւաքածոյին լաւագոյն զրգադիրներէն:

Զեռագիրս նախ ուսումնասիրած է Խաչիկ Վրդ. Դադեան, թիւ 33 համարին տակ եւ հրատարակուած Յակոբ Թօփճեանի կողմէ հետեւեալ խորագրով գործին մէջ՝ «ՅՈՒՅԱԿ ԺՈՂՈՎԱԾՈՒԱՅ ԴԱԴԵԱՆ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ», Վաղարշապատ, 1900, որուն Բ. Մասին մէջ, էջ 49բ—51բ, թիւ 33—73 համարներով մէջ կը բերուի Թաւրիկ

դտնուած 43 հայերէն ձեռագիրներու սլարզ ցանկ մը: Խաչիկ Վարդապետի եւ Հրաչեայ Աճառեանի համաձայն, ձեռագիրս կը պատկանէր Թաւրիզի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյն, որ կից էր Ազգային Առաջնորդարանին:

Ձեռագիրս Բ. անգամ ուսումնասիրուած է Հրաչեայ Աճառեանի կողմէ, եւ Հանդէս Ամսօրեայի մէջ առանձին յօդուածաշարքով լոյս ընծայելէ ետք, հրատարակած է ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ ԹԱԽՐԻԶԻ, 1910, Վիեննա, էջ 70—71 եւ ԻԳ. ու ԻԸ.:

1968-ին ձեռագիրս այլ գրչագիրներու հետ Թաւրիզի Աղբայրին Առաջնորդարանէն փոխադրեցինք Մելիք-Թանգեան Թանգարանը:

Աւետարանիս էջերուն ստորին լուսանցքներուն վրայ նշանակուած են Համարարբառի մանրատառ համարանիշերը:

Կը բովանդակէ.

- 1.— ԹՂ. 5բ—6ա.— Ամուլնի Աղեկսանդրացւոյ:
- 2.— ԹՂ. 6բ—10ա.— Կանոնք:
- 3.— ԹՂ. 12ա—20բ.— Պատկերներ:
- 4.— ԹՂ. 23ա—113բ.— Աւետարան ըստ Մատթէոսի:
- 5.— ԹՂ. 115ա—173բ.— Աւետարան ըստ Մարկոսի:
- 6.— ԹՂ. 175ա—268բ.— Աւետարան ըստ Ղուկասու:
- 7.— ԹՂ. 270ա—338բ.— Աւետարան ըստ Յովհաննու:
- 8.— ԹՂ. 339ա—348բ.— Յիշատակարանք:
- 9.— Ցանկ եւ նախաբերութիւններ չկան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— ԹՂ. 5ա.— Միջակ բոլորգիրով եւ այլ գրչէ, սեւ թանաքով գրուած, աւելի ուշ ժամանակի մէջ:

«Ձառաջին եւ յետին կազմողս սուրբ աւետարանիս սուտանուն Յուսեփի արեղայիս: Կազմեցի սուրբ աւետարանս ի վայելումն Խոնա Միրազին, իւր հաւերն եւ եղբարն եւ իւր կողակցին եւ զաւակացն: Եւ Տէր Յոսնեային եւ իւր հոգոյն, եւ յամենայն ժողովրդեանս քաղաքիս, խոճենացն եւ խաթունացն եւ տղոցն, մեծի եւ փոքու առհասարակ. ամէն:

Ով դաս քիչից. որք հանդիպիք ի սմա կարդալով կամ անիրականելով յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զժողովուրդն, զերեցն, զմեղապալս կազմողս: Եւ միով բերանով Աստուած ողորմի ասացէք եւ մեր յիշեցելոցս, եւ ձեր յիշողացդ առհասարակ ողորմեսցի, ամէն:

Ի ԹՎ. Հայոց ՊՂԷ (1448) կազմեցօ»:

ԾԱՆՈԹ.— Ընդդռնուած տողը կարմիր թանաքով գրուած է :
Յիշատակարանս անձանօթ է եղած Լ. Ս. Խաչիկեանին, որուն համար
ալ ներատուած է յի. ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇՄԱՍԿԱՆ-
ՐԱՆՆԵՐ անուն զործին Ա. Մաս, 1401—1450 թթ. հատորին մէջ,
1955, Երեւան :

2.— Թղ. 6ա.— Տէր Յիսուս ողորմեա պարտաւեղ¹ գրչի թո-
րոսի ամէն եւ յիշողացտ. ամեն :

3.— Թղ. 10ա.— Անվարժ գրչէ, սեւ թանաքով գրուած .
Յիշատակ գրեցաւ ի ի (կրկնուած) սուրբ Աւետարանս անուն
տարայժամ խասակաւ աւուրց Շնորհարի Քրիստոս փոխեալ :

4.— Թղ. 10բ.— Բոլորգիր, սեւ թանաքով եւ այլ գրչէ .
Ոյ դասք լուսերամից եւ դասք քահանայից : Յիշեցէք ի մաքրա-
փայլ յաղաւթն ձեր, եւ հաւատարիմ ժողովուրդք, որ կայք առաջի
սուրբ սեղանոյս եւ աւետարանիս, հայեցեցէք ի Քրիստոսէ առողջու-
թիւն եւ մեղաց թողութիւն . յիշեցէք զսլր. զԱղլուղէն, եւ զԾնաւղս
իւր Զաքարէն եւ զմայրն իւր զՍորղան, Վահրամն եւ զանդրանիկ զոր-
դին իւր զՄուղուլթայն . յիշողքդ աւրհնեալ լիջիք ի Քրիստոսէ, եւ յա-
մէն տաւնի ա. ժամ առնեն պր. Աղբուղին եւ ինքն Քրիստոս զձեզ յիշէ
իւր յարքայութիւնն, ամէն : Տէր Աստուած :

5.— Թղ. 85ա.— Սեւ մատիտով, շեղագիր .

Յ. Գ. Ռուբինա Մ. Թանգեան Գրիգորեան, 1946 XII 2, Թաւ-
րիզ, IRAN.

Թղ. 110բ.— Յ. Գ. Ռուբինա Մեկիւթ-Թանգեան, 1946 XII 2,
Թաւրիզ, Իրան :

ԾնԹ.— Ռուբինա Մեկիւթ-Թանգեանը Տ. Ներսէս Արքեպս. Մե-
կիւթ-Թանգեանի եղբոր՝ Սիմոնի տիկինն էր, որ իր գաւակներով կը
րնակէր Առաջնորդարանին մէջ :

6.— Թղ. 173բ.— ա.— Տէր Յիսուս ողորմեա մեղապարտ գրչի
թորոս Սարկաւադ, ամէն :

բ.— Այլ գրչէ եւ բոլորգիր.—

Քրիստոս Աստուած քոց սրբոց Աւետարանչաց բարեխաւու-
թեամբ ողորմեայ Աղառչահին եւ կենակցին իւրոյ Գաւհար տիկնայ
եւ եղբար նորին սիր Ստեփաննայ եւ Առաքելին : Վասնցի բազում
ինամբ կրեցին ի վերայ մեր. խնամակալն Աստուած ազատեսցէ զհոգի
սոցա, յամենայն մեղաց եւ դատեսցէ ընդ հրեշտակս : Ազատողին մե-
րոյ Քրիստոսի Աստուծոյ մայրէն է փառք, իշխանութիւն եւ պատիւ,
այժմ եւ յաւիտեան :

¹ Ամառեան մոռցած է ամեջ քառը :

7.— ԹՊ. 173թ.— Թերափարժ զրչէ, շեղադիր մեծատառ, սեւ թանաքով.

Քրիստոս Աստուած Երեստես քո սուրբ աւետարանչացն բարեխաւսութեամբ պահեալ զՈվաննս, Նազարէթի (Նաւքարէ) պարոն Ոսոփին որ խոստացել է տարին մին մամ: Յուր որ զնայ Քրիստոսի աղաթնն հետն լինի, յիւր մեղաց թողութիւն առնէ: ՌՆԳ. (1954) (Աճառեան՝ թուականն մոռցած է):

8.— ԹՊ. 268թ.— Մանր բոլորդիրով եւ կինամոնադոյն թանաքով.

Տէր Երեստ ողորմեա մեղապարտ աշխատողի Թորոս Սրկի. ամէն:

9.— ԹՊ. 268թ.— Մեծատառ բոլորդիր, սեւ թանաքով (բուն գրիչէն).

Սրբոց աւետարանչացն բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեա ինձ մեղապարտ գծողին Մեր քահանայի եւ ծնողաց իմոց եւ ազգականաց. յիշեսցիք զաւակն իմ զՄարգարէ եւ գեղբաւր որդին զԹակոր, եւս առաւել զՇնորհիւր որ բազում աշխատանք կրեաց ի վերայ մեր. ազատեաց է մեղաց եւ ծնողաց եւ ազգականաց թողութիւն շնորհեալ (շնորհեացէ) Քրիստոս Աստուած, ամէն:

10.— ԹՊ. 270ա.— Անփարժ գրչէ, սեւ թանաքով եւ բոլորդիրով.

Քարեխաւսութեամբ սուրբ աւետարանչացն: Քրիստոս Աստուած, ողորմի Եակոր փարդապետին. ամէն: Եւ Մարչային, ամէն, եւ յիշի, եղիցի:

11.— ԹՊ. 333թ.— Կինամոնադոյն թանաքով եւ մտնր բոլորդիրով.

Տէր Երեստ ողորմեա մեղապարտ գրչի Թորոսի, ամէն (Աճառեան՝ չունի):

12.— ԹՊ. 339ա—342ա.— Մեծատառ բոլորդիրով եւ սեւ թանաքով.

Սորին բարեխաւսութեամբ Տէր Երեստ, ողորմեացի գրողի սորա Մերի քահանայի եւ ծնողաց իմոց եւ զաւակաց եւ ազգականաց իմոց եւ աւտարաց առհասարակ ամենայն հաւատացեւոց, ամէն:

Եւս առաւել ողորմեացի եւ ընդ երկայն աւուրս արասցէ զՍտեփաննոս եւ զծնողս սորա արքայութեանն արժանի արասցէ:

Աստանաւ իրաւապէս հատուցուք փառս ի սկզբան. եւ որ ընդ անըսկզբան. եւսակի եւ եղական եւ եւսփափազ փառաւորեալ սրբոյ անդուգական երրորդութեանն. նմա փառք յաւիտեանս, ամէն: Այսմ

անծայրածաւալ ծովէս բարժանեալ, վտակք աստուածային դէտողն, առ ի յարբուցումն դեղեցկաչէն բուրաստանին:

Ուռեղելով զստեղնայսն փթթինազարդ ծաղկանց: Կենսացուցանել զսրբասիրաց անձինս: Ո՛վ նորագոյն հրաշիցս եւ յաւետարաղ ձայնացս, քառահոլով ընթերակայքն, բողբոջ արփիազարդ դրամատին. ճեմս առեալ կարմրելիւն եւ լուսատեսիլ մարգրտափայլ բեղնաւորեալ ծիրանակիր թազաւորականաւ: Զհոլանս երկնի եւ ծովու բերելով զտիպ, ըստ գարնանային ծաղկաթաղ գունատեսիլ. երին երին բերելով զհոտ անուշութեան, որպէս վարդն յաւրինակ արեամբ նահատակեցոցն. եւ համասպարամն սպիտակագգեստ. դմարդարտի առեալ զնմանութիւն. ի դարդ պայծառութեան կուսանացն: Զնոյն եւ երկնապունակ ծովանմանն. նարդոս. դագդի ազգի հանդէս նահատակութեան. դառաքինեացն բերելով զկերպ: Յորս ընդ ոլորտս տիեզերաց շնդեալ զհոտ անուշահոտ յոգիս մտեցոցն ի հարսանիս երկնաւոր փեալին: Ապա եւ զի՛նչ ծիրանակիրն մանուշակ զթազաւորականն զդեցեալ ըզգոյն: բերեալ դաւրինակ երկնաւորին. մինն միայն ընչրեալ եւ գատեալ բոլորաստեղն բաղձանաւք. ոչ ոք նման նմա: Դի խաչին կամաւ մատուցեալ զանձն պատարաւ կենդանոյն հաւր: Եւ դիրկս արկեալ համագումար երկոտասանն առաքելականն գնդի. ընդ չորս բարժանեալ յաղակս քարոզութեան չորս անգլին աշխարհիս. երիս, երիս քառանգլինակ գերբորդութիւնն եղեալ պահապան. առաքելով զնոսս երկուս երկուս. վեցեակ թուով. ընդ վեց դարու կենցաղոյս. առ ի մերժել զորոմն ապականապիր բանսարկուին: Ապա եղեալ դրուակ եւ մատանի. ի վերա ալլոց եւս ութեակ թուոցն. զՄաթթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս. որք քառիւք վտակաւք. աւժընդակեալ հոգւոյն ազդամբ. հնչեցուցանեն զփողոս. ի լսելիս ընթանուր բնաւիս. առաքելական բայիւք: Մատթէոս գմարդեղութեանն ցուցանելով զկերպ: Որպէս վարդն բազմաթերթ. կարմրագունակ անուշահոտ, զմարդկան դաժանութիւնս հոլովէ. լսելով ի քիմս անուշահոտ. զաստուածային տրնաւրէնութեանն զգիտութիւն: Ապա եւ համասպարամն. Մարկոս, թողեալ զներկայիցս բազմաստեղնութիւն առիւծաբար յարձակեալ ի վերա դժբողին. կորդեալ եհան զմեղ ի մեղսաթաւալ. ոյրջացեալ մեքենայից նորայ. լուսերանգ մարգրտափայլ սպիտակագգեստ աւազանին շնորհաւք. դարդարեալ խառնեաց զմեղ ի յերամս աստուածագգեստ լուսեղէն հրակերպիցն: Զի՛նչ եւ երկնազունակ ծովանմանն նարդոս. զղուկասու առեալ զկերպ. յաղագս հոտոյն անբաւութեան. որ զնաւորդոս հանդերձ ծովային կենդանեաւք առհասարակ միահաղոյն զհոտ իւր. շնդեալ թմբրեցուցանէ զբնաւս առ ի լուսաւորել զբոլորս իւր առակախաւս աստուածային վրտակքն որպէս եղն ամուլաց տրոհն:

լով արաւրաւ աւետարանին առ ի խել զիտու մեղացն . եւ կակղացու-
ցանել ըստ իւրն կենաց . առ ի յընդունել զյուծ տպաշխարութեան : Ո՛վ
սլատուական անուշահոտ լիւնջ մանուշակի . ծիրանակիր թագաւո-
րութեանդ Յովհաննէս . որ զատեալ յարժանեցար ՚ի յոքունց ընկե-
րացդ . կրելով ՚ի չեղ զթաղաւորն երկնաւոր . եւ որպէս արծիւ սլաթեւ
բարձրացեալ ի վերոյ փան դերկինս զծնունդ հայրական առանձնակի
ընթացեալ . հնչեցուցեր ՚ի լսելիս համասեռիցս ծառիկելով զլրիպողին
դաւանութիւն . յորս եւ դու ճողովրեցար ՚ի սայթաքմանէ զնացից
նորա . անաղտ պահելով զկուսութեան առաքաստն . հրաւիրեցեր զմեզ
լինել ընդ ուղղեկից . արձանակդ հասանելով լուսաւոր ճանապարհաւ .
առաւուտել ընդ մեաւք հանդերձ առ արեգակն . . .

— Փառերգութիւն չորս Աւետարանիչներու մասին .

Թղ. 339բ-341բ — «... Հանդերձ առ արեգակն արդարութեան ,
միածին որդին Աստուծոյ , առ որ անձկացեալ եմք ունելով դքեզ քա-
րիխաւս Ծերի դժոյղ սորա եւ ծնողաց իմոց . ամէն :

Ծնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի .
դեղեցիկ աստուածային բուրաստանս . (Թղ. 342ա) յորում ծա-
ռատունկք քառադէմք , բողբոջք սաղարթ առեալ ըստ դարնանային
եղանակացն չարաբերութեան . բերելով յինքեանս , զոստն ուղէշար-
ձակ , զտերեւն բոցափայլ , զծաղիկն բիւրազան , զպտուղն քաղցրա-
համ եւ անուշահոտ , տալով որդիոց մարդկան , ի վայելումն կեն-
ցաղավարութեանս :

Յամի , հարիւրից եւ թնանց եւ տասանց վեցից , տարբերութեան
Հայոց տումարիս , թիւ . ԶԿ . (700+60+551=1311) , եւ յոգնամեղ եւ
տառապեալ զրիչս Ծեր քահանա , լանկ հանեալ աւարտեցի զսա լա-
յում ջանիւ . եւ մեծաւ աշխատութեամբ , յամենալաւ եւ ի ստոյգ աւ-
րինակէ . զոր ՚ի բաղմաց վկայեալ , ստացալ զսա գանձ անուպակա՛ն լեռ-
կինս , ուր ոչ դոզ մերձենալ , եւ ոչ ցեց ապականէ : Ի վայելումն ման-
կանց եկեղեցւոյ նոր Սիոնի : Յամս աստուածապատիւ Տեառն Կոս-
տընդի Հայոց Կաթողիկոսի (Գ . Կեսարացի , 1307—1322) :

13 .— Թղ. 342բ .— Թիւ 1-ի զրիչէն , բուրգիւրով , մէկ սինա-
կի մէջ , սեւ թանաքով .

Ո՛վ դասք քահանայից , յորժամ ընթեռնուք զգուրբ աւետարանս
լիշեղէք ի սուրբ աղաւթս ձեր զանախժան զսուտանուն Եպիսկոպոս Ե-
րուսաղիմայ յՏէր Աբրահամ Մսրցին , որ հանդիպեցալ ի Դավիթդ , ի
Թուրի Հայոց մեծաց ՊՂԳ . (1444) յաւգոստոս Է . շիշուղքս Քրիստոս
յիշէ :

ԾԱՆՈԹ.— Հմտ. Լ. Ս. Խաչիկեանի ԺԵ. ԴԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ Գործը, էջ 577, արտատպուած Հ. Աճառեանի ԹՈՒՐԻԶԻ ՅՈՒՅԱԿ-ԷՆ (էջ 73)։ Աբրահամ Եպս. Մարցին, Միաբան Ս. Երուսաղէմի, նուիրակութեան պաշտօնով Թաւրիզ կը մեկնի 1444-ին, եւ 1445-ին ալ Արդնի «Երկայնընկուղեաց» վրանքը։ Իր մասին յիշատակութիւն կայ նաեւ Երուսաղէմի Ս. Յակովբեանց Վանքի թիւ 25 եւ 1853 ձեռագիրներու յիշատակարաններուն մէջ (Հմտ. Մկրտիչ Եպս. Աղաւնունիի՝ ՄԻԱԲԱՆՔ ԵՒ ԱՅՅԵԼՈՒՔ ՀԱՅ ԵՐՈՒՄԱՂԱՅԻՆ, էջ 3)։

14.— Թղ. 342բ—343ա.— Թիւ 2-ի գրիչին կողմէ, բարդեր, մեծատառ եւ չորս սինալներու մէջ։

Կարողութեամբն ամենակային Աստուծոյ Հայր անմահի, որդոյ միածնի եւ ազատիչ սուրբ Հոգոյն, եղեւ Հրաման յԱրարչէն ամենեւորն որ ետ շնորհ դարձման ի յանցաւոր աշխարհէս. եւ ի մեղաց դարձումն, եւ ճանաչել զճանստարհս արդարութեան Խոսքովայ որ կոչեցեալն է Մամայխաթուն, ետ ի Հայայ արդեանց իւրոց Ճ.ԴԿ. (100+(4×60=240)=340), ի նուէր սուրբ կենսաբեր սրանչեղործ սուրբ Աւետարանիս, որ է սայ բժիշկ Հոգոյ եւ քաւիչ մեղուցելոց։

Բարեխաւսութեամբ սուրբ աւետարանիս եւ սրբոցն Աստուածածնին թողջէ Քրիստոս զյանդանս Մամայխաթունին. ամէն։

Ով դասք լուսեբամից յիշեցէք ի մաքրափայլ եւ մեղսալքաւիչ յաղաթս ձեր զՄամայխաթուն, եւ զծնաւդսն իւր զԽաչիկ եւ զԹանդախիկն։ ՉՍարդիս, աղբրաց Գրիգորիկն, զՅովանէսն, զԹորոսն, զՄկրտիչն, զՀոռոմոսիկն, զԱվան, զԳորդիս, (Թղ. 343ա) եւ զաւագտիկիսն։ ՉՇրվանն եւ զԱւագի մայրն, յիշեալիք ի սուրբ յաղաթս ձեր եւ Քրիստոս զձեզ յիշէ, ամէն։

Ով մանգունք նոր Սիոնի յիշեցէք ի սուրբ պատարագս ձեր Մամայխաթունն, Հաստատ մատուցէք Յայտնութեան Ճրարալլուցին, զՀամբարձմանն, եւ զԱստուածածնի պատարագն անթերի. եւ այս սուրբ Աւետարանիս պինձ եւ ծախս եւ դրաւական ոչ յիշի՞, եւ ով որ յանդգնի կամ ծախել կամ դրաւ կանել կամ բաշխել, ընդ արինաւք դատի. ամէն։

Եւ յայսմ ժամուս կարգեաց Մամայխաթունն զԿոստանդ քահանայ իւրն Հոգեւոր զաւակ եւ ետ Մամայխաթունն զսուրբ աւետարանս ի ձեռն Կոստանդ քահանայի, եւ այլ ոչ ում խաւք եւ դաւէ Հետ այս աւետարանիս, չկայ ոչ որդոյ եւ ոչ դատեր։ Բայց Կոստանդ քահանայն դիտէ, եւ Քրիստոսի փառք ամէն։

³ ԱՅՈՒՆԻՈՒՄ՝ ոչ գիմ։

⁴ ԱՅՈՒՆԻՈՒՄ՝ անպատճառ լիմի եւ ոչ ոք...

15.— Թղ.— 343ա.— ի վրայ, նախորդ յիշատակարանին որպէս շարունակութիւն, սեւ թանաքով եւ մեծատառ բոլորովիւ—չեղազրով, անվարժ գրելէ զրուած է.

Յիշեցէք զԴոստանդն զի աւետարանս նմայ է, հաստատու Յիշեցէք զէլիսաթուն եւ զԳերգի եւ զԼուլուն Յիշեցէք զԴաւիթն եւ զԳրիգորն եւ զմայրն իմ եւ զՈղորուն ի Քրիստոս Աստուած ողորմի ոյ զՈւղլուն յիշե. Յիշեցէք ի Քրիստոս զԴուրգանն, եւ տղայ հասակաւ որ փոխեցաւ ի Քրիստոս զԴուրաթշահն իշեցէք եւ Աստուած ողորմի ասցէ (ասացէք). ամէն տարի Գնդի. $(3 \times 50 = 150) + (4 \times 60 = 240) = 390$ խոստացաւ:

16.— Թղ. 343բ.— Այլ զրիշի մը կողմէ, սեւ թանաքով եւ մեծատառ չեղազիր.

Ոյ դասք լուսերամից յիշեցէք ի մաքրափայլ եւ ի մեղմաքաւիչ յաղթած ձեր զպարոն Դովաշան եւ զամուսին իւր ըզնիզութիւնիւր եւ զԱստուածատուր զաւակն իւր Ուսուֆշան եւ զհանդուցեալ ծնողս իւր զՍաշնամ (զՍօշնամ) եւ զԻլլատ իսթուն, եւ ի զաթմեկիքի ծնողայն Մինակեցն եւ Միրաթին Թ. (իսթուն): Ոյ հաւատացեալ Ժողովուրդ, ոյ հանդիպիր, իւրեանց մեղացն թողութիւն խնդրէք եւ Աստուած զձերնոյ (զձերն ոչ) յիշէ:

17.— Թղ. 342բ.— Մանր բոլորզիր, սեւ թանաքով, ճիշդ ներքեւը Արրահամ Մարցի Եպս. ի յիշատակարանին, բաւական վարժ գրելէ.

Ոյ դասք քահանայից, յորժամ ընթեռնուք զսուրբ աւետարանս յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զանարժան զսուտ⁵ Եպիսկոպոս Ալրնջեցի, զՏէր Ազար Ապրակունեցի, որ հանդիպեցայ ի Թաւրիչէզ, ի Թվ. ՋնԵ. (1506). ոյ կարդայ Աստուած ողորմի ասէ մեզի եւ նորա:

18.— Թղ. 342բ.— Էթին Ներքեւ, 5 տող միասին, նստրգիր—չեղազիր, սեւ թանաքով, վարժ գրելէ մը.

Ոյ դասք լուսերամից յիշեցէք ի մաքրափայլ եւ ի մեղմաքաւիչ յաղաւթս ձեր զլուսեղէնն եւ զկենակիցն իւր զԹանգիսթունն, եւ զիւրենց զաւակն զՋիհանմեկիքն եւ զԴուրատանն. եւ խնդրեցէք սոցայ մեղացս թողութիւն եւ Քրիստոս զձեզ յիշէ իւր Թողութիւն եւ ձեզ փոխարէն տացէ յիւր յարքայութենէն ամէն: Քրիստոս, Աստուած:

19.— Թղ. 343բ.— Թղ. 342բ.— գրելը ըլլար կարծէք, մեծատառ բոլորզիրով, կիսամոնապոյն, ամբողջ էջին վրայ զրուած է հետեւեալը.

Ոյ դասք լուսերայից, յիշեցէք ի մաքրափայլ եւ ի մեղմաքաւիչ յաղաւթս ձեր զՄանախաթուն եւ զԾնաւղսն իւր զՎարդն եւ

⁵ Անտեան՝ զաւտեան:

զկանանց տիկինն զԶաւայանն եւ զծնաւդսն իւր եւ դուք յիշեալ յԻֆիմի Գրիստոս, ամէն եւ յիշեալ զսիր Ստէֆն յաղաւթս ձեր, եւ զԶաւայանն, եւ զՍիրախաթունն եւ զծնաւդսն իւր, ամէն:

Ով դասք լուսերամից յիշեալք ի մաքրափայլ եւ ի մեղսաբաւ ինչ յաղաւթս ձեր զԱւաքն եւ զծնաւդսն իւր զԽաչիկ քահանայն եւ զԵլէն (յիշէն) տիկինն: Եւ եկն պարոն Աւաքն իւր կաման եւ եմոտ միաբան սուրբ Աւետարանիս եւ ի հալալ արդեանց խոստացաւ ի յամէն տարի Բ:ԴԿ. $(2 \times (4 \times 60 = 240) = 480)$ ձիթաղին հասցնեմ կաթողութեամբն Աստուծոյ:

Երեսնայնք եւ զՀովսեփեայն եւ զծնաւդսն իւր, եւ զկաղկաղարդ (զձաղկաղարդ) զղաւկն իւր զՅովանէս, քաղմեայտամանակեայ:

20.— Թղ. 343բ.— Մի ալլ գրիչ աւելցուցած է.

Ով դասք լուսերամից յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զԱմելիքն եւ զԽանմելիքն, որ միայրան կոչեցաւ միայրան սուրբ Աւետարանիս:

21.— Թղ. 344ա.— Սեւ թանաքով, անվարժ գրիչէ, շեղագիր գրուած.

Էս Խոճայ Շահնագար, համեմեցի, տվի սուրբ խաչիկ յաւետարանին, մէկ տքան. վախմ. Աստուած իմ մրատըս տայ:

22.— Թղ. 344ա.— Ալլ գրիչէ, շեղագիր-բոլորգիր, սեւ թանաքով եւ թերավարժ անձէ մը.

Ով դասք լուսեղէք երամիցք, յիշեցէք փաքափայլ եւ մեղսաբաւիչս յաղաւթս Ներրախադույս եւ զծնաւդսն իւր: Եւ Յովանէս եւ Որհնաթունս եւ զեղարն իւր զնաջաղինս, եւ զիւր դասակս Շաղիլայն, եւ զԼուրարաքչախս ծառայս Աւետարանիմս Աստուծոյ ծառայ սիրած աւետարանիս եւ զՄկրտիչս յիշեցէք ի Գրիստոս, Բախտղույս, ամէն տարի Ժ:ԴԿ. $(10 + (4 \times 60 = 240) = 250)$ տամ Շամշտտինս: Ի՞նչ. $(50 + (4 \times 60 = 240) = 290)$ ողջ տայ ի սուրբ Աւետարան:

23.— Թղ. 344ա.— Ալլ գրիչէ, կենամոնաղոյն, շեղագիր.

Ով դասք լուսերամից յիշեցէք զՅոհանէսս եւ զկենակիցին իւր Սուրաթխաթունն եւ զուսական իւր զՍանվէլն եւ զՍանվէլն եւ զիւր կենակիցն զԽէրխաթունն, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, եւ զՇոնոֆոր տիկինն ալլ յիշեցէք:

24.— Թղ. 344ա.— Ալլ գրիչէ, կենամոնաղոյն, նախորդէն տւելի վարժ անձի գրութիւն.

Ով դասք լուսերամից յիշեցէք ի մաքրափայլ եւ ի մեղսաբաւիչ յաղօթս ձեր Ստեփան եւ զկենակիցն իւր զՂարիպխաթունն եւ զծնողս իւր զԽաչիկն եւ զՆազմելիքն, զԴանիէլն եւ զԴոնարն եւ զհարազատ որդիքն իւր: Եւ զԱմիրուսն եւ զՄէլիքայն եւ Գրիստոս զձեզ յիշէ:

25.— ԹՊ. 344ա.— Սեւ Թանաքով, չեղադիր, նախորդէն տարբեր զրիչէ՛.

Ով դասը լուսեւրամից որ կար առ ի սուրբ սեղանուս եւ սուրբ աւետարանիս, յիշեցէք ի մաքրապիայլ աղաւթս ձեր ներաւտին եւ զծնոցս իւր պարոն Թուշերն, Մամալտիկին, եւ պարոն Աստուածայտուն եւ Աւետիորն ի յաղաւթս ձեր. յիշողն աւրինէ՛ զձեզ :

26.— ԹՊ. 344բ.— Սեւ եւ կարմիր Թանաքով, բոլորգիր, վարժ զրիչի գործ .

Ով դաս լուսեւրամից յիշեցէք ի մեղսայբաւիչ յաղաւթս ձեր եւ ի մաքրապիայլ, զիս զանարժան ծառայս Աստուծոյ զԽութլուն ու զիւր դեռայրուս նորածին տղայն զԱմիր Սարգիսն եւ զիւր Հայրն եւ զմայրն եւ միարանեցայ սուրբ աւետարանիս որ յամեն տարի անխափան տամ Ա. լրտ. (լիտր) ձէթ յեկեղեցին : Ով որ զայս գիրս ջնջէ, ինքն ջնջի ի դպրութիւնէ կենացն : Եւ զիս զանպիտան եւ զանարժան ծառայս Աստուծոյ զՏէր Զաքարիէս եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի, ամէն, ամէն . . . :

Ի Թվ. Հայոց ԶՀԳ. (1324), ի Համարարձման Տաւնիս :

27.— ԹՊ. 344բ.— Միայն սեւ Թանաքով, նախորդէն մեծ բոլորգիրով եւ վարժ գրիչէ՛.

Ով դասը լուսեւրամից, յիշեցէք ի մաքրապիայլ եւ ի մեղսաբաւիչ յաղաւթս ձեր զպարոն Յակոբն եւ զծնաւզսն իւր զՍարգիսն եւ զՄամերն եւ զկենակիցն իւր զՍէլիք եւ զծնաւզսն իւր զԴաւիթն եւ զԿիրակաթունն եւ զծնաւզսն իւր, եւ յամենայն տարի բ. պատարագ տան մեծ տաւներոյն, Ա. Յակոբայ եւ ա. պատարագ Մեղէքին եւ Քրիստոս զձեզ յիշէ ով դասք քահանայից⁶ :

28.— ԹՊ. 344բ.— Սեւ Թանաքով, անվարժ զրիչէ, մեծատառ չեղագիրով .

Յակոբն եւ Մեկիքիսթուն ԲՃ. ԴԿ. (200+(4×60=240)=460) յիշատակ տվին ի յաւետարտնս եւ յեկեղեցին որ է Աստուածածին, վասն երուսաղեմայ ճանապարհին որ Հասաւ ի Քրիստոս, տէրն մեր :

29.— ԹՊ. 345ա.— Սեւ Թանաքով, բոլորգիր, բաւական վարժ զրիչէ՛.

Ով դասը քահանայից եւ հաւատարիմ ժողովուրդք որ կացեալ կայք առջի սուրբ սեղանոյն եւ առաջի սուրբ աւետարանիս, ասացէք Աստուած ողորմի եւ յիշեցէք յաղաւթս ձեր զՀոռոմշահն եւ զկենակիցն իւր զՄամալտիսթունն. եւ զիւրենց զաւակն զԱմիրշահն : Եւ զՄամալտիսթունի մայրն զՆազիսթունն, որ է Գրիգորին եւ Գոհար—

⁶ Ամստեան մոռցած է ընդգծուած բառերը :

նազիրն դուստրն եւ Քրիստոսս զձեզ յիշէ յիւր յարքայութիւնն եւ առնին սոցայ յամէն տարի: Դ: Ժամ: Բ: արարել ԵՇ: , Մամայխաթունին եւ Ամիրչին, եւ Բ: Քրիստոսի Յարութեանն: Ե: Հոռոմչին եւ: Ա: Նալխաթունին, եւ յուր որ այս աւետարանս լինի, անպատճառ յիշեն եւ զԴ: Ժամն առնեն: (Աճառեան՝ Կ: Դ: Ժամն առնեն):

30.— ԹՊ. 345 ա.— Սեւ թանաքով, անվարժ գրելէ, նախորդէն տարբեր, չեղադիր:

Ով դասք Քախանայից եւ խաւատարիմ ժողովուրդք որ կաց-
եալ կայք առաջի սուրբ սեղանուն եւ սուրբ աւետարանիս եւ յնշեցէք
զուարթն իմարկրծելն եւ զծնոցս իւր Զաքարիեն եւ իմորիշեն եւ Սար-
գաթմիչն ի աղաթս ձեր եւ Աստուած զձեզ յիշէ եւ զԱմգայթուն
(Շամչայխաթուն) յիշեցէք աղաթս ձեր: ԶՇախերն եւ կենայկիցն Ա-
զիրն եւ զաւակն իւր զՄամայտիկին եւ զՇախն եւ զԱխաթունն եւ
Աստուած զձեզ յիշէ:

31.— ԹՊ. 345ա.— Ուսե թանաքով, չեղադիր, թերավարժ
գրելէ:

Ով դասք լուսերամից յիշեցէք ի մաքրայփայլ եւ ի մեղաց⁷
քաւիչ յաղաւթս ձեր զԴամուրն եւ զծնաւղսն իւր զԱստուածատուրն
եւ զմայրն իւր Եմնայխաթուն եւ զեղբայրն իւր թուխթամուրն եւ
զվաղմանեալ կապակիցն իւր զԹաւրէժմիչին: Յիշելոցք եւ իշողայդ
ողորմեսցի Քրիստոսս եւ շնորհեսցէ ձեզ ի յիւր յողորմութենէն, ամէն:

32.— ԹՊ. 345բ.— Այլեւայլ գրիչներէ, սեւ թանաքով, չեղա-
դիր-բոլորդիր դրուած:

ա.— Ով դասք լուսերամից, յիշեցէք ի մաքրայփայլ եւ ի մեղ-
սայքաւիչ աղաւթս ձեր զՄիննան եւ զիւր կենայկիցն, զՄինայն եւ
յիշողն աւրհնի Աստուծոյ եւ ի տարին: Ե: լիար⁸ ձէթ յիշատակ:

բ.— Ով դասք լուսերամից յիշեցէք ի մաքրայփայլ եւ ի մեղ-
սայքաւիչ աղաւթս ձեր զԽանգուցեալ ի Քրիստոսս զՇնոխորն, Ղիմաթն
եւ զծնողն իւր զԽոռոմչայն եւ զկենայկիցն իւր զԴուլաթն եւ զեղբարն
իւր զՏէր Տէրն յիշեցէք ի Քրիստոսս եւ ի տարին աւր մի զաւադ Խիզ-
չարաթին պատարապն մատուցանեն եւ որ քաղանայ (քահանայ) որ
աւետարանիս տեր լինի եւ թախսիր արնէ ի մատուցանելն դատած եւ
կապած լինի ի Քրիստոսս:

գ.— Ով դասք լուսերամից, յիշեցէք ի մաքրայփայլ եւ ի մեղսայ-
քաւիչ յաղաւթս ձեր զԽիւստամն սառանճեւ (սառանճն) ու զիւր զկե-
նայկիցն Զիկտիլ (Զիկտիլ⁹) եւ զիւրն զծնաւղսն, յամեն տարի Բ:

⁷ Աճառեան՝ մեղայ քաւիչ:

⁸ Աճառեան՝ լիար:

պատարագ է : Տաւնին ու դասկին , ա . ' յմըստամին : Ա . Իկտիշին Աստուած յիշէ զիշատակսն (զիշողսն) :

դ . Յիշեցեք ի Քրիստոս զՄատառն⁹ եւ զծնողն իւր զԱլիզտիկին ի Քրիստոս եւ զիշիշուկն եւ զծնողսն իւր զԴաննի եւ զաղբրացն ի Քրիստոս եւ յիշողն աւրհնեալ Աստուծոյ , եւ զԱղմուրն եւ զծնողսն իւր :

ե . — Ով դասք լուսեւրամից յիշեցեք ի մաքրաշփայլ աղաւթս ձեր զՇնորհոր տիկինն եւ զծնաւդս իւր Ստեփանոսն եւ զմայրն իւր Սամայխաթունն ի աղաւթս ձեր :

զ . — Ով դասք լուսեւրամից յիշէք յաղաւթս ձեր , զՍիրունն եւ զկողակիցն իւր զՀայոցն եւ զաւակն իւր զՇնորհոր տիկինն եւ զգրոցն եւ զԳրիգորն եւ Աստուած զձեզ յիշէ :

33 . — Թղ . 346ա . — Այլեւայլ դրիշներու կողմէ , սեւ թանաքով , շեղադիր-բոլորդիր , անյարժ գրիշներ՝ զանազան տեսակի զիրերով .

ա . — Ով Դասք լուսեւրամից յիշեցէք ի մաքրաշփայլ աղաւթս ձեր զպարոն Ըսանոսն եւ կենայկիցն իւր զՓոքոտիկին եւ զաւակն իւր Շնորհաթիկինն (Շնորհաթիկինն¹⁰) եւ Շամխաթունն եւ զՊատրն եւ Շամչատին եւ պարոն զԱլիքինշէն¹¹ եւ զիւր կենակիցն Աւագխաթունն եւ Ուրառաշայն եւ իմութլումեիքն եւ զծնողսն Աւագխաթունին , պարոն Լուսերն , կենակիցն իւր Թամթախաթունն , եւս Արարմեիքն եւ Արսամեիքն որ կոչեցան միաշրան սուրբ Աւետարանիս եւ Մերունն եւ Ասիւն¹² . յիշողն աւրհնի ի սուրբ տետարանիս Գիրախաթունն¹³ եւ Պախարատինն , Մամախաթունն :

բ . — Ով դասք լուսեւրամից յիշեցէք ի մաքրաշփայլ եւ ի մեղոսաշփախ յաղաւթս ձեր զՓահլաւան Էվատշայն եւ զծնողսն իւր զՀունարն եւ զԱւագտիկինն եւ զկենակիցն իւր զՄաթախաթունն¹³ եւ զծնողսն իւր որ միարանեցան աւետարանիս եւ Քրիստոս զձեզ յիշէ յիւր արքայութիւնն :

Երիշեցէք եւ զՄիսիթար եւ զծնողսն իւր Ռ . Ղեղն եւ Քրիստոս զձեզ յիշէ :

դ . Ով դասք լուսեւրամից յիշեցէք ի մաքրաշփայլ աղաւթս ձեր զպարոն Արմանոսն եւ զԱւետարտիկինն եւ պարոն Սարգիսն , որ կոչի Ասլան եւ Ալի Թուրքմանն , որ Աւետարանիս միաշրան մտան , ով որ դաւետարանս կարդայ յիշէ ի Քրիստոս եւ յիշողն աւրհնի Աստուծոյ :

⁹ Ահառեամ՝ գմտոնաւմ :

¹⁰ Ահառեամ՝ Շամխիմշեմ :

¹¹ Ահառեամ՝ Ասիւն :

¹² Ահառեամ՝ Սիրայիսթունն :

¹³ Ահառեամ՝ զՄաքրաշփաթունն :

դ. — Ուլ դասք լուսերամից յիշեցեք ի աղաւթս ձեր Արջուկն եւ կենայկիցն իւր փոքրաթիկինն եւ զաւակն իւր զԽետիկն¹⁴ եւ Կիրակոսն, Լուսերն եւ Աստրշայն եւ Նորտիկինն, Խաչատուրն, Շամշխատունն եւ Շամշայն եւ¹⁵... (անընթեռնելի) ... Եւ Խեղման ... Ուսխաթ ... ի Քրիստոս :

34. — Թղ. 346ր. — Ձորս դրիչներու կողմէ, ալլեւայլ տեսակի դիրերով, աեւ թանաքով: Առաջին երկուքը անյարժ, վերջին երկուքը վարժ դրիչներ են: Ա. երկուքը՝ շեղադիր, իսկ Բ. երկուքը՝ բոլորդիր:

ա. — Ուլ դասք եւ լուսերամից, ի մաքրայնփայլ յաղաւթս ձեր եւ ի մեղաց քաւիչ¹⁶ յաղաւթս ձեր: զՏիրայմերս Շնոք եւ զԽոյանդս եւ զԽոջայ փրշուսենն, քանի որ կենդանի լինիմք Աւետարանիս, ծառայ լինիմք, Խ. Դ.կ. (50+(4×60=240)=290) տամք¹⁷ լուս եւ ձեթ ալլին, Հաւատամք¹⁸:

բ. — Խոնարհեցոյ Տէր զուսկն քո հոգիս մեռեալ է, Տէր կեցոյ ի տանճանացն զիս զերծոյ, արքայութեանդ արժանացոյ, զի ես փափաքիս¹⁹ ձայնի քո թէ եկ որդի ի փառս քո: Տէր Յիսուս Քրիստոս քո սուրբ դայրստեանն յարձխաւսութեամբ ի փոխումն մաւր քո եւ կուսի քաղցրութեամբ հայեաց²⁰ ի ծառայս քո որ եմ փափաք աստուածութեան ձայն²¹ ի Քրիստոս թազաւորէ թողեալ լիցին քեզ մեղք քո, որպէս քանանացուն եւ մաքսաւորին, նոյնպէս թողցին յանցանք Ձորի՛՛մ մէկըին, էլիսթունին²² եւ Որդուշային աղաչանաւքս եւ բարձխաւսութեամբ սուրբ Աստուածածնին:

գ. — Յիշեալ զԱրարիչն յաստուածատուր հոգոյդ առնել պատարագ: Ընդ մութն է՞ր խարիս զնաս, երբ զհոգիդ ունիս քեզ ճրագ, զմարմինդ քանի սիրես, ու իւրն առնուս դու փափաք. զմեղաց աղտն ի րաց ջնջեալ որ կոպիկ պսակ քեզ ու թագ: Ուլ պատուելի, դասք լուսերամից, յորժամ ընթեռնոյդ զոուրբ աստուածաշունչ աւետարանս, զԱստեփանոս բանասէրս յաղաւթս յիշեցէք սրտի մտօք, Քրիստոս զձեզ յիշէ իւր բարին:

¹⁴ Անտոնեան՝ զԽետիկն:

¹⁵ Անտոնեան՝ Ազրբացն եւ Խեփումն եւ տայուս Խաթուն յիշեցէք ի Քրիստոս:

¹⁶ Անտոնեան՝ մեղացաբաւիչ:

¹⁷ Անտոնեան՝ զամբ:

¹⁸ Անտոնեան՝ բառս կը պակտի:

¹⁹ Անտոնեան՝ փափաքիմ:

²⁰ Անտոնեան՝ Խայեայ:

²¹ Անտոնեան՝ ձայնի քո քէ քոզեալ...

²² Անտոնեան՝ էլիսթուն:

դ. — Պն — երրորդին (1391)²³, եկն հարուածք յոյժ ահագին, որպէս եղեալն երկրորդ՝ դարին, եւ լինելոց յամբս վերջին: Եւ հաս հրամանն աստուածային, զոր Տէրն դրեայ ի սուրբ տառին: Վասն աւուրն կատարածին, որ կատարի ուրբաթ արին: Զոր անդ մարդկան զործքնն սպառին, յահեղ ձայնէն թագաւորին:

35. — Թղ. 347ա. — Սեւ թանաքով, անվարժ գրիչէ, շեղագիր: Էջին հակառակ կողմէն զրուած է: Մեծ մասը քերուած եւ յետոյ.

ա. — Էս իմանայական, ազատեցի զՓռլադն ի սուրբ խաչիկ աւուրսանին վկայութիւնով:

36. — Թղ. 347բ. — Երկու գրիչներու կողմէ, սեւ թանաքով, Ա. ը վարժ, մեծատառ բոլորգիր. Բ. ը՝ անվարժ, դարձեալ մեծատառ բոլորգիրով:

ա. — Ով դասը լուսերամից յիշեցէք ի մարբախայլ եւ ի մեղասքաւիչ յաղաթս ձեր զպարոն Մկրտիչ եւ զծնողսն իւր զԳրիգոր եւ զԴաւթն²⁴ եւ զԽոսրովն եւ զԴաւրդին զտարածած տղայ մեռեալսն ի Քրիստոս եւ յիշողքտ յիշեալ իշխիք ի Տէր, եւ ով ոք տիրեսցէ սուրբ Աւետարանիս այսմիկ հանապազ զՀամբարձման զսուրբ պատարադն Մկրտչին տայ անըղատ եւ անձանձիր եւ հանապազ յիշեցիք ի սուրբ յաղաթս ձեր եւ Քրիստոս զձեզ յիշէ ի միւսանդամ զալստեանն իւրում ամէն: Եւս առաւել յիշեցիք զԱվագն եւ զծնողսն իւր ամէն:

բ. — Թիշեցիք յաղաթս ձեր զԽոսրովն եւ զծնողսն իւր զԾնողիւր, եւ զմինեքն՝ զՄարեմ, կենակիցն իւր եւ զհայրն իւր զԿիր Միխայլ եւ զմայրն իւր զԿիրայն, զի ողորմեսցի նոցայ Քրիստոս, եւ յիշողքտ յիշեալ իշխիք ի Տէր, ամէն:

37. — Թղ. 348ա. — Նօտրդիր-շեղագիր, սեւ թանաքով, թեւաւարժ գրիչէ.

Էս վանեցի Տէր Ըստեփանոս Ժ. Ռ. ԴԿ. (10.000 + (4 × 60 = 240) = 10.240) սուրբ խաչիկ յաւետարանին տօլի, որ տաճարի տեղն շինեն իարճեն: ԹՎ. յիշատակ իմ հաւը Միխիթարին, իմ մաւր իմանալիչին²⁵, եղբայր՝ Ատոմին, Աստուածայտուրին, Ախիճանին, Գիւրգորին, իմ որդոյ՝ Ատոմին, Աստուած ընդ երկայն աւուրց անէ, ամէն, Հայր:

ԹՎ. Ռ. ԼԴ. էր (1034 + 551 = 1585), Փետրուարի Ժ.: Էն աւրն էր ինչ Ամիրխան բերք զգեցիւն²⁶:

38. — Թղ. 348բ. — Երեք գրիչներու կողմէ, սեւ թանաքով, բոլորգիր, լաւաւանին վարժ գրիչներու կողմէ.

²³ Անառնամ՝ Պն — երկրորդին:

²⁴ Անառնամ՝ գրաւալով:

²⁵ Անառնամ՝ իմանալիչին:

²⁶ Անառնամ՝ բացիւն:

ա. — Երեցեք յաղաթս ձեր զսլարոն Սարգիս եւ զՇնոհոր տիկին յաղաթս ձեր զի միարանեցաք սուրբ աւետարանիս եւ քանի կենդանի յինիմբ²⁷, Հասուցենք յամեն տարի Բ. Դկ. (2+ (4×60=240)=242) : Երեսուկ Ասուտին եւ Լուսերուն :

բ. — Երեցեք ի մաքրափայլ եւ ի մեղսալքաւիչ յաղաթս ձեր զտարածամ տղայ մեռեալն ի Գրիստոս զԱպուտախր որդի Մխիթարայ եւ Գրիստոս զձեզ յիշէ, ամէն : Եւ առաւել յիշեսցիք զԳալիկ եւ զԵրեմիա տարածամ տղայ մեռեալքն²⁸, զսլիւր յաւրէնս Երեսուի եւ զԿառանց տիկին Տիրուհի Ղուստր եւ Թոռն, քոյր եւ մայր քահանայից յիշեցէք ի Գրիստոս . եւ առաւել զԴէրին եւ զկենակիցն իւր եւ զԱսիւն եւ զԱլահն յիշեցէք ի Գրիստոս եւ յիշողքս յիշեալ լիջիք ի Տէր :

գ. — Երեցեք ի միարանութիւն զՈրդորն զՈրդի Փանոսի եւ զՍիրայն ի մաքրափայլ յաղաթս ձեր եւ զՍարգիս նոր Թագաւորն եւ զկենակիցն զԱֆթայն²⁹, ի յամեն տարի Բ. Դկ. (2+ (4×60=240)=242) եւ Սարգիսն Բ. Դկ. : Երեցեք ի մաքրափայլ եւ ի մեղսալքաւիչ յաղաթս ձեր զԲաշխաթունն եւ զճնողսն իւր զՄուրարաքահն եւ զՄարխաթունն³⁰ եւ Գրիստոս զձեզ յիշէ, եւ զՄինայտիկինն : Երեցեք զՄարկոս եւ զԷլիսաթունն :

Թղ. 15բ. — Տէր Երեսու զթնա ի յիս սրբեա ըզմիտս եւ զ— դա— յարանս . եւ Թորոսս ծառայ քո եմ տրուպ անպիտանս . Տաճարացո Լրորդուղթեանդ զիս աւթէփանս . երգել զփառս ընդ վերին զաւրս միշտ յաւիտեանս :

Թղ. 22ա. — Ով զասք... (բառացի նոյնն է Թղ. 10բ-ի հետ) յիշեցէք զսլարոն Ֆախրայդին եւ զճնողսն իւր Ելաննայ եւ զՄարապետ եւ զսլարոն Խղըրչայն եւ զՍաֆարչայն եւ զճնողսն իւր զքահանայն Տէր Մկըրտիչ եւ զմայրն իւր եւ զեղբարքն իւր եւ զիղայդիկն եւ Նասրայդին . յիշողքդ աւրհնեալ լիջիք ի Գրիստոս եւ յամեն տարի իրեք պատարագ մատուցանեն եւ ինքն Գրիստոս զձեզ յիշէ յիւր յարթայութիւն, ամէն . Տէր Աստուած :

Անդ. 2թումա եպիսկոպոս Վարազդի յիշեցէք ի Գրիստոս : Եւ Աստուած զձեզ յիշէ :

Թղ. 22բ. — Չանպիտան Թորոս սարկաւազ զնկարող սուրբ պատկերացս աղաչեմ յիշես ի Տէր Երեսու Գրիստոս :

Թղ. 114ա. — Երեցեք զՄամախաթուն յաղաթս ձեր :

²⁷ Աճառեամ՝ յիմիմէ :

²⁸ Աճառեամ՝ մէռեալքն եւ գիտ յաւրէնս...

²⁹ Աճառեամ՝ գոնքայն :

³⁰ Աճառեամ՝ զՄարխաթուն :

Թղ. 114բ. — Զանարթան Թորոս արժանացոյ եւ յիշեալ ի Տէր
Յիսուս եւ Թողութիւն յանցանաց հայցեցէք :

Անդ, այլ գրիչէ. — Տարայժամ վաղջանկալ Շնորհար ի Քրիս-
տոս տարին ժամի (ժամ մի) մատուցանեն :

Թղ. 174տ. — Այլ եւ այլ գրիչներէ. —

ա — Քրիստոս Աստուած քո սուրբ աւետարանչացն բարեխաւ-
սութեամբ. ողորմեալ՝ հոգեւոր մօրս մեր Դավյաթին որ է Մարիամ .
եւ իւր զաւակին Յիւստոշին . վասն զի րազում խնամք կրեաց ի վերայ
մեր . խնամակալն Աստուած ազատեացէ զհոգի սոցայ . յամենայն մե-
ղաց եւ դատեացէ ընդ հրեշտակս արքայութեանն երկնից սմեն :

բ. Ով մանգունք Սիոնի յիշէցէք ի սուրբ յաղաթս ձեր զՄատույ
խաթունն եւ զնշանատունն եւ զԹանգտիկինն :

դ. — Քրիստոս Աստուած քոց սրտոյ աւետարանչացն . Մաթէո-
սի, Մարկոսի, Դուկասու . Յովհաննու . բարեխօսութեամբ ողորմեալ .
Ստեփաննոս յալուկ վարդապետի ծնողացն հօրն Պէշնամշահին . եւ
մօրն յԱղիզմէլիքին . եւ եղբ :

զ. — Այս է արձան փրկչին ներկեալ արեամբ կենարարին հանգ-
չի հոգին զԱրիմէլէքին որ շատ բազում ախտեցաւ այս սուրբ աւետա-
րանիս ու շատ չարչարանք է կրել : Աստուած իւր մեղացն Թողութիւն
առնէ . եւ ինքն ինքն (կրկնեալ) Քրիստոս Աստուած որ փրկչին է
ամենեցուն փրկէ զհրանչէն զիւր կողայկիցն զնոնթ նաթուն . որ շատ
ի մատնընչէ չարչարոնք են կրել . մաւտ Բ : Ռ : ԴԿ . Դիւանի տվէլ են
սուրբ աւետարանս ի դերութենէ են ազատել Աստուած զերեւան հո-
գին ի զժոխոցն ազատէ իւր մեղացն Թողութիւն առնէ ամէն եւ Աստ-
ուած յիշողացող մեղաց Թողութիւն առնէ . իրանչի մաւր անուն Արուս-
մէլիք, փեսին անուն Թազուրչախ, զստեր անուն Ալյանմէլիք մէկի
Մամալխաթուն . մէկի Դադամշայ որդոյն անուն մուրաւո : Փոքր
զստեր անուն Շահիդմէլիք, Աստուած զիրեանց մեղքն Թողու որ շատ
յուս են վառել եւ շատ սպասաւորել եւ Աստուած յիշողացող ողորմի :

Թղ. 174բ. — Զտուրպ գրիչ Թորոս սարկ . նկարող ծաղկիս ա-
յաւնիս յիշել ի Տէր Յիսուս Քրիստոս :

Անդ. Այլ գրիչէ. — Շնորհարին յիշատակ ի տարին ժամ մի աւագ
խիկչարաթին :

Թղ. 269ա. — Տէր Աստուած ողորմի Մամայխաթունին :

Թղ. 269բ. — Զանպիսան Թորոս նկարող սուրբ պատկերացո
յիշեալիք ի Տէր Յիսուս :

Անդ, այլ գրիչէ. — Ով դասք յուսեղէնք յորժամ ընթեռնուք
յիշեցէք յաղթս ձեր զԵմանէսն եւ զԾնողան իւր յամենայն ժամ :

Ս. ԳՐՈՑ ԲԱՌԱՐԱՆ

ԹՈՒՂԹՔ. — 365, որմէ կը պակսին 359 եւ 361 Թուղթերը: Մոռցուած է արձանադրել 137 Թիւը. հետեւաբար ձեռագիրս ունի 362 Թուղթք (724 երեսք): Ուսումնասիրող մը թուարկած է: ՄԵՄՈՒԹԻԻՆ. — 40·8×29·3×7·4 հրմ.: ԳՐՈՒԹԻԻՆ. — Երկսիւն, 31·6×20·5—20·7 հրմ.: ԳԻՐ. — Նօտրդիր, մեծատառ՝ գրուած սեւ թանաքով, վարժ գրիչի մը կողմէ: ՆԻԻԹ. — Սպիտակ, փայլուն եւ թանկարժէք Թուղթ: ՎԱԶՄ. — Կարմրագոյն եւ հաստկեկ խաւաքարտ, նոր կազմուած: ՏՈՂՔ. — 42: ՄԱՆՐԱՆԿԱՐՔ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ. — Զկան: ՍԿԶԲՆԱՍՈՒՔ. — Թռչնագիր, կարմիր եւ կապոյտ թանաքով: ԽՈՐԱԳԻՐՔ. — Կարմիր թանաքով: ՀԱՆԳԱՄԱՆՔ. — Շատ լաւ կացութեան մէջ, կը պակսին Թղթք. 359 եւ 361: ՍԿԻՂԲԻ 1—284 երեսները, որոնք հաւանաբար առանձինն կազմուած ըլլալով, կազմած են Ա. հատորը, որ կը պակսի մեր Հաւաքածոյէն: Զեռադրիս Թերթերը էջ առ էջ համարակալուած են եւ կը սկսին 285-էն մինչեւ 634 (Թղ. 1ա—162ա): Մնացեալ Թերթերը (Թղ. 162բ—365բ) համարակալուած չեն, նոյն այդ սեւ թանաքով՝ գրիչին կողմէ: Թուղթերը սեւ մատիտով եւ նոր ուսումնասիրողի մը կողմէ թուարկուած են: ԳՐԻԶ. — Անձանօթ: ՎԱՅՐ. — Երուսաղէմ: ԹՈՒԱԿԱՆ. — 1780—1800: ՍՏԱՑՈՂ. — Անյայտ: Գրադարանի նախորդ թիւն էր 170: ԾԱՆՕԹ. — Հմտ. Երեւանի Մատենադարանի Թիւ 7012 ձեռագիր ժողովածուն հետ, որ է Երեմիա Մեղրեցւոյ Բառգիրքը, Սիւնակ 441 եւ Թիւ 8255 ժողովածուն հետ, որ է Բառգիրք յԱստուածաշունչ Գրոց, Թկն. 1756—1758, 1792, Սիւնակ 706: ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ. — Զկան:

Մատենան է Ս. ԳՐՈՑ ԲԱՌԱՐԱՆ, որ կը սկսի երես 285-էն, Բ. գիրէն: Այրուբենական շարքով Ս. Գրոց մէջ յիշատակուած բառերու բացատրութիւններ են: Իւրաքանչիւր բառ կարմիր թանաքով գրուած է, իսկ բացատրութիւնները՝ սեւ թանաքով:

1. — Թղ. 1ա. — Բարդուղիմէոս. — Բարբուղիմէոս, այսինքն որդի կախողի ջուրց (Որդի ներեայ որոյ կայ): Է՛ր մինն յերկոտասան առաքելոցն. Մատթէոսի 10 ա., Ղուկասու 7 եւ:

2.— Թղ. 11ա. (353 երես.) Բեհեզգեբուզ: Բեհեզգեբուզ, այսինքն կուռք ճանճից կամ ժառանգող ճանճից: Սովոր էին հրեայքն առնուլ տեղի իշխանին դիւայ: Գ. Թաղսու. 1 ա, Մատթէոսի 10 պ, 12 բ: Մարկոսի 3 գ: Ղուկասու 11 բ:

3.— Թղ. 141ա (երես 593) Եպիսկոպոս: Եպիսկոպոս է՝ յուսական բառ, որ է իրր վերադիտող. զի պարտի դիտել 'ի կառավարել զայլս. որ որպէս զտեղի: Այսպէս եւ օրինակ Քրիստոսի ունի: Նոյեմայ 11, գ: Ա. Տիմոթէոսի 3, ա: Տիտոսի 1, գ: Գործոց 20, գ: 1 Պետրոսի, 2, զ. Արդ՝ Եպիսկոպոսութիւն է՝ ինքն հոպն, կամ կայսրութիւն. 1 Տիմոթէոսի 3 ա: Եւ Եպիսկոպոսութիւն Յուդայի էստայլ. յորժամ ի տեղի նորա էանց Մատաթիայ, եւ մինչ հեթանոս ժողովուրդն էստ զարժանապատուութիւն ժողովրդեանն հրէից, Սաղմոս 108, Գործոց 1 գ:

4.— Թ. տառի գլխուն մէջ մոռցուած է ԹԱԴՆՈՍ անուան ստուգարանութիւնը:

5.— Թղ. 240ա.— ԼիԲԱՆԱՆ: Լիբանան, այսինքն սպիտակ կամ պայծառ կամ կնդրուի կամ սրտի որդեղրութիւն: Բարձրագոյն լեռնն Փլինիկէի 'ի յիսորեստան, եւ սահման հիւսիսոյ երկրին Աւետեաց: Զայս անունն ունի յսպիտակութենէ ձեանց. կամ 'ի կնդրկաց, որ անդ րազում է: Է՝ եւս յի առատութեամբ մեծամեծ նոճեաց, զորս անտի առաքէր Քիրամ թապաւորն առ Սաղամոն, առ 'ի չինումն տաճարին: Տրի հին Լիբանան, առակցեալ Լիբանանու, որ ըստ ոմանց է՝ դէպ 'ի ծովն, եւ ըստ ոմանց դէմ 'ի Դամասկոս: Լիբանան, զի յառաջ է՝ քան զբարձրագոյն եւ զանուշահոտ ծառինս եւ թարգմանի սպիտակութիւն, նշանակէ զՔրիստոս, որոյ տեսակն ասի՝ որպէս Լիբանան. Երգոց 5 գ: Լիբանան եւս ասի եկեղեցին սպիտակացեալ. յորում է հոտ բարեկործութեանց եւ պտղաբեր ձիթենիք եւ բարձրագոյն առաքինութիւնք իրեւ նոճիք: Սաղմ. 51, 71: Յովս. 14 գ: Ամրակում 2 գ: Զաքար. 10 գ:

Լիբանան նմանապէս նշանակէ զմարմինն Կուսին Մարիամու, որ եկն ի Լիբանանէ, յորժամ չուեաց 'ի մահկանացու մարմնոյ, զի պսակեցիր: Երգոց Գ. բ: Եւայլն...

6.— Թղ. 344բ.— Կիպրոսն է՝, կամ Կպրոսն՝ յայտնի ծառիկ իմն, բուսմամբ խոժոռ, դատարկ 'ի պտղոյ, բարունակալ թիւր, տերեւօք դառն, հոտով զօրեղ եւ ստուերաւն ոչ հաճելի, նիւթովն նուազ: Մինչ զի գրեթէ ոչ է ի սեռս պտղաբերաց, միշտ է կանաչ, Կիպրոսն զի է՝ միշտ կանաչ, եւ ոչ 'ի հողմոց յաղթի և 'ի բարձունս վերանայ, կարէ նշանակել զառաքեալն եւ զմարտիրոսն եւ զարս մեծամեծ առաքինութեամբ եւ վարդապետութեամբ. Եկլեւս-

տէկեայ 24 բ, 50 բ: Կարէ՛ նշանակել եւս զճարտարախօսն եւ զիւրիստիպան, որք ի հեթանոսաց եկին առ հաւատն...: Կարեն նշանակել զեպիսկոպոսունս եւ զառաջնորդան, որք զօրութեամբ իւրեանց կազդուրեն գեկեղեցիան եւ հոտովն վարդապետութեան եւ օրինաց հոտարեր առնեն զստորադրեալսն եւ քաղցրացուցանեն: Երգ. 1 դ: Նշանակեն եւս զայնոսիկ, որք պատկանին առ եկեղեցական կացութիւն, եւ զարձեալ զպարզամիտսն, որք բարւոք կեան:

7.— Թղ. 345ա.— ԿԻՊՐՈՍ: Կիպրոսն է յայտնի կղզի, որ ունի զլաւագոյն այգիս, բերելով զդերագանց գինիս, քան զայլ այգիս, Երգոց 1 դ, 4 դ: Ուր դնի ողկոյզն Կիպրոսի եւ եւրայեցերէն տոի կողով, որ նշանակէ զծառն Քեաֆուրի, որ է՝ ծառ անուշահոտ եւ ծխանելի: Բայց եթէ ողկոյզն Կիպրոսի առնիցի ի տեղի ողկուզոյ այնորիկ կղզւոյ, ասի զՔրիստոսէ ողկոյզ Կիպրոսի, վասն գերագանցութեան թէ գինւոյ այնորիկ կղզւոյ...: Կիպրոս կղզին օրինակ է ընդհանուր եկեղեցւոյն, որ անուցումն է ըզրազում այգիս, մինչ ի բազում եկեղեցիս բաժանեալ, զոյնին որ ուրախացուցանէ զսիրտ մարդոյն ծնանի: Երգոց 1 դ:

8.— Թղ. 345բ.— ԿԻՒՐՈՍ: Կիւրոս թագաւորն Պարսից, որ հրամայեաց չինել տաճարին հրէին վակեալ ՚ի քաղդէացւոց: 2 Մնսն յորդաց 26 ե: 1 Ներսասայ 1 բ: Եւայլն:

ԳԱՆՁԱՐԱՆ—ՏԱՂԱՐԱՆ

ԹՈՒՂԹՔ. — 241 Թուղթ (482 երեսք): ՄԵՆՈՒԹԻՒՆ. — $26 \cdot 2 \times 17 \cdot 8 - 18 \cdot 1 \times 4 \cdot 2$ Հրմ.: ԳՐՈՒԹԻՒՆ. — Միասին, 19.1 $\times$ 12.6 Հրմ.: ԳԻՐ. — Բոլորդիր, սեւ թանաքով եւ վարժ գրիչի վործ: ՀԱՄԱՐԱՆՔ. — Կը պահսին սկիզբի եւ վերջաւորութեան թերթերը, որոնք խոնաւ վայրի մը մէջ պահուած ըլլալով խոնացած են: ԿԱԶՄ ԻՆ ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ. — Զունի: ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ. — Շատ կան, կարմիր եւ կապոյտ թանաքով, բաւական յաջող են. 3ա եւ 5ր՝ թըռչնադիր նկարներ են, զարդանկարներն ալ պատրաստուած են նաեւ դեղինով: ՄԱՆՐԱՆԿԱՐՔ. — Զկան: ՍԿԶԲՆԱՏԱՐՔ. — Մուգ կարմիրով, կենդանանկարներ եւ կամ բոլորովին պարզ գրի տեսակներ են: ԽՈՐԱԳԻՐՔ. — Նարնջագոյն, պարզ ոճով եւ կարմիր զարդաճակատով. Թղ. 168ա, կարմիր թանաքով եւ պարզ ոճով գծուած է: ԳՐԻԶ. — Անյայտ: Ա. ՍՏԱՑՈՂ. — Բայրամ հաւճա: ՎԵՐՋԻՆ ՍՏԱՑՈՂ. — Աղբիկ Յովհաննիսեան եւ Սահակ Քչնյ. Եղիկեան: ՎԱՅՐ. — Հին նախընթաց: ԹՈՒԱԿԱՆ. — ԺԻ. դար: ՄԱՆՈԹ. — Գրչագիրս ուսումնասիրուած չէ Հր. Աճառեանի կողմէ, հասանարար Մուշումյարս դիւղը գտնուած ըլլալուն:

Մատենա է ԳԱՆՁԱՐԱՆ Հայց. Եկեղեցւոյ, բաւական ճոխ բովանդակութեամբ, բայց ավստոս որ պակասաւոր լինակի մէջ կը զըտնուի: Գծողը յատուկ ուշադրութիւն դարձուցած է գեղարուեստական մոթիւներով օժտելու ձեռագիրն եւ յաջողած է իր նպատակին մէջ: Գանձերու խաղերն ալ նշանակուած են նկատառելի բժախնդրութեամբ:

1. — Թղ. 1ա. — Յովհաննէս Մկրտիչին նուիրուած.

«... Մեծ վարդապետին: Եւդոքսիայ ցառամամբ զայրագին ետաքսորել ըզնա վերըտին: Զոր եւ տարեալ աքսորանս կըրկին, դէպ յարեւելս Կոմանայ հասին...»:

2. — Թղ. 3ա. — Առաքելոցն Սըբրոց գոյխաւորաց: Խորհըրդապատ թո մարդեղութեանդ զորս ընդրեցեր յառաջ դիտութեամբ նոր հրախլիակ թո փեսայութեանդ տածողք հարսին...:

3. — Թղ. 4բ. — Տաղ ի Ներսիսէ: Առաքեալք Աստուածորդոյն, ի ծոցոյ հոր առաքելոյն...:

Կը պակսի 24—25 թերթերու միջև գտնուող թերթը :

4.— Թղ. 83ա.— Սրբոյն Վահանայ Գողթնացոյն : Գրթացեալ քոյին արքայն Երկնային եւ առեր մարմին, զմարդիկս երկրային . . . :

5.— Թղ. 112ա.— Կանոն սրբոց Վարդանանցն ասացեալ : Գոհարանեալ Տէրդ ամենայնի, Յիսուս Քրիստոս միածին որդի : Ուրնորեցեր յազգէն Արամի, զքաջն Վարդան զաւրաքն իւր դընդի . . . » :

6.— Թղ. 192բ.— Սըրբոց Հռիփսիմեանց եւ Գայիանանց : Վալչականաց վայելման փառաց վերնազար կառաց : Աստուած դաւանած եւ խոստովանած, սարսափմամբ պատած . . . :

7.— Թղ. 241բ.— Կանոն ձեռնադրութեան ի Գրիգոր Վարդապետէ : Գթայ ի մէջ Տէր ամենակալ եւ լուր բնութեանս մեր տրկաբացեալ : Բանդ Ա[ստուծոյ] մարմին ըզգեցեալ . . . :

Մնացեալ թերթերը կը պակսին :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

1.— Թղ. 76ա.— Եկեղեցականի մը գլուխը զծուած է ձեռագրիս վերջին ստացողին կողմէ եւ տակը գրած է. Տէր Գիրիգոր :

2.— Թղ. 85բ.— Կանաչ մատիտով եւ նորագոյն ժամանակի մէջ գրուած է. «Այս անկագմ եւ պակաս ձեռագրի գիրքը նվիրում եմ Տէր Սահակ Քահանային : Ադրիկ Յովհաննիսեան :

7.— ԹՊ. 192բ.— Ո՛վ կառավար ժամատեղաց: Յորժամ զայս դիրս աւարտէք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զսուտանուն Ղազար դպիրս եւ զհայրն իմ Կիրակոս քահանայն: Եւ առաւել հանգուցեալ մօրն իմ Թուրանդին, որ փոխեցաւ դառն կենցաղոյս եւ եթող զիս որբ, ըստ այնմ հայր իմ եւ մայր իմ Թովմաթիւմ խնդրեցէք:

Արդ՝ յաւարտեցօ ժամագիրքս եւ զՍաղմոսարանս ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսին, ՚ի գիւղն Շէնհէր, ի ԹՎկնս. Ռ. եւ Հէ. (1628), յաւուր սուրբ Աստուածածնի ննջման:

8.— Թղ. 192—193—ի միջև քանի մը թերթեր ինկած են։ Թղ. 193ա—ի 5-րդ տողը կարմիր թանաքով գրուած է։

Կարդատուութիւնը եկեղեցւոյ եւ արարողութիւնք ժամատեղաց։ Ներսէսի Հայոց կաթողիկոսի զոր ետ ըրերի ի սուրբ եւ ի հոգալատր աստուածարնակութիւն, հրեշտակակրօն սուրբ հարանցն, մեծ ուխտից Մարենացոյ եւ ամենայնիւ ամենայն կամաւք...

Այս թուղթէն սկսեալ գրիչ Աստուածատուր աւելի մանր գրած է, բոլորգիրով եւ սեւ թանաքով։

9.— Թղ. 198ա.— Յիշեալ եւ զիս, զմեղաւք ի լիս, յորժամ զգրեալս կատարիս։

10.— Թղ. 198բ.— Բ. Սիւնակին մէջ. Թողութիւն արարէք սղալանաց եւ խոշորութեան, զի կայրն մեր այս է, եւ Աստուածատրոյ։

11.— Թղ. 202բ.— Յիշեալ զի մահացու եւ, ով Ղազար, գիշեր մի հոգիդ պահանջեն, վա՛յ քեզ, զԱստուծոյ քեզ։

12.— Թղ. 210ա.— Վա՛յ քեզ ով Ղազար, ինչ կու լինի քո ճարն։

13.— Թղ. 213ա.— Բ. Սիւնակ. Ո՛վ ազիկ տէր, տեսարք (տէրք³) յիշեցէք զՂազարիկս։

14.— Թղ. 215ա.— Ով եղբայր, թէ յայս կրկին սուրբ հոգոյն տանես, կամք քո է։

15.— Թղ. 222բ.— Փառք... (Պատուած) անհասանելի երրորդութեան, ետանձնակի Տէրութեան, միով Աստուածութեան եւ էութեան, համապատիւ, համասփիւռ, Հաւր եւ որդոյ եւ հոգւոյ, այժմ եւ անդաման յաւիտեանս ամէն։

Որ ետ կարողութիւն մեղսաարձատ ցրչի սուտանուն Ղազար զբարիս, հասանել յաւարտ զայս դիրքս որ կուչի ԺԱՄԱՐԻՔ, րատոյգ...

Շարունակութիւնը տեսնել Թղ. 254ա—ի վրայ։

16.— Թղ. 254ա.— Սիւնակ Ա. Հաւանարար շարունակութիւնը Թղ. 222բ—ի յիշատակարանին։

«... Աւրինակող գրեալ, Լթէ իցէ սա (անընթեռնելի) սղալ կամ խաչոր, թողութիւն շնորհեցէ՛ք զի կարն իմ այս է։ Եւս առաւել առաջի զիս իմ այս է, զոր ուսայ Արիստազէս վարդապետէն։ Աստուած հատուցանէ վարձս նորա։ Յաւարտեցաւ զիրքս Հրոտից ամսոյ ա, ընդ հովանեաւ սուրբ անապատիս որ ժողովեալ կան ի փառալիսնութիւն որդոյն Աստուծոյ, եւ հայրն իմ Տէր Կիրակոս մի է ի նոցանէ՛ ի յանապատին։ Ի թվականութեան Հայոց Թ. եւ ՀԷ. (1628) ամի, Կաթողիկոսութեան Էջմիածնայ Մովսէս Բարունապետի, որ ճշմար-

րիտ, կրկին լուսաւորեալաց զտշխարհս, և աշակերտացն նորա որ Լն աշխատ վարդապետ. առաջին, աւալ աշակերտն՝ Արիստոստէս վարդապետն, և այլն թումա և փրկիպոս, որ նման է աղանոյ և այլ բաւում կա՝ և լինելոց Լն, Աստուած ձեռնտու լիցի նոցա :

Եւս առաւել նոցա ողաւթիւքն և մեղ ողորմեսցի և փրկեսցէ զմեզ յաւիտենական տանջանացն, ամէն :

Որք հանդիպիք սմա՝ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր զՆազար դպիրս և զծնաւդսն իմ և զեղբարս և զքոյրքս : Յիշողք յիշեալ լիցիք ի միասանում դալստեան, ամէն : Հայր մեր որ յերկինս է :

17.— Թղ. 254ա.— Ա. Ստացողէն, բոլորգիր, սեւ թանաքով և անվարժ գրիչի մը կողմէ :

Դարձեալ յիշեցէք զՌուհանն (զՌուհանն) և զԱղաբէգին, զկողակիցսն և զծնաւդսն իւրեանց, որ Ըստացան զսուրբ գիրքս, որ կոչի ժԱՄԱՅԳԻՐՔ, ի հալալ ընչից իւրեանց, յիշակտակ հոգոց իւրեանց, և ետուն ի դուռն սուրբ Ուանիսին, ի հայրապետութիւն (եան) Տեառն Մովսիսի, ի թաղաւորութիւն Պարսից Շահասալին, որ էր խանութիւն աշխարհիս Հայոց, ի թիւին Հայոց ՌՀԸ. (1629) էր. Տէր ստացողն պահէ, ամէն, Հայր մեր... :

18.— Թղ. 254բ.— Բ. Ստացողին կողմէ, բոլորգիր, սեւ թանաքով և անվարժ գրիչի մը կողմէ :

Զստացող սուրբ գրոց այս, որ է ժԱՄԱՅԳԻՐՔ և ՏՈՒՆԱՑՈՅՑ, որ ստացո Աղապէկին իւր հալեալ ինչիցն մերոց, և մեր հոգոյս փըրկութեան հայրն իմ իմուտալերտին, մայրն իմ Անախաթունին, որդուցն Սահակին, Հայրապետին, զուստր իմանումին (Սանումին⁶), Անային, որդոց (մեծոց) և փոքոց, առհասարակ ամենեցուն, ամէն :

Դարձեալ յիշեցէք Ուանն (զՌուհանն⁷) և իւր ընտանիքն թարվիլ քաղաքի, որդիքն Պետրոսին, Երեմիային և զուստերն Գուլի, իմաստայի, առ հասարակ ամենեցուն, ամէն :

Գրեցաւ ի թլ. ՌՀԸ. (1629) Աւրհնեցէք Ստացողք իմութի և իւր կողակիցն Սանամին, ամէն :

19.— Թղ. 254բ.— Գ. Ստացողէն, շեղագիր և սեւ թանաքով, անճաշակ գրիչի մը կողմէ :

Յիշալտակ է առնալիրքս Սուրբ Սարգիսի եկեղեցոյն Տէր Օւանէսի որքի տիրայցու ըմտէփանս ետու, օրօր որ կարճայ յիշեցէ ուր ծնողացն, ամեն, 1830 Դետեմպերի 1, չլ. (Շարաթ) :

20.— Թղ. 255ա.— Դ. Ստացողէ, նոտրգիր, սեւ թանաքով և վարժ գրչէ :

Անարժան մեղս ալից ... Պօղ
 Ոս յիշեա վա՛յ ի նձ,
 ... Գիտիցէ զբա բի.....
 ... քահանայէ ։
 Մեղ ... ահու չա րաչար ... ,
 Աստուած ողորմի

Առ հայրդ աղաղակեմ ,
 Տեառն առակի , որդոյ Սողոմոնի
 Վարձկանաց սուրբ սեղանոյդ կայր
 աց ? Հացիդ արժանի արա , մեղա՞
 Մեղա Տէր , մեղա՞ , մեղա , Տէր ինձ ։

Հայր Մեղա յ յերկինս ։

21. — ԹՊ . 255ա—255բ . — Կան նաեւ գրավարժութեան քանի մը
 փորձեր , անիմաստ նախադասութիւններով եւ տառերով , նօտրֆեր
 եւ սեւ թանաքով գրուած .

ա . — Հաստոց թագաւոր երկնաւոր ։

բ . — Անարժան մեղ . (պատուած , անընթեռնելի) ,
 Որ յիշեա վա՛յ է , (անընթեռնելի)
 (անընթեռնելի) զիտիսէ սբար (պատուած)
 (անընթեռնելի) ... եացէ ,
 Մեզ (անընթեռնելի) մահու չափ ,
 Աստուած ողորմի (անընթեռնելի) ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. — Ձեռագրիս գրիչը՝ դպիր Ղազար , իբրեւ նորավարժ գրիչ ,
 1629-ին կը ձեռնարկէ ձեռագիրներու ընդօրինակութեան , ինչպէս կը
 հաստատէ Ժէ . դարու ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ
 աշխատասիրութեան Ա . հատորին բովանդակութիւնը (1601—1620
 թթ . , կազմեցին՝ Վազդէն Յակոբեան եւ Աշոտ Յովհաննիսեան , Երե-
 ւան , 1974) ։ Սոյն հատորին մէջ կը պահպին տեղեկութիւններ գրիչ
 Ղազարի ծնողաց՝ Տէր Կիրակոսի եւ Թուրվանդի մասին ալ ։

2. — Դպիր Ղազար կը յիշատակէ իր երկու վարպետներուն՝ Ա-
 րիստադէս եւ Աստուածատուր վարդապետներուն անունները ։

Արդարեւ , Արիստադէս Վարդապետի մասին կը հանդիպինք
 հետեւեալ յիշատակութեանց , նաեւ այլ գրիչներու կողմէ .

ա. — 1603-ին, Կարմրուոր Ուխտին մէջ, գրիչ Գրիգոր Մոկացի, իր դրած ժողովածուի վերջաւորութեան, գրի առած է նաեւ Արիստակէսի խրատ Գրչութեան գործը, որ իբրեւ դասագիրք կը գործածուէր նորավարժներու կողմէ :

(Տէ՛ս վերոյիշեալ աշխատասիրութիւնը, էջ 116) :

բ. — 1608-ին, Համիթի մէջ, գրիչ Ստեփանոս Քաճանայ իր դրչադրած Աւետարանի յիշատակարանին մէջ կը գրէ. «Եւ յետ յայս կենացս դասուցիչն իմ ընդ սուրբ քաճանայն եւ ընդ սուրբ գրչապետսն, ընդ Արիստակիսի եւ ընդ Դէորդայ եւ այլ քաջ քարտղարացն դասեցէ եւ պատկեցէ. ամէն» (էջ 299) :

գ. — 1619-ին, Կաֆայի մէջ գրիչ Զաքարիա Դսլիւր, իր գրած Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի գրքի յիշատակարանին մէջ, կը գրէ. «ԶԱրիստակէս վարդապետ եւ զգովեալ աշակերտ նորին ղեփրեմ, յիշեալիք ի Քրիստոս, զի նա աշխատեալ ժողովեաց դրանս մեկնացն ի մի յետ տեառն Ներսիսի: Յաւրինալիս այսչափի էր յիշատակարան Արիստակիսի, զայն որ կատարեալն էր չդտաք՝ անմեղադիր լեւուք» (էջ 703) :

Իսկ Աստուածատուր Վարդապետի մասին, ունինք հետեւեալ վկայութիւնները.

ա. — 1612-ին, Բերիոյ մէջ, Գրիչ եւ Ծաղկող Ղազար, իր գրչադրած Աւետարանի Յիշատակարանին մէջ կը գրէ. «Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զուսուցիչ վարպետքն իմ՝ զտէր Աստուածատուրն, եւ զտէր Մարտիրոսն Հիզանցի, եւ զտէր Խաչատուրն Լէհցի» (էջ 467) :

բ. — 1616-ին, Համիթի մէջ, գրիչ եւ Ծաղկող Յովհաննէս, իր գրչադրած Աւետարանի յիշատակարանին մէջ կը գրէ. «Այլ եւ ողորմեացի Քրիստոս Աստուած ամենայն երախտաւորացն մերոց ... եւ մանաւանդ ուսուցող վարժապետին իմոյ՝ տէր Աստուածատուր քարտուղարին, որ աշխատեցաւ ընդ անարժանիս, ի յուսումն հռչակաւոր արհեստիս մեկնանդործութեան, որոյ ողորմեացի Քրիստոս Աստուած եւ ընդ սուրբ գրչապետացն դասեցէ. ամէն...» (էջ 597) :

Հ Մ Ա Յ Ի Լ

ՄԵԾՈՒԹԻԻՆ.— 8.5×435 հրմ. ԳՐՈՒԹԻԻՆ.— 7.2×432 հրմ.: *Միասին*: ԳԻՐ.— *Նարդիր*, սեւ թանաքով եւ վարժ գրիչի մը կողմէ: ՏՈՂՔ.— 333: ՆԻԻԹ.— *Թուղթ*: ԿԱԶՄ.— Գլանաձեւ ժաթ-թուած, առանց պահպանակի: ՀԱՆԳԱՄԱՆՔ.— Գոհացուցիչ: ԽՈՐԱՆՔ. ԿԻՍԱԽՈՐԱՆՔ.— Զուներ: ՄԱՆՐԱՆԿԱՐՔ.— Բազում, բազմադոյն եւ միջակ արուեստի դործ: 1. Բլրան մը վրայ դմրէթաձեւ եկեղեցիի տեսարան մը, որուն շուրջ երկուքական աշտարակաձեւ պրմ-րէթներ: 2.— Ս. Կոյսին Աւետումը Հրեշտակապետին կողմէ: 3. Երեք մոդերուս այգը Աստուածամօր՝ Յիսուս մանուկը դրկին: 4. Ս. Ներսէս Շնորհալին, որուն ներքեւ Հաւատով Խոստովանիմ-ի տունները: 5. Յիսուսի Տաճար ընծայումը ու Սիմոն ծերունին՝ դրկին Մանուկ Յիսուսը, աջ կողմը՝ Ս. Կոյսը: 6. Քրիստոս թեւատարած, շրջանակի մէջ, ապա յաջորդող մասերուն մէջ Առաքեալները՝ շրջանակներու մէջ առնուած: 7. Խաչեալ Քրիստոսը, Խաչին մօտ կանգնած դիրքի մէջ Ս. Կոյսն ու Յովհաննէս Առաքեալը: 8—17.— Շրջանակներու մէջ նկարներ՝ առաքեալներու, հրեշտակապետին, Տիրոջ փորձութիւնը սատանայէն, զէպի եղիպտոս փախուստը, Ս. Գէորգը նիզակի ձեռին՝ սատանայի բերնին կսկած դիրքին մէջ: ՍԱԶԲՆԱՏԱՌՔ.— Նարնջագոյն, պարզ եւ թուրքեր՝ ոմանք: ԽՈՐԱԳԻՐՔ.— Նարնջա-դոյն, նարդիր եւ պարզ ոճով: ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳՔ ԵՒ ԳԱՏԱՐԿ ՏՈՂՔ.— Զուներ: ԺԱՄԱՆԱԿ.— 1810—1820: ՏԵՂԻ.— Սիւս: ԳՐԻՉ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒ.— Տէր Մաղաքի՞: ՍՏԱՑՈՂ.— Փարու: ԿՆԻՔ.— Զուներ: ԵՄԱՆՈՒԹԻԻՆ.— Հմայելի թաւրիկի Մելիք-Թանգեան թան-դարանին նուիրեց թաւրիկարանակ Պրն. Էսրէքո Յովհաննիսեանը, 1966 թվականին:

Զեռադիրն է ՀՄԱՅԻԼ կամ ՀԱՄԱՅԻԼ, հետեւեալ բովանդա-կութեամբ.

1.— Ազօթք սրբոյն Ներսէսի Հայրապետի ստացեալ վասն պահ-պանութիւն ծառայիս Աստուծոյ:

Հաւատով խոստովանիմ եւ երկիրպահանձ քեզ... 24 տուն:

2.— Աղօթք վասն կապանաց իրեաց եւ կախարդաց եւ աղանդաւորաց ծառայիս Աստուծոյ :

Թագաւոր հզօր ապաւէն ծարաւելոց , ~~Քրիստոս~~ նեղելոց , որ վասն մեր խոնարհեցար ի հայրական ծոցոյ . . . :

3.— Աստուածածին ամէնօրհնեալ զպաղատանս մեր ընկալ , ի հանդատեան ժամոյս հասեալ , առ քեզ գոչեմք . . . :

4.— Այլ եւ բարեխօսութեամբ սրբոյ Յովննու Կարապետին , Մովսէսի եւ Ահարոնի . . . :

5.— Կրպրիանոսի Աղօթագիրքէն առնուած եւ շեղակի գրուած աղօթքներ :

Անակիզրն Աստուած , անեղ Աստուած , անպարագրելի Աստուած , անքննելի Աստուած . . . :

6.— Մաղթանք սուրբ զօրականացն : Բարեխօսութեամբ սրբոյն Գեւորդայ զօրավարին եւ Մեռկեռիոսի զինաւորին , սրբոյն Սարգսի զօրավարին . . . :

7.— Աղօթք դաւակ ծնանելոյ .

Եւսիեաց զաղաչանս ծառայիս քո եւ աղախնոյս , որպէս հաճեցար , յաղաչանս յԱննայի , եւ Էտհիւր դաւակ զմեծն Սամուէլ . . . :

8.— Աղօթք հրեշտակաց : Աղօթք պահպանութեան : Աղօթք շարաշիշ եւ չար լեզուի : Մաղթանք Սուրբ Սարգսի : Կապք թպղի եւ ալբի , Աղօթք Արարհամուս :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1.— Այլ գրիչէ , սեւ թանաքով , շեղագիր զրուած .

Յիշատակ է համայնիս Արրիւհամի կողակից Փարթուն , որ էառ ի հայալ հինչից իւրոց վասն պահպանութեան ամենալն ցաւոց մանավանդ զիչերային չարչարանայ որոց մեք վերալծալնեմք առ բարեբարն Աստուած մի տացէ ցալ կամ հիւանդութիւն Փարուն եւ իւր որդոցն Փարամաղին , Ըստէփաննոսին , ամէն , ~~եղիցի~~ , ~~եղիցի~~ : Տէր Մաղաքի :

Ամէն նկարի վրայ կան նաեւ անիմաստ զրութիւններ «Աստուծոյ ծառայ Փարուն , ~~ամէն~~ յիշատակութեամբ : Յիշատակարանէն առաջ հինգ տող զրուած եւ ապա ջնջուած է :


Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

ԹՈՒՂԹՔ. — 307 (614 Երեսք) : ՄԵՏՈՒԹԻԻՆ. — 12.5×8.2—8.6×6 Հրմ. : ԳՐՈՒԹԻԻՆ. — ՄԻԱԽԻՆ, 9.2×5.2—5.6 Հրմ. : ԳԻՐ. — Մանր բոլորգիր, սեւ թանաքով եւ վարժ գրիչի մը կողմէ : ՏՈՂՔ. — 22—24 : ՆԻԻԹ. — Մագաղաթ, խոնաւցած : Թղ. 130—139, աւելի փոքր ծաւալով՝ 10.3×6.3 Հրմ. : ԿԱԶՄ. — Կաշեպատ տախտակ, կաշին արդէն իսկ քակուած է փայտէն եւ այդպէս անջատուած մնացած : ՀԱՆԳԱՄԱՆՔ. — Կիսովին եւ կամ մասամբ պատռտած, մկրատուած թերթեր, պահուած է անխնամ եւ թերթերը սեւցած են : ԽՈՐԱՆՔ. — Զուներ : ԿԻՍԱԽՈՐԱՆՔ. — Թղ. 1ա եւ 9բ, որոնք գծուած են կապոյտ, կարմիր, դեղին եւ կանաչ դոյներով եւ պարզ ոճով : Նոյնպէս նաեւ յուսանցադարձերը, որոնցմէ գրեթէ ամէն էջի վրայ կան. Թղ. 9բ, 11բ, 21բ, 51բ, 44ա, 164ա, 196բ, 269բ, 299բ եւայլն : ՍԿԶԲՆԱՍԱՌՔ. — Թռչնադիր եւ պարզ, Երփներանդ, պարզ ոճով : ԽՈՐԱՊԻՐՔ. — Մեծատառ, Երփներանգ եւ կամ բոլորգիր, պարզ կարմիր թանաքով : ՄԱՆՐԱՆԿԱՐՔ. — Զուներ : ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ. — Թղ. 280ա—280բ : ԺԱՄԱՆԱԿ. — ՌՃԲ. (1653) : ՏԵՂԻ. — Շօռօթ գիւղաբաղաք : ԳՐԻԶ. — Արիսողոմ : ՍՏԱՑՈՂ. — Սնայտ : ԿՆԻՔ. — Կյոր, սեւ թանաքով եւ անրնթեռնելի, Թղ. 5ա : ԾԱՆՕԹՈՒԹԻԻՆ. — Զեռադիրս մաս կաղմած է Արշակ Խան Գորոյեանի Հաւաքածոյին, թիւ 195 Համարին տակ եւ 1966 Օչոստոսին Թաւրիզարնակ Տիկին Մարի Մատթէոսեանի ընակարանէն փոխադրուած է Ազդ. Առաջնորդարան, պարսկերէն ձեռագիր այլ մատեաններու հետ : Այժմ կը ցուցադրուի Մեյիք-Թանպեան Թանգարանին մէջ :

Զեռադիրս է ՇԱՐԱԿՆՈՑ, մագաղաթեայ, փոքրագիր, մանրատառ, խաղաւոր եւ պարզ ծաղկումով : Գրի առնուած է 1653—1658-ի ընթացքին, երկու տարբեր դրիչներու կողմէ, որոնցմէ Ա.ին անուներ անյայտ է :

1 — Թղ. 1ա. — Երզնէյէր որդիք Սիոնի երգ նոր...

2. — Թղ. 86ա. — Կանովն Ծաղկազարդի : Թաղաւոր դուով քոյ աշխարհ մըտեր ի քաղաքն Երուսաղէմ...



Ս. ԹԱԴԷՍ ԿԱՆՔԸ (Թ. ԴԱՐ)



: ը 7291 տրվ : տաս

մոշտաղուն մծափ հոսակ չառ վրտ յոտաց — 4831 . եփ — 7

: (7291) . ՂԵՄ զվիվ : յճվ

եզքեն զտրատող ծնեզնիվ ոչվմն մարտեղ — 4601 . եփ — 9

: Ոտ զգվ : ժղակիցր իս : չնաս զվրտառտրվ եղբ զուս
տող : (7291) . ՂԵՄ հառն ովզտիտիվ վ : իսզմսն չս իզ վի մյտաղտ
զհտվր մս մզբ ոթնեմ Ոտիտմտր վ ծնեզնիվ ոչվմն քննովիվ հոս
տիտիվ եղբտրտից : Լոզր ոթմն : Լոզն ոթսգ — 418 . եփ — 7

: (7291) . ՂԵՄ հառն

ովզտիտիվ վ : սծ զրաղտ վնվիկ մմսն : ող ողվիկ մս մղր մլտ

: զչրտ եվզտվում ողտգտվում իզ տնվր իզ քրտ : զհսնս
ծմսն իզ Լանսն իզ մոն : զտգթրանմսմզ մմսռտղզրտ ոտտի վ : վնզս
մտրտ Լոզտ ող իզ (407—41 . եփ) մն զտմն զվմտոսն ծտտի զվրնսի
վնտառ զտգթրամտովնտոմն իզնվր զմնչմտի զվնտառ վն ծմտմն իս
ծնեռտվ : զղտգտոմտն զվնվի վ վրմսն եզբ զտառտր իզ : զմտթվ
թվ զմտրն : զոչղտիվ թվ զմտնն իզ : իսզմսն չս իզ իզ մյտաղտ
զհտվր մս ոծտրտիտիվ քննովիվ Լոտազ ազբ մյտաղտ ոյն ծնզս
վղտրմտ վնոզրմսն Լավր : իսզիտղմո քտի իստնտի տր ծվտվն
ղտն ծմս : Լոզրտող ծնվղտմտտի Լանզնիզ ծմտն եզքեն իզնոն
— ի : թոսո զոտնտծտնոզն վ (ոտնթղն) : ոնթն քննովիվ եղբտրտոմ
մյտազբ : Լանկիտոռ մովնսի մս ովզտրտ մմսն Լզտմտրտ : ողտղթ
— սմտիս մտիկտ իրտիվ զմտգթրանսմտի մոտղզրտ մով սո մյ

: զչրտ եվզտվում ողտգտվում իզ տնվր իզ քրտ Լոտմո
զհսնս իզ Լանսն իզ մոն : զտգթրանմսմզ մմսռտղզրտ ծտտփ

: իսծտղթ իզ ո մվնսմսմ մղտր : Լոտի վնն

կնր : չրնսի զվնվմն : մղտմտիտտտվն մտիվ — 4903 . եփ — 1

ՎՂՆՄՈՒՆՈՒՆՈՒՆՈՒՆ

: զվոհտն մի իստմն զտրատմի լոզթմթթ ծմսն իզ ոկի
: (զվտգիտմտռ Լոզթգ) Լոտիտց զիտղտ — 403 . եփ — 9

: զտգթրամտ ծղվթիտղն — 4903—4887 . եփ — 9

: . . . իվմտտտրտ իզ Լոտ

տոզ Լոզիտղ զտգթրանմսմզ մմսռտղզրտ : զվոտիտմտ Լոտազ Լան
մս իզ զվոտիտմո լոզթմտ զԼոտմո զիտղտ — 467 . եփ — 7

: մղթթթթթ

Լոտաղտն իզթր վ—087—617 իզ վ—911—511 : իզթթ Լոտազ
տմն իզթր վ—17—07 . եփ վոհտն մի : . . . ծանկի մմտ լոզ իզթթթթ
իվ : զվնմտտոն վմսնիվն զԼոտմտ զիտղտ — 411 . եփ — 9

5.— Թղ. 153բ.— Ձևոս գնաց զիրո մնաց, բաղմամեղ Արխոն-
դոմս յիշեցէք ի բարին, Աստուած ըզձեզ յիշէ, ի թվականն իս Հայոց
Մեծի ՌձԱ. (1652): Տէր Յիսուս յիշեալ զիս:

6.— Թղ. 194ա.— Թփն. ՌձԱ. (1652) Սեպտեմբերի Ը. (8)
Լուսինն խաւարեցաւ:

7.— Թղ. 287բ.— Յիշեցէք ՚ի մաքրափայլ յաղօթս ձեր մեղաւոր
զրիշ Շօոթիցի Արխոնդոմ Սարկաւազս եւ զհայրն իմ Յովանէսն եւ
զմայրն իմ Եթարն, եւ Աստուած զձեզ յիշէ եւ ողորմի ՚ի վերջին դա-
ւըստեանն իւրում: Գրեցաւ թփին ՌձԲ. (1653):

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— Շօոթիւր Երնջակ դատարի հայարնակ գիւղերէն էր, ուր
գրի առնուած են բաղմամթիւ ձեռագիրներ:

2.— 1663-ին Շօոթի մէջ ընդօրինակուած Աւետարան—ը, Մար-
գար գրիչին կողմէ, կը տեղեկացնէ թէ գիւղը ունէր Ս. Աստուածած-
նի անուամբ ուխտատեղի կամ վանք եւ ունէր Ս. Լուսաւորիչի եւ Ս.
Յակոբայ Մծրնայ Հայրապետին անուններով եկեղեցիներ եւ Երնջա-
կի Առաջնորդն էր Եսայի Արքեպիսկոպոսը:

(ՏԵ՛ս Հրաչեայ Աճառեան, ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ
ԹԵՀՐԱՆԻ, 1936, Վիեննա, էջ 11—12):

3.— Շօոթի կամ Երնջակի մէջ՝ 1601—1620 թուականներուն
ու մէկ ձեռագիր ընդօրինակուած է:

(ՏԵ՛ս ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԺԷ. ԴԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ,
1601—1620 թթ. Հատոր Ա., Կազմեցին Վաղգէն Յակոբեան եւ Աշոտ
Յովհաննիսեան, Երեւան, 1974):

Թ Ի Ի 1 2

Մ Ա Շ Տ Ո Ց

Պատառիկ

ԹՈՒՂԹՔ. — 16 (32 էրեսք) : ՄԵՆՈՒԹԻՒՆ. — 17.6×13 հրմ. : ԳՐՈՒԹԻՒՆ. — Միասին, 15.3×10.8 հրմ. : ԳԻՐ. — ԲՈՂՈՐԳԻՐ, մեծատառ, սև թանաքով : ՏՈՂՔ. — 21—22 : ՆԻՒԹ. — ԹՈՒՂԹ, հաստկեկ եւ րամպակեայ : ԿԱԶՄ. — ԶՈՆԻ : ՀԱՆԳԱՄԱՆՔ. — Տաղարանէ մը առանձնացուած թերթեր են, բարերարութարար յիշատակարանին մէկ մասը պահուած է : Կաղմայոյժ յիճակին մէջ է ձեռագիրս : ԽՈՐԱՆՔ, ԿԻՍԱԽՈՐԱՆՔ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴՔ. — ԶՈՆԻ : ՍԿԶԵՆԱՏԱՌՔ. — Պարզ մեծատառով եւ կարմիր թանաքով : ԽՈՐԱԳԻՐՔ. — Կարմիր թանաքով եւ պարզ բոյրգիրով : ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ. — ԶՈՆԻ : ԺԱՄԱՆԱԿ. — 1640—1650 : ՏԵՂԻ. — Վարագի Ս. Խաչ Վանք : ԳՐԻԶ. — Կիրակոս Արեղայ : ՄԻՋՆՈՐԴ. — Խլղաթ : ՍՏԱՅՈՂ. — Աղուպ ջան : ԿՆԻՔ. — ԶՈՆԻ : ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — Զեռագիրս փափաքած էր ունենայ Պրն. Վահրամ Մայեան, երբ 1968-ին կը դադուէր Թաւրիզ : Գարմար դատեցինք յանձնել Մելիք-Թանդեան Թանգարանին :

Զեռագիրս է ՄԱՇՏՈՑ, կաղմայուծեայ յիճակին մէջ, հետեւեալ ընթացքով :

1. — Թղ. 1ա. — Սկիզբի թերթերը ինկած են, եւ կը սկսի «Արեւդ երկնային, առեր դու մարմին, յարմատոյ Դաթին...» :

2. — Թղ. 4բ. — Տաղ Աղնի, Ծաղկազարդին :

3. — Թղ. 5ա. — Գանձ յարութեան Զատկի Կիրակէին առայ :

4. — Թղ. 10ա. — Տաղ աղնի Ծննդեան :

5. — Թղ. 10բ. — Գանձ սրբոյն Ստեփաննոսի Նախապկային :

6. — Թղ. 14ա. — Տաղ սրբոյն Ստեփաննոսի :

7. — Թղ. 14բ. — Գանձ հասարակաց Կիրակէի առայ :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. — Թղ. 8բ. — Փառք անհասանելի, անկշռելի եւ անսահմանելի եւ անորոշելի միասնական անբաժանելի սուրբ Երրորդութեան Հաւր եւ որդւոյն եւ հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ առյապաղ ամէն :

Արդ զրեցաւ այսմ հոգելի մատեանն որ կոչի ՄԱՇԹՈՅ, որ է սա հիմն հաւատոյ եւ զլուսն աւրինացն քրիստոնէից, որ եւ է խորհուրդ եկեղեցւոյ սուլաւ կատարի, ի հըշակաւոր սուրբ ուխտս Վարազ, ընդ հովանեաւ կենսատու սուրբ ինչին Քրիստոսի. եւ այլ բազում սրբութեանցս որ աստ կան հաւաքեալ: Ի յառաջնորդութիւն սուրբ Ուխտիս Վարազայ, Մարդարայ արհի Եպիսկոպոսին, զոր Տէր Աստուած անսասանելի կենաւք պահեցէ զսա յայսմ աշխարհիս եւ յետ աստեացս ելանելոյ, սուրբ հայրապետաց դասուցն, դասակից եւ պսակակից արասցէ, ամէն:

Ձեռամբ անիմաստ եւ փծուն գրչի (ԹՎ. 9ա) սուտանուն արեւդայի Կիրակոսի, ի խնդրոյ բարեմիտ եւ հաւատարիմ առն Աղուպլանին եւ կողակցին, Սօլթանին որ ստացան զսա յիշատակ բարի հոգոյ իւրեանց եւ ծնաւդաց իւրեանց: Աղուպլանի հաւրն ըռէս ինջին եւ մարն իմանումին եւ եղարցն Շարիարին, Մսեխին, Դիլաքին, Յովանիսին, Աւետիկ եւ Սաւլթանի հաւրն Յովանէսին եւ մօրն Շահումին, սրդոյն Գուլամիրին եւ դստերցն՝ Սաթիփաշին, իմաթիփաշին եւ Շահաղային, կենդանեաց եւ հանգուցելոց եւ որք աւագորք ի սմանէ յիշեցէք զնոսա առաջի անմահ գառին Յիսուսի Քրիստոսի, եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք նոցա եւ Աստուած յիշողացդ եւ յիշեցելոցս առ հասարակ ողորմեացի, ամէն:

Դարձեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, ով պատուական հայրք իմ եւ եղբայրք: Հանդիսողքդ ի սմայ (ԹՎ. 9բ) կարդալով կամ տեսանելով, յիշեցէք յաղօթս ձեր զստացող զրոցս զԱղուպլան եւ զկենակիցն իւր, զՍաւլթան եւ զորդին զԳուլամիրն եւ զդստերքն, զՍաթիփաշէն, զիմաթիփաշէն եւ զՇահաղայէն, զփեսայն, զԽլղաթն, որ միջնորդ է զրոցս, եւ շատ աշխատեցաւ ի գալն եւ ի գնալն, եւ զծնողքն իւր, զհայրն զպարոն Գորգն, եւ զմայրն զԹաղազուլն եւ զորդիքն, զԷնիթան, զպարոն Գորգն, զիմաշատուրն, զՍարգիսն եւ զեղբարքն, զԲաշարաթն եւ զորդին զԴօլաթէն, զփոխեցեալն ի Քրիստոս, զԱւետիսն եւ զորդին, զԷնրսէսն եւ զքերսն, զղարիպ իմաթուն եւ զԳուլգուն եւ զամենայն արեան մերձաւորսն սոցա, եւ Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ Աստուած ձեզ ողորմեացի ամէն:

Դարձեալ աղաչեմ զձեզ, ով լուսերամ դասք քահանայից...:

Յաջորդ էջը կորսուած ըլլալով, Յիշատակարանիս մնացեալ մասը անձանթ է մեզի:

ՊԱՏԱՌԻԿ ՃԱՇՈՑ ԳԻՐՔ-Է

ԹՈՒՂԹՔ. — Թերթ մը, որ երկուքի ծալլուած եւ տոպրակի վերածուած էր. ՄԵՄՈՒԹԻԻՆ. — $31 \cdot 1 \times 20 \cdot 8$ հրմ. : ԳՐՈՒԹԻԻՆ. — Երկսիւն, $22 \cdot 9 \times 15$ հրմ. : ԳԻՐ. — Բոլորգիր, մեծատառ եւ սեւ թանաքով գրուած : ՏՈՂՔ. — 35 : ՆԻԻԹ. — Թուղթ, հաստկեկ : ՍԿԸԶԲ-ՆԱՏԱՌՔ եւ ԽՈՐԱԳԻՐՔ. — Կարմիր թանաքով եւ պարզ ոճով բոլորգիր : ԺԱՄԱՆԱԿ. — ԺԵ. — ԺԶ. զարու զարծ : Մնացեալ տեղեկութիւնները կը պակսին : ԾԱՆՕԹՈՒԹԻԻՆ. — Պատառիկս Ազուլիսէն Թաւրից փոխադրուած է 1920-ին եւ թաթար նպարաւաճառի մը կողմէ տոպրակի վերածուած՝ ճաշոց Գիրքի այլ թերթերուն պէս : Պատառիկս փափաքած էր ունենալ Պրն. Վահրամ Մապեանը, Էրբ. 1968-ին պաշտօնով Թաւրից կը գտնուէր : Յարմար դատեցիք յանձնել Մէլիք-Թանդեան Թանգարանին :

Բովանդակութիւն

1. — Պետրոսի Առաքել. Ի Կաթուղիկեայց Բ. Թուղթ : Գլ. Գ. 1—6 :
2. — Գործք Առաքելոց-ի Գլ. ԺԵ. 34—ԺԶ. 1—5 :
3. — Պետրոսի Բ., Գլ. Գ. 6—9 :
4. — Աւետարան ըստ Յովհաննու, Զ. 39—56 :


ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ «ԱՌ ՈՐՍ» ԳԻՐՔ

ԵՐԵՍՔ. — Դ+411=415: Էջամարները ճիշդ արձանագրուած չեն, ձեռագրիս կազմութեան ընթացքին ճիշդ դասաւորուած չըլլալով: Այսպէս, Երեսք 1—137—ին կը յաջորդեն Երեսք 198—221. ապա՝ 162—413—ը: Կրկնուած են Երեսք 312—ի եւ 328—ի թուահամարները: Մոռցուած է նշանակել Երես 323—ը: Ի փոխարէն Երեսք 398, 399 եւ 400—ի, գրուած է 393, 394 եւ 395: Երես 395 (400)ին յաջորդած է Երես 401—ը: ՄԵԾՈՒԹԻԻՆ. — $16 \cdot 2 \times 10 \cdot 8 \times 3 \cdot 5$ հրմ.: ԳՐՈՒԹԻԻՆ. — Միասին, $12—12 \cdot 2 \times 7 \cdot 5$ հրմ.: ԳԻՐ. — Նօտրդիր, սեւ թանաքով գրուած, վարժ գրիչի մը կողմէ: ՏՈՂՔ. — 20: ՆԻԻԹ. — Թուղթ, հաստկեկ եւ սպիտակ: ԿԱԶՄ. — Կաշեպատ խաւաքարտ, դրոշմեալ երկու երեսներուն՝ միեւնոյն ոճով: ՀԱՆԳԱՄԱՆՔ. — Շատ լաւ: ԽՈՐԱՆՔ. — Զունի: ՍԿԶԻՆԱՏԱՌՔ. — Թռչնաղիր. Երես 3, ոսկեղոյն եւ մանուշակապոյն, միջակ արուեստի նմոյշ: ԿԻՍԱՆՈՐԱՆ. — Երես 3, անպաճոյճ, սեւ գլծերով եւ կարմիր թանաքով ծաղկուած: ԽՈՐԱՎԻՐՔ. — Կարմիր թանաքով եւ պարզ նօտրդիր: ՄԱՆՐԱՆԿԱՐՔ. — Զունի: ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐՔ. — Երես 3, թռչնանկար, կարմիր եւ կաշաչ գոյներով: Նոյնպէս նաեւ ծաղիկն ու իր տերեւը, անյաջող գործ: ԴԱՏԱՐԿ ԵՐԵՍՔ. — Բ—Դ, 408—413: ԺԱՄԱՆԱԿ. — ԹՃ. Դ. — (1755) ԹՄԺԷ. (1768): ՏԵՂԻ. — Կեսարիոյ Եւքառայ գիւղը: ԳՐԻԶ. — Տիրացու Գրիգորիս Տէր Յակոբեան: ՍԱՅՈՂ. — Կարնեցի Տիրացու Սրապիոն: ԿՆԻՔ. — Զունի: ԾԱՆՕԹՈՒԹԻԻՆ. — Զեռաղիրս Թաւրիղի Մելիք-Թանկեան Աղլ. Թանդարանին նուիրուած է Թեհրանարնակ Սալմաստեցի Պրն. Միհրան Շահգալպեանի կողմէ, ի յիշատակ իր Հանգ. հօր՝ Յովսէփ Շահգալպեանի, 23 Մարտ 1968, ի Թաւրիղ: Հրաչեայ Աճառեան իր Թեհրանի Հայոց Զեռադրաց Յուշակին մէջ ներառած չէ գրչագիրս, իրեն անծանօթ մնացած ըլլալով:

Մատենան է ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՅԻ Հայրապետին եւ Աստուածաբանին ԱՌ ՈՐՍ կոչուած գործը, յարակից ճառերով, ուր կան.

1. — Երես 1. — Այս ինչ է 'ի գիրս այս, որ կոչի ԱՌ ՈՐՍ Գրիգորի Աստուածաբանի Կոստանդնուպօլսոյ Պատրիարքի յունաց, 'ի Կապադոկիէայ Նաղէանդենացւոյ, այսինքն Թօմարգացի:

— Յուշակն է Գրքի բովանդակութեան:



ՄԱՂԱՐԹԱՅ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԸ (ԺԱ. ԴԱՐ)

2.— Երես 3.— Գրիգորի Աստուածարանի Նազազացւոյ առ Եւ-
նոմիոսի, եւ առ Համահերեւոյացն Նորին աղանդն: Բան առաջին,
Գլուխ Ա.:

Առ որս բանիւ են պաճուճեալ բանս, եւ զի 'ի գրոց սկսայց:
Ահաւասիկ են 'ի վերայ քոյ թշնամանողդ: Քանզի են ոմանք, որոց
լսելիքն մարմաջեն, մինչեւ ցայժմ, որպէս արդէն իսկ տեսանեմ...:

3.— Երես 19.— Բան յաղագս Ուլղափառ Հաւատոյ: Յորժամ
տեսանեմ այժմ լեզուադարութիւն եւ զառօրեայ իմաստունսդ, եւ
զձեռնադրոջ աստուածարանս, որոց բաւական է կամիլն եւ վերջին
կայանս հայցեմ, ըստ Երեմիայի եւ առանձինն միայնակ լինիլ ախոր-
ժեմ...:

4.— Երես 36.— Նորին յաղագս որդւոյ միածնի բան ընտիր,
գլուխ Գ.: Զորս ինչ ասիցէ ոք արդեօք, 'ի բաց հաշմանելով զբանից
նոցայ զպատրաստութիւն եւ զխոշորութիւն, եւ զարագութեան սխա-
լանս յամենայն իրս: Մանաւանդ որ յաղագս Աստուծոյ են բանք այ-
սոքիկ: Իայց քանզի սաստեւն ո'չ ինչ է մեծ, զիւրին է ամենեցուն որք
կամիցին...:

5.— Երես 71.— Յաղագս որդւոյ դարձեալ բան 'ի նոյնոյ, առ
այնոսիկ, որք ասեն թէ, մեծ է Հայր քան զմորդի: Գլուխ Դ.: Զոր ինչ
ախտանան առ բազմաձաղկեալ բուրաստանաց, որք այնոցիկ են ցան-
կացողք տեսութեանց, որոց ո'չ առ մի իր ինչ երեւեցելոցն յաղագս
Համապատիւ ղեղեցկութեան աչքն Հաստատին, այլ ամենեսին ցան-
կութեամբ ցնդին...:

6.— Երես 102.— Նորին յաղագս որդւոյն միածնի դարձեալ
բան, ընդդէմ չարափառացն աղանդից: Գլուխ Ե.: Վասնզի Քեզ ընդ
խորհրդոցն դարձուած ըս եւ մանուածս բաւականապէս անցի զօրու-
թեամբ հոգւոյն, որք 'ի սուրբ գրոց վիճութիւնք եւ ընդդիմադրու-
թիւնք: Զորս գրոյն սեղանակապուտք եւ որք զմիտս գրեցելոցն գո-
ղանան զյոյովս առ անձինս իւրեանց առնեն եւ զճանապարհ ճշմար-
տութեամբ ամբոխեն Համառօտարար...:

7.— Երես 134.— Նորին յաղագս սրբոյ հոգւոյն բանք, ազնիւք
եւ իսկապէս դաւանութիւնք: Գլուխ Զ.: Արդ որ յաղագս որդւոյ
բանն է, այսբան եւ այսպէս ղերծաք 'ի քարկոծչացն, անցանելով ընդ
մէջ նոցա, վասն զի բանն ոչ քարկոծի, այլ քարկոծէ յորժամ կամի,
եւ պարսէ՛, զգազանս զանբանս զչարաչարս 'ի լեառն ելեալս: Զի՞նչ
արդեօք ասիցես յաղագս հոգւոյն ասեն...:

8.— Երես 180.— Նորին յազազա Ջարմանալի Աստուածաբանութեանցն շարաբանեալ բանք յոյժ *պեղեցիկք*։ Գլուխ Է.։ Եւ արդ, Վասնզի մաքրեցաք բանիս զաստուածարանութիւն, որպիսի ինչ զոյ պարտ էր անցանելով, եւ որոց ոմանց իմաստասիրելի, եւ յո՞րժամ եւ ո՞րքան, զի սրպէս որոց մաքրեալք են, զի լուսով Հասանիցի ՚ի լոյս։ Եւ յոյժ փութացելոցն, զի մի՛ յամուլ եւ յանձնունդ տեղի անկանիցի բանն։ Եւ յորժամ խաղաղութիւն ունիցիմք ՚ի ներքս յարտաքին սահեցմանց...։

9.— Երես 236.— Նորին զարձեալ Աստուածաբանութեան ոճիւն ասացեալ, առ Արիանոսն եւ Հեռեւողացն նորա բան։ Գլուխ Ը.։

Ո՞ր արդեօք իցեն որք զաղքատութիւն թշնամանեն եւ զմեծութիւն հրդշակեցուցանեն, որք յոչութեամբ ղեկեղեցին սահմանեն եւ զսակսութիւն արհամարհեն, որք զաստուածութիւն չափեն եւ զժողովուրդն կշռեն, որք զաւազն պատուեն եւ զյուսաւորս թշնամանեն։ Ձմարդարիտս քամահեն եւ զխիճս դանձեն, քանզի եւ ո՛չ գիտեն, իսկ եթէ այնքան սուղ քան զաստեղս առատապոյն է...։

10.— Երես 262.— Նորին բան առ Կլէղոնիոս, յանդիմանական առարկութիւնք եւ ապացուցական ընտիրք։ Գլուխ Թ.։ Կամիմք ուսանել զինչ է նորաճեւութիւն յեկեղեցւոյ, զի իշխանութիւն իցէ ամենայնի կամոյի եւ խոտորնակս գընացողի ըստ զբեցելումն, օյտել զՀօտ զղեղեցիկ ածեալն եւ զողանալ կողոպտել խարդախութեամբն, մանաւանդ եթէ յաւաղակաց եւ խաբէրայ վարդապետութեամբք։ Եթէ ունին ինչ բազդտանել զմեզ յայպզս Հաւատոյն, այժմու մտեալքն։

11.— Երես 281.— Նորին բան Երկրորդ առ նոյն Կլիդոնիոսն, զարձեալ ՚ի նոյն նիւթ շարաբանեալ մեկնի։ Գլուխ Ժ.։

Վասնզի բաղումք եկեալք քո երկիւղածութեամբդ Հաստատութիւն խնդրեն յազազս Հաւատոյ, եւ վասն այդորիկ պահանջեցեր զմեզ բարեկամարար Համառօտ ստՀման իմն, եւ կանոն մերոյ խորհրդոյս, դորին յազազս գրեցաք քում երկիւղածութեանդ, եւ նախ քան զղիրդ զիտէիր, զի մեք քան զնիկիական Հաւատն սրբոց Հարց, անդր ժողովեցելոց ի քսկտումն արիանոսացն...։

12.— Երես 291.— Առ նոյն Մկիլիդոնիոսն, նորին բան Երրորդ, ըստ մարգարէական բանին։ Որովայն իմ, որովայն իմ ցաւէ, ասէ Եւրեմիաս, Գլուխ ԺԱ.։

Որովայն իմ, որովայն իմ ցաւէ, եւ զգայարանք իմ ճմլին, ասէ ուրեմն յիւրում բանն Եւրեմիա, որք ըզմարգարէան ախտակցագոյն էր լալով զիսբայէլ զանհաւանելն եւ յԱստուծոյ մարդասիրութենէ օտարացեալս։ Որովայն, զիւր զՀօյին անուանէ ըստ օրինակ կերակրոյն...։

13.— Երես 311.— Նորին բան յաղաղս բարեկարգութեան ի խօսս, որ իւրոյ մեղրածորն ի վարդապետութեամբն յայտնարանի: Գլուխ ԺԲ.: Վասն զի եկիք ՚ի միասին յօժարութեամբ եւ բաղմամբ զբլ տօնս, եւ վասն ազգորիկ մանաւանդ ժամանակ դործոյ: Բեր տա-
ցուք ինչ ձեզ շահ, թէպէտ եւ ոչ հասարակաց յօժարամտութեանդ արժանաւոր, այլ սակայն քան ՚զօրութիւնս մեր ո՛չ ինչ լաւագոյն...:

14.— Երես 345.— Նորին խօսք յաղաղս խաղաղականի միարա-
նութեան միայնացելոցն յետ լուծենէ: Գլուխ ԺԳ.:

Արձակ ինձ զլեզուիս յօժարութիւնս եւ արհամարհեմ ՚զմարդ-
կային օրէնս, յաղաղս օրինաց հոգւոյն, եւ տամ խտրադուլթեամբ
՚զբանս ոչ ոմեք յառաջսդոյն ներեցի. քանզի յառաջ յորժամ խոռվ-
եալ էին առ մեզ անդամքն, վասն զի մեծ եւ պատուական մարմինն
Քրիստոսի բաժանեալ էր եւ կոտորեալ, մինչ զի փոքր ինչ նուազ եւ
ցրուեցան սակերք մեր մերձ ՚ի դժոխս, իրբեւ երկրի թանձրութիւն
արօրով պատուեալ եւ յերկիր քայքայեալ, զանհատնելի եւ զանբա-
ժանելի եւ զանկեալն բոլորովին...:

15.— Երես 368.— Նորին յաւելուած կրկին ընծիւղեալ ՚ի վերայ
նոյնոյ նիւթոյ խաղաղական երկրորդ մեկնարանի: Գլուխ ԺԴ.:

Ջերմ է նախանձ, հեղ հողի, մարդասէր է սէ՛ր, մանաւանդ
ինք մարդասիրութիւն, երկայնամիտ է յոյսն: Նախանձն բորբոքէ,
հողին հեղացուցանէ, յոյսն համբերէ, սէրն ՚ի միասին կապէ, եւ ո՛չ
թողու քայքայել որ է ՚ի մեզ բարին: Թէպէտ եւ ցրուողք եմք բլնու-
թեանս եւ յերկն մին, կա՛մ է, կամ մնայ, կա՛մ շարժեցեալ զաղաթէ,
կամ ՚ի բաց գնացեալ վերստին...:

16.— Երես 386.— Նոյնոյ բան եւ խօսք վերստին ՚ի վերայ
նոյնոյ նիւթոյ, խաղաղական երրորդ առձայնի եւ վախճանարանի:
Գլուխ ԺԵ.:

Խաղաղութիւն է՝ սիրելի եւ քաղցր, է՛ սնունդ եւ իրք, զոր այժմ
եռու ժողովրդեանս եւ փոխարկնն տօի: Ո՛չ պիտեմ թէլ յամենեցունց
՚զհարապատ ձայնն եւ զարժանաւոր հոգւոյն, այլ ոչ զբաղմութեան
դաշինս, անարկելս յԱստուծոյ վկայի, մինչ զի մեծագոյն ինեւ մեզ
դատապարտութիւն: Խաղաղութիւն սիրելի մի՛ եւ հրահանգք եւ
զարդք, զոր յԱստուծոյ լեալ լսեմք...:

Վերջ. Երես 405—406.— . . . Բայց դուք եթէ ընդունելիչք զիմ
բանս զայս, լաւաւոյն է Երկոցունց: Մի՛ յախտելով ակտիւք ակտին,
վասն խորհրդոյն բաւականապէս նուիրեցաւ, առ Աստուած եւ առ
մարդիկ խաղաղ, քան զայս առաւել ո՛չ ինչ կարծեալ եւ խնդրել ումեք,
եւ որք յոյժ խաղաղականք են եւ աստուածասէրք, եւ որ ինչ ի կար-

զին է տեսանիցէք դուք, եւ շատ է ինձ . . . Փառք յաւիտեանս յաւիտենից, Ամէն :

17.— Երես 407.— Նորն գրիչին կողմէ էջ մը աւելցուած է, հատուածով մը՝ հետեւեալ խորագրով .

«Սրբոյ Պատարագի տեսութիւն, ըստ կերպի, բարութիւն լինի : Նախկինն է հարկաւոր ամենայն քրիստոնէից մինչեւ 'ի վերջն մնայ պատարագին, եւ լսէ զսուրբ աւետարանն . . . :

Վերջ. Ութերորդ. թէ այն օրն մեզս ո՛չ առնիցէ, այլ թէ բարեգէպս կեցցէ, ուր ուրէք որ երթայցէ ամենայն քայլքն չափեալ լինի պահապան հրեշտակէն եւ զվարձրս մեծապէս առնու յԱստուծոյ, եւ այս է զօրութիւն պատարագին :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

1.— Երես 406.— Արդ յօժանդակութեամբն Աստուծոյ եւ բարեխօսութեամբ սրբոյ Կաթապետին, ասեմ Մկրտչի, զբեցաւ ԱՌ ՈՐՍ մատեանս տենչալի, 'ի քաղաքն Կեսաւեայ, եւ 'ի զիւղն յԵւքառայ, ձեռամբ մեղսամած տիրացու Գրիգորիս Տէր Յակոբեան, առ ի վայելումն տիրացու Սրապիոսին Կարնեցոյ, 'ի ՌՄ Ժէ. (1768) թուականութեանս մերում, ողջ լերուք 'ի Տէր. Ամէն :

2.— Երես 2.— Նոյն Գրիչին կողմէ .

Օգնեա՛ ինձ Տէր Յիսուս Քրիստոս, եւ հաս 'ի թիկունս Արեղայի անարժան ծառայ քո՛յ, ակնարկեա՛ 'ի տկարութեան իմում, զսկզբեայս բարեպէս աւարտ, հասո՛ 1755, ՌՄԴ. (1755) 20 . . . :

Տող մը ջնջուած ըլլալով, մնացեալը՝ անընթեռնելի է :

3.— Երես Ա.— Նուիրատուն կողմէ, չեղադիր եւ կապոյտ թանաքով գրուած է հետեւեալը .

Սոյն ձեռագիրը նւիրում եմ Մելիք-Թանգեան ազգային թանգարանին, 'ի յիշատակ հանդուցեալ հօրս Յովսէփ Շահզաղդեանի : Միհրան Շահզաղդեան, Թաւրիզ, 23 Մարտ 1968 :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1.— Ձեռագիրս բաղդատեցինք Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Ձեռագրատան թիւ 64 եւ 320 գրչագիրներու նկարագրութեանց հետ, եւ գտանք բաւականին տարբերակներ մեր եւ յիշեալ ձեռագիրներու բովանդակութեանց միջեւ (տե՛ս ՏԱՇԵԱՆ ՑՈՒՑԱԿ, Երեսք 289—290 եւ 763—764) :

Մինչ Թաւրիզի թիւ 14 ձեռագիրը գրուած է 1755—1768-ի ընթացքին, Վիեննայի թիւ 64-ը գրուած է 1785-ին եւ թիւ 320-ը՝ ԺԳ.— զարերուն, նախ քան 1388 թուականը :

Հետեւաբար, ձեռագիրս Թաւրիզի ներկայ հաւաքածոյին մէջ կը ներկայանայ իր տեսակին մէջ իբրեւ հաղուագիւտ ընդօրինակութիւն մը:

2.— Ափիւսթահայ անուանի լանասէր Արշակ Ալպոյաճեան, իր «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ԿԵՍԱՐԻՈՅ» անուն երկհատոր ուսումնասիրութեան մէջ, Էֆէրէի կամ Էւքատայի մասին դրած հատուածին մէջ յիշատակութիւններ ունի Թաւրիզի թիւ 14 ձեռագրի գրիչին աշխոյժ գործունէութեան մասին, սակայն իրեն անձանօթ մնացած է ձեռագիրս, նախապէս ցուցակադրուած չըլլալով: Ա. Ալպոյաճեան կը կարծէ թէ գրիչ Գրիգորիս Տէր Յակոբեան գրչագրութեան աշխատանք տարած է 1767—1783 թուականներուն միայն (տե՛ս յիշեալ աշխատութեան Բ. հատորը, էջ 2349): Թաւրիզի թիւ 14 ձեռագիրը գրի առնուած ըլլալով 1755 թուականին, Գրիչ Գրիգորիսին աշխատանքը ութը տարիով կը կանխուի:

Գրիչ Գրիգորիսին հայրը՝ Յակոբ Քահանան, 1752-ին իր գրիչ կը յիշուի արդէն, որ «կը խնդրէ յիշել «գլխաթապետն» իւր «Տէր Աստուածատուր շնորհաներկ քահանայն», որ ուրիշ մէկը չէր եթէ ոչ նոտար Յարութիւն գիտնական քահանային զաւակը եւ Յովհաննէս քահանային հայրը՝ Նոյնանուն Յովհաննէս քահանան» (տե՛ս Ա. Հատոր, էջ 1075):

«Յակոբ Քահանայ. Էֆէրէի կը գրէ նաեւ ուրիշ ձեռագիրներ, 1754-ին եւ 1756-ին, եւ կը կադմէ գիրք մը՝ 1769-ին: Եթէ Յովհաննէս քահանայով կ'ընդհատուի Տէր Պարսամի սերունդին մէջ որդւոց յորդի ուսուցումը, Յակոբ քահանայ Էֆէրէի կը շարունակէ զայն, որովհետեւ իր զաւակը՝ Տիրացու Գրիգոր (բայտ Ալպոյաճեանի) 1767-էն մինչեւ 1783 կը գրէ բազմաթիւ ձեռագիրներ» (տե՛ս Ա. Հատոր, էջ 1075):

Այսպէս Էֆէրէի մէջ, Ա. Կարապետի հովանիին տակ մենք կը տեսնենք քահանաներու վեց սերունդներ, որոնք որդւոց յորդի իրարու ծնող եւ վարժապետ կը հանդիսանան եւ գրեթէ զրոյթեան զըպրոցի մը տեսականութիւնը կ'ապահովեն մօտաւորապէս դար մը:

Գրչութեան այս ողելորեալ շարժումը անշուշտ իր զարգացում մը կը պարտէր ժամանակին եւ միջավայրին ու նոր դադափարներու տարածման, որոնք միտքերը կը դարձնէին գիտութեան հանդէպ հետաքրքիր եւ ծարուի (տե՛ս էջ 901—903 եւ 1075):

Տիրացու Գրիգորի գործերէն մեզի այժմ ծանօթ են հետեւեալները.

ա.— Սէր Աստուծոյ առ Մարդն, 1767: Մաս կը կադմէ երեսօղէմի Հայոց Վանքին Զեռարաց Հաւաքածոյին թիւ 474 համարին

ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ-ԴԱՂՄԱՏԵՐԷՆ

ԹՈՒՂԹՔ. — 49 (98 էրևսք) : ՄԵԾՈՒԹԻԻՆ. — 19.6×15.2×1.8
 ՀՐՄ. : ԳՐՈՒԹԻԻՆ. — ԵՐԿՈՒՆ, 13.8—14.1×10.6—10.8 ՀՐՄ. : ԳԻՐ. —
 ՆՕՐԳԻՐ, ԿԻՆԱՄՈՆԱԿՈՅԻ ԹԱՆԱՔՈՎ ՂՐՈՒԱԾ, յԱՐՈՂԱԿ ՂՐԻՅԻ ԳՐԹ :
 ՏՈՂՔ. — 29 ԵՆ 30 : ՆԻԻԹ. — ԹՈՒՂԹ, ցաժորակ ԵՆ ՂԵՂՆԱՌՆ :
 ԿԱԶԻՐ. — Կաշեպատ Խառաքարտեայ, ԴՐՈՂՄԱՆ : ՀԱՆԳԱՄԱՆՔ. —
 Կապարիչին Կոնակը Կաղմալոյժ ԵՆ անխնամ պահուած է : ԹԵՐԹԵՐԸ
 անաղարտ ԵՆ մնացած : ԹՈՒԱՄԱՐՆԵՐԸ մԵՐ ԿՈՂՄԷ ՆՀԱՆԱԿՈՒԱԾ ԵՆ :
 ԽՈՐԱՆՔ, ԿԻՍԱԽՈՐԱՆՔ. — ԶԿԱՆ : ՍԿԶԲՆԱՏԱՌՔ. — ԹՂ. 3ա՝
 ԹՈՂՆԱԿԻՐ, մնացեալները ՄԵՐՈՒԿԵԱՆ ԵՐԿԱԹԱԳԻՐ, սԵՆ ԹԱՆԱՔՈՎ :
 ԽՈՐԱԳԻՐՔ. — Պարզ ՆՕՐԳԻՐ, սԵՆ ԹԱՆԱՔՈՎ : ՄԱՆՐԱՆԿԱՐՔ ԵՆ
 ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ. — ԶԿԱՆ : ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ. — ԹՂ. 1ա—1բ,
 2բ, 46բ—49բ : ԺԱՄԱՆԱԿ. — ԹՅՆԵ. 1755 ՕՂՍ. 10 : ՏԵՂԻ. — ԱՄԱՂԵ-
 յՕՒԱՄ (ԱՄԱԹԵՐՈՒԱՄ, ՀՈՐԱՆՈՒԱՄ) : ԳՐԻԶ. — ԶՄԻՆԱՆԱԳԻ մահտեսի
 ՍԻՄՈՆ ՀԱՃԻ ԳԱՍՊԱՐԵՆԵ : ՍՏԱՑՈՂ. — ԱՄԱՍԻԱՆԵՐ ԵՐԿԱՆՆԷՆ ՎԱՐ-
 ԴԱԿԵՍՈՒ : ԿՆԻՔ. — ԶՈՒՆԻ : ԾԱՆՈԹՈՒԹԻԻՆ. — ԶԽՈՒԿԻՐԱ ԹԱՆԻՐԻՂԻ
 ՄԵՐԻՔ-ԹԱՆԿԵԱՆ ԹԱՆԿԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐԵԵ ԹԵՀՐԱՆԱՐՆԱԿ ՍԱՄԱՍՏԵԵԻ
 ՊԵՆ. ՄԻՀՐԱՆ ՇԱՀԳԱՂԵԱՆԵՐ, Ի յԻՂԱՏԱԿ ԻՐ ՀԱՆՎ. ՀՕՐ՝ ԵՐԿԱՅԻ
 ՇԱՀԳԱՂԵԱՆԻ, 23 ՄԱՐՏ 1968, ԹԱՆԻՐԻՔ :

ԶԵՌԱԿԻՐԱ Է ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ-ԴԱՂՄԱՏԵՐԷՆ (ԻՄԱ՝
 ՖԻՄԱՆԵՐԷՆ), առանց խորապրի ԵՆ անուանաթերթի : ՄԵԿՆԵՅԻ ԲԱ-
 ՌԵՐԸ յԱՌՈՒԿ ՍԻՆԱԿԻ մԸ մԷՂ ՂՐՈՒԱԾ ԵՆ, ԴԻՄԱՐԸ ԴԱՂՄԱՏԵՐԷՆ ՆՀԱ-
 ՆԱԿՈՒԹԻՆԵՐ :

- | | |
|------------------------------------|------------|
| 1. — ԹՂ. 3ա. — Արրաս : Վանաց Հայր, | էկն արդ |
| — Արեղայ : Միամնձուն, | |
| — Արազ : Ժրատ, Ռիչտ, | էկն մեօնըք |
| — Դիւն : | Խիռըխ |
| 2. — ԹՂ. 8բ. — Բարէ, Վազ | Ծույ |
| — Բաղէ : Գետարծիւ, Որոր | էկն հապիր |

3.— Թղ. 9բ.— Գազան, վայրի դազան,	երէ	էէն վէլու տիո
— Գալ		Գոմըն
4.— Թղ. 36ա.— Շարաթ		էէն վէէք
— Շարաթ		Սադրրտախ
— Շահաւէտ: Առողջարար,	օգտակար	Հէյլսամ:
5.— Թղ. 45բ.— Ֆստան. դուկնոց, որ է	առջեւի չորն	էէն րոխօօրդ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1.— Թղ. 46ա.— Փառք եւ երկրպագութիւն, գոհութիւն, եւ դուքստ, ա'ռ անրովանդակելի, եւ ամենաբարի Արարչին մերոյ: Զոր նախախնամութեան եւ ձեռնտուութեամբ Հոգւոյն Սրբոյ, անեզրականի: Ետ ինձ օժանդակութիւն գրել զայս, դուզնաքեայ բարառանս, որ է Հայոց եւ Պելճիկացւոց բարբառով: Ի թուոյ Փրկչին ՌՁԾԵ. (1755) եւ Օգոստոսի Ժ. (10): Ի փառահեղ եւ մեծահռչակ քաղաքն յԱմսդելտամ զնս անարժանս, եւ թափուր ամենայն բարեաց, Կապաթովկացի Հաճի Գասպարենց Մահտեսի Կարապետի որդի, Զմիռնացի մահտեսի Սիմօնս, որ եմ ծառայ ամենեցուն: Ընդ հովանեաւ Սուրբ Հոգի եկեղեցւոյն Հայոց: Առընթեր յԱմասիացի Յովհաննէս Խոզնիմաստ եւ Աստուածաբան Վարդապետի՝ Վարժապետին իմոյ, որ բազում ջանիւ եւ աշխատութեամբ թարգմանեաց զայս, 'ի Դաղմատացւոց լեզուէն 'ի Հայկազեան բառս, եւ ետ ինձ անարժանիս գրել: Եւ որք միանգամ օգտիք 'յայսմանէ, ընթեռնելով եւ ուսանելով: Ուստի աղաչեմ եւ հայցեմ զյարդելի Հարցդ եւ Եղբարցդ իմոց սիրելեաց, եւ զհամայն վայելօղսդ, յիւնի զհանդուցեալ հայրն իմ եւ զկենդանի Եղիսաբեթ մայրն իմ եւ զհանճարազգօն հոգեւոր ուսուցիչն իմ: Նաեւ արժանի արասջիք 'ի մաքուր Աղօթիւք եւ յիշման ձերոց, զԹրճեալս թոնիր ապականութեան եւ դրող դրքոյս, որ դուք եւս լիջիք յիւնեցեալք 'ի յերկնից յարքայութիւնս, Ամէն:

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

ԹՈՒՂԹՔ.— Շուրջ 150 (300 հրեաք)։ ՄԵՄՈՒԹԻԻՆ.— 13·1×10·2×3·8 հրմ.։ ԳՐՈՒԹԻԻՆ.— Միասին, 10·2—10·5×8 հրմ.։ ԳԻՐ.— Մանր բոլորգիր, սեւ թանաքով գրուած, վարժ գրիւի մը կողմէ։ ՏՈՂՔ.— 26 եւ 23։ ՆԻԻԹ.— Թուղթ, դեղնագոյն եւ ցածորակ։ ԿԱԶՄ.— Կաշեպատ տախտակ, գրոմեալ, արծաթեայ զարդերը դողցուած են։ ՀԱՆԳԱՄԱՆՔ.— Քայքայուած եւ անօգտադործելի եւ քանի մը թերթ միայն ընթեռնելի է, երկար տարիներ հողին տակ պահուած ըլլալուն պատճառով։ Թերթերը իրարու փակած եւ քարացած են։ ՍԿԶՅՆԱՏԱՆՔ.— Թռչնագիր, սեւ թանաքով եւ անպաճոյճ ոճով։ Կան նաեւ կարմիր թանաքով գրուած Սկզբնատուեր, շարականներու տուններու սկիզբին։ ԺԱՄԱՆԱԿ.— 1710—1720։ ՏԵՂԻ.— Նախափկայի Ս. Ստեփաննոս Վանք^օ։ Այլ տեղեկութիւններ կը պակսին։ ԾԱՆՈԹՈՒԹԻԻՆ.— Ձեռագիրս յայտնաբերուած եւ Մելիք-Թանգեան Թանգարանին յանձնուած է Նոր Զուգայեցի Պրն. Լեւոն Մինասեանի կողմէ, 1967 Ոյոստոսին, որ ուսումնասիրական աշխատանքներու համար Մաղարդայ Ս. Ստեփաննոսի Վանքը այցելած ըլլալով, պեղումներու ընթացքին ձեռագիրս գտած է։ Ձեռագիրս մաս կազմած է յիշեալ վանքի Մատենադարանի հարուստ Հաւաքածոյին, եւ հաւանարար 1914-ին, Թուրք քանակի յարձակման օրերուն, միաբաններու կողմէ թաղուած է հողին տակ։

Ձեռագրիս էջերը նախապէս թուարկուած ըլլալով, ընթեռնելի է էջ 146-ի թուահամարը։ Վերջին թերթերը փրցուած ըլլալով, գրութախտաբար յիշատակարանն ալ կորսուած է։ Ձեռագիրս կարիք ունի լուրջ խնամքի եւ նոր կաղմի։ Թերթերէն քանի մը հատին բովանդակութիւնը միայն դժուար ընթեռնելի է։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

- ԱԲԷԼ ԱՐՔԵՊՍ՝ ՄեիթԱՐԵԱՆ, Առաջնորդ Հայոց Ատրպատականի՝
1860—1861, Գրազէտ եւ քեմքասաց, 7
ԱԲԻՍՈՂՈՄ ՍՐԿ՝ ՇՕՌՕԹԵՑԻ, գրիչ թիւ 11-ի, որդի Ովանէսի եւ
ԵՔարի, 1653, 88, 90, 91
ԱԲՐԱՀԱՄ ՄՍՐՅԻ ԵՊՍ՝ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ, 1444, 37—39
ԱԲՐԻՀԱՄ—ԱԲՐԱՀԱՄ, 1810—1820, ամուսին Փարթի. 87
ԱԿՐԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ստ. թիւ 3-ի, 51, 52
ԱԶԱՐ ԵՊՍ՝ ԱՊՐԱԿՈՒՆԵՑԻ—ԱԼԸՆՋԵՑԻ, 1506, 39
ԱԶԱՏՇԱՀ, 1311, 34
ԱԶԻԶ, կենակից Շախբերի, 1324, 42
ԱԶԻԶՄԷԼԻԲ, կին Պէհնամշահին եւ մայր Ստեփանոս վրդ.ի, 47
ԱԶԻԶՏԻԿԻՆ, մայր Մատռաֆի, 1324, 43
ԱԼԵԲՍԱՆ ԱԻԵՏԵԱՆ, 18
ԱԼԻ ԱՍՂԱՐ, Թաւրիզեցի արաբագէտ, 26
ԱԼԻ ԹՈՒՐԳՄԱՆ, քարեկամ պարոն Սարգիսի, 1324, 43
ԱԼԻՄ, դուստր Հեթում Գ. Լամբրոնացիին, 63
ԱԼԻՇԱՆ ՀԱՅՐ ՂԵՒՈՆԻ, 63
ԱԽԻՃԱՆ, Եզրայր Տէր Ստեփանոսին, 1585, 45
ԱՂԱԲԷԳ, ԱՂԱՊԷԿ, Ստ. թիւ 9-ի, 1628, 78, 83
ԱՂԲՈՒՂ ՊԱՐՈՆ, Ստ. թիւ 1-ի, 15, 32, 34
ԱՂՄՈՒՐ, ազգկն. Մատռաֆի, 1324, 43
ԱՂՈՒՊՋԱՆ, Ստ. թիւ 12-ի, ամուսին Սօլթանի, 1640—1650, 92, 93
ԱՄԻՐԱԶԻԶ, տե՛ս Ամիրխան, 56
ԱՄԻՐԼՈՒՍ, 1311, 40
ԱՄԻՐԽԱՆ, ազգկն. Տէր Ստեփանոսին, 1585, 45
ԱՄԻՐԽԱՆ ԴՊԻՐ, նաեւ ԱՄԻՐԱԶԻԶ, գրիչ թիւ 4-ի, 54—56
ԱՄԻՐՇԻ, ԱՄԻՐՇԱՀ, որդի Հռոմշահին եւ Մամայիսաթունին, 1324,
41, 42
ԱՄԻՐՍԱՐԳԻՍ, 1324, 41
ԱՄԻՐՏՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ, 23
ԱՄՂԱՅԹՈՒՆ, ՇԱՄՇԱՅԽԱԹՈՒՆ, ազգկն. Պարոն Խարկրծիլի, 1324,

ԱՄՐՈՎՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ, 33
 ԱՅԻՆՇԱ, դուստր Ըռանոսի, 1324, 43
 ԱՅԽԱԹՈՒՆ, Զաւակ Շախերի եւ Ազիզի, 42
 ԱՅՄԵԼԻՔ, 1311, 40
 ԱՆԱ, դուստր Աղաբէկին, Բ. Ստ. քիւ 9-ի, 1629, 83
 ԱՆԱՅ, դուստր Ուզումչեցի Բազդասաբի, 1752, 72
 ԱՆԱԽԱԹՈՒՆ, մայր Աղաբէկին, Բ. Ստ. քիւ 9-ի, 1629, 83
 ԱՆԴՐԷԱՍ ՔՀՆՅ. , եղբայր՝ Վարդան Ծ. Վրդ. ի, 1697, 61
 ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ձեռագրագէտ, 84, 91
 ԱՊՈՒՏԱԽՐ, Որդի Մխիթարի, 1585, 46
 ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ, 16
 ԱՌԱՔԵԼ. 1311, 34
 ԱՌԱՔԵԼ. աները՝ քիւ 5-ի Թաւաւարէի, 1697, 60
 ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ, Առաջնորդ Հայոց Ատրպատականի, 7, 28
 ԱՍԻԼ. ազգկն. Աւագտիկինի, 1324, 43
 ԱՍԻԼ, ազգկն. Մխիթարի, 1585, 46
 ԱՍԼԱՆ, որ կը կոչուի նաեւ ՍԱՐԳԻՍ, 1324, 43
 ԱՍՈՒՏ, որդի՝ Պարոն Սարգիսի, 1585, 46
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎՐԴ. ԻՄԱՐԷԹՑԻ, որդի Յակոբ Իմարէթցի շուշ-
 տակ Վրդ. ին, 23
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՔՀՆՅ. , գրչապետ Էփէրէի, որդի ճատար Յարութիւն Քիւն Քիւնյ. ի, 1752, 101
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎՐԴ. եւ Տէր, գրիչ, ուսուցիչ քիւ 9-ի Ղազար
 Դպիրի, 81, 82, 84, 85
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՐԷՑ, Միաբան Տաթևի վանքին, 1663, 73
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ, 56
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, եղբայր Տէր Ստեփանոսի, 1585, 45
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, հայր Դամուրի, 1724, 42
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, 1311, 39
 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պարոն, 1311, 41
 ԱՎԱՔ, տե՛ս ԱԻԱԳ
 ԱՏՈՄ, որդի Տէր Ստեփանոսի, 1585, 45
 ԱՏՈՄ, եղբայր Տէր Ստեփանոսի, 1585, 45
 ԱՐԱ Ս. ՄԵԼՔՈՆԵԱՆ, բանասէր, 29
 ԱՐԱՅՄԵԼԻՔ, ազգկն. Աւագխաբունի, 1324, 43
 ԱՐԱՍՄԵԼԻՔ, ազգկն. Աւագտիկինի, 1324, 43
 ԱՐԱՄԻ ԱԶԳ, 52
 ԱՐԻԱՆՈՍ, աղանդաւոր, 98

ԱՐԻՍՏԱԳԷՍ ՎՐԴ., ուսուցիչ թիւ 9-ի Ղազար Վրդ.ի եւ աշակերտ
Մովսէս Կաթողիկոսի, 1628, 81—85

ԱՐԻՍՏԱԳԷՍ ՎՐԴ., որ գրեց գրչութեան արուեստի մասին, 62

ԱՐՇԱԿ ԽԱՆ ԳՈՐՈՅԵԱՆ, Թաւրիզեցի հնագէտ, 25, 26, 88

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՑԱՃԵԱՆ, բանասէր-հայագէտ, 101, 102

ԱՐԻԻ [Ն]ՄԷԼԻՔ, ԱՐՈՒՆՄԷԼԻՔ, ազգկն. Էրանշէնի, 47

ԱՐՋՈՒԿ, ամուսին Փոքրտիկինի, 1324, 44

ԱՐՎԱՆՈՍ ՊԱՐՈՆ, ազգկն. Աւտարտիկինի, 1324, 43

ԱԻԱԳ, ԱՎԱԳ, ԱՎԱՔ

1.— 1311, 38, 40

2.— 1311, 38

3.— Ազգական Միսիթարի, 1585, 46

4.— Ազգական Մկրտիչի, 1391, 45

ԱԻԱԳԽԱԹՈՒՆ, կին Այսինշէնի, 1324, 43

ԱԻԱԳՏԻԿԻՆ, 1311, 38

ԱԻԱԳՏԻԿԻՆ, մայր Փառնաւան Էվատշային, 1324, 43

ԱԻԵՏ, եղբ. Աղուաչանին, Ստ. թիւ 12-ի, 1640—1650, 93

ԱԻԵՏԵԱՑ, եղբայր՝ թիւ 5-ի Վարդան Քեմլի, 1697, 61

ԱԻԵՏԻՍ, որդի Բաշարաթի, եղբայրը՝ Խլաթի, միջնորդին թիւ 12-ի,
1640—1650, 93

ԱԻԵՏԻՍ ԸՆԴՈՐՈՒՆԱԿՈՂ, 56

ԱԻԵՏԻՔ ԱՐՋՐՈՒՄՑԻ, 1639, 69

ԱԻԵՏՎՈՐ, 1311, 41

ԱԻԼԱՆՄԷԼԻՔ, դուստր Արունմէլէֆին, 47

ԱԻՏԱՐՏԻԿԻՆ, ազգկն. Արվանոսի, 1324, 43

ԱԻՏՐՇԱ, ազգկն. Արջուկի, 1324, 44

ԱՅԹԱ, կին Սարգիսի, 1585, 46

ԲԱԲԳԷՆ Ա. ԿԹՂԿՍ. ԿԻԼԻԿԻՈՑ, 1868—1936, 5

ԲԱԽԱԴՈՒԼ, 1311, 40

ԲԱՂԴԱՍԱՐ ՈՒՂՈՒՄՉԵՑԻ, ամուսին Հոռմսիմին, Ստ. թիւ 7-ին,
1752, 70, 72

ԲԱՅՐԱՄ ԽԱԻՃԱ, Առաջին Ստ. թիւ 3-ի, 51, 53

ԲԱՇԱՐԱԹ, եղբայր Խլաթի, միջնորդ թիւ 12-ի, 1640—1650, 93

ԲԱՐՍԵՂ ԵՊԻՍԿ. ԿԵՍԱՐԱՑԻ, Առաջնորդ Ատրպատականի Հայոց,
1821—1828, 7

ԲԵՀԵՂՋԵՐՈՒՂ, 49

Գ. Վ. ԱՐԳԱՐԵԱՆ, հայագէտ, 15

ԳԱԳԻԿ, որդի Միսիթարի, 1585, 46

ԳԱԼԻ, 1311, 39
 ԳԱԼՈՒՍՏ, որդի Ուլուֆիցի Բադդասարի, 1752, 72
 ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ ՄԿՐՏՁԵԱՆ, բանասէր, 1895, 27
 Գ. ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ, 26
 Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆՔ, 52
KARAMIANZ, 62
 ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԹՂԿՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, 1867—
 1952, 5, 64
 ԳԱՐԵԳԻՆ ԱՍՏԱՖԵԱՆ. որդի Տրապիզոնցի կառապան Յարութիւնի,
 16
 ԳԱԻԼԱՐ, 1311, 34
 ԳԱԻՐԳԻՆ. ազգկն. Մկրտիչի, 1391, 45
 ԳԵՐԳԻ, 1311, 39
 ԳԵՈՐԳ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ, † 1301, 62
 ԳԵՈՐԳ ՍԿԵԻՈՒՑԻ, † 1301, 62, 63
 Ս. ԳԵՈՐԳ, 87
 ԳԵՈՐԳ ԳՐԶԱՊԵՏ, 1608, 85
 ԳԵՈՐԳ ԱՐԲԵՊՍ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ, Առաջնորդ Հայոց Ատրպատականի,
 1861—1868 Մայիս, 7
 ԳԵՈՐԳ Գ. ԿԹՂԿՍ. ՔԵՐԷՍՏԷՅԵԱՆ, 1866—1882, 8
 ԳԵՈՐԳԵԱՆ ՅՈՒՑԱԿ ԷՋՄԻԱԾՆԻ, 8, 28
 ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ. Առաջնորդ Հայոց Ատրպատականի, 7, 9, 28
 ԳԵՈՐԳ Ե. ՍՈՒՐԷՆԵԱՆՅ ԿԹՂԿՍ. 1911—1930, 8
 ԳԵՈՐԳ Զ. ՉԵՐԷՔՅԵԱՆ ԿԹՂԿՍ. 1945—1954, 8
 ԳԻՐԱՅԽԱԹՈՒՆ, ազգկն. Աւագտիկիւնի, 1324, 43
 ԳԻԻՏ Ա. ՔՀՆՅ. ԱՂԱՆԵԱՆՅ, 102,
 ԳՈՀԱՐ, 1311, 40
 ԳՈՀԱՐՆԱԶ, մայր Նազիաբունիւն, 1324, 41, 42
 ԳՈՎՐԻԿԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, 63
 ԳՈՐԳ, պրդի հղաքի, միջնորդ Քիւ 12-ի, 1640—1650, 93
 ԳՈՐԳ ՊԱՐՈՆ, Հայր հղաքի, միջնորդ Քիւ 12-ի, 1640—1650, 93
 ԳՈՐԳ, 1311, 38
 ԳՈՒԶԱԼԱՂԱ, դուստր Խասալու Սարդարիւն, 1671, 72
 ԳՈՒԶԱԼԱՂԱ, մայր Խասալու Սարդարիւն, 1671, 72
 ԳՈՒԼԱՄԻՐ, որդի Ազուպչանիւն, 1640—1650, 93
 ԳՈՒԼԳԻ, քոյր Բաշարաքի, որ է Խղբայր հղաքի, 1640—1650, 93
 ԳՈՒԼԸՍԱՆ, 1311, 39
 ԳՈՒԼ, դուստր Թուհանի (Քիւ 9-ի), 1628, 83
 ԳՐԻԳՈՐ ՆԻԻՍԱՑԻ, 64

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՅԻ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ, 95, 97
 Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ, 90, 91
 ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, 21, 22
 ԳՐԻԳՈՐ ՄՈԿԱՑԻ, գրիչ, 1603, 84
 ԳՐԻԳՈՐ, եղբայր Յովիաննէս Վրդ.ի, 1697, 59
 ԳՐԻԳՈՐ ՊԱՐՈՆՏԷՐ ՊԱՏՐԻԱՐԺ, 56
 ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, Հեղ. Կանոն Ձեռնադրութեան գիրքին, 52
 ԳԻՐԻԳՈՐ, Տէր, իր ճկարը կայ թիւ 3-ի մէջ, 52
 ԳԻՐԻԳՈՐ, եղբ. Տէր Ստեփանոսին, 1585, 45
 ԳՐԻԳՈՐ, Հայր Մկրտիչին, 1391, 45
 ԳՐԻԳՈՐ, որդի Սիրունի եւ Հայոցի, 1324, 43
 ԳՐԻԳՈՐ, հայր Նազիաթունին, 1324, 41
 ԳՐԻԳՈՐ, 1311, 39
 ԳՐԻԳՈՐԻԿ, 1311, 38
 ԳՐԻԳՈՐԻՍ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ, որդի Յակոբ Քինյ.ի, Տիրացու, Արե-
 ղայ, գրիչ թիւ 14-ի, 1755, 95, 100—102
 ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊՍԿ. ՅՈՎԲԵԱՆ, Առաջնորդ Ատրպատականի Հա-
 յոց, 1869 Յուլիս—1874 Մարտ, 8, 9

 ԴԱԼԱՐ, կին Գրիգորի. 1391, 45
 ԴԱՆԵԼ, ԴԱՆԻԷԼ, հայր Իգիշուկի, 43
 ԴԱՆԻԷԼ, 1311, 40
 ԴԱՍՈՒՐ, գաւակ Աստուածատուրի եւ Եմնայիսաբունի, 1324, 42
 ԴԱՎԼԱԹ, որդի Մարիամի, 1585, 47
 ԴԱԻԻԹ ԽՈՅԵՑԻ, հալիֆայ, Ժամասաց, 68
 ԴԱԻԻԹ, հայր Մէլիֆի, 1324, 41
 ԴԱԻԻԹ-ԴԱՆԻԷԼԵԱՆ ԿԹՂԿՍ ԱԿԱՆ ՎԷՃԸ ԷԶՄԵԱԾՆԻ, 7
 ԴԷՐԻ, ազգկն. Ապուտախրի եւ Միխիթարի, 1585, 46
 ԴԻԼԱՔ, եղբայր Ազուպանին. Ստ. թիւ 12-ի. 1640—1650, 93
 ԴԻԼՇԱՏ ԽԱԹՈՒՆ, 1311, 39
 ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԿԱՑԻ. 102
 ԴՈՎԼԱԹ, ամուսին Խոռոմշայի եւ հայր Ղիմաթի, 1324, 42
 ԴՈՒՐԴԱՆ, 1311, 39
 ԴՈԼԻԱԹՇԱ, որդի Բաշարաթի, որ եղբայրն է Խլդաթի (միջնորդ թիւ
 12-ի), 1640—1650, 93
 ԴՈՎԼԱՇԱ, 1311, 39

 ԵԹԱՐ, մայր Արիստոզմ Սրկ.ի, գրիչ՝ թիւ 11-ի, 1653, 90, 91
 ԵԼԷՆ, ԵԼԷՆ տիկին, 1311, 40

Եհաննէս, հայր Ֆախրալդինի, 1585, 46
 Եւթիմիոս Թադեոսեան, 1791, 31
 Եղիսիմիոս, կին Կարապետի եւ մայր մահտեսի Սիմոն Հանի Գաս-
 պարեանց Ջմիռնիացիի, որ է գրիչ թիւ 15-ի, 1755, 104
 Եղիսի, բոյր Յովհաննէս վրդ.ի, 1697, 59
 Եմին Եմին, մայր Գամուրի, 1324, 42
